Կազմված է «15» օգոստոս 2020 թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

«ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
«15» ՕԳՈՍՏՈՍ 2020Թ.
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«11» 12 2020թ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

գրանցման համար՝ 211.172.1154971

ՀՎՀՀ 04436343

Պետական ռեգիստրի գործակալություն

ԾՐԱԳԻՐ

«ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ»

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

2020թ.

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արդի ժամանակաշրջանում Հայ ազգը կանգնած է անկախ պետականության վերակերտման, ազգային պետության և առողջ հասարակության ձևավորման կենսական մարտահրավերների առջև: Անցյալում ունեցել ենք թե՛ փառահեղ հաղթանակներ և թե՛ ծանր պարտություններ, թե՛ քաղաքակրթական սխրանք և՛ թե օտարի լծի տակ ապրելու անպատվություն: Մենք, որպես պետություն և հանրություն, որոնման մեջ ենք՝ կառավարման և կեցության այն սկզբունքների և ձևերի, որոնք կապահովեն Հայաստանի և Հայ ազգի լիարժեք կենսագործունեությունը և կայուն զարգացումը: Այդ որոնումն ընթանում է ներքին ցնցումների և նորացման ճիգերի միջով, ինչին մենք պարբերաբար ականատես ենք լինում:

Դրան զուգահեռ, շարունակվում է պայքարը՝ ապահովելու մեր արտաքին անվտանգությունը և մեզանից խլված բնական կենսատարածքի ազատագրումը: Մեզ շրջապատող աշխարհը նույնպես լի է բուռն զարգացումներով՝ աշխարհաքաղաքական և քաղաքակրթական հակասությունների սրում, ֆինանսա-տնտեսական անկայունություն, տեխնոլոգիական ճեղքում և համաշխարհայնացում: Այս իրավիճակը Հայաստանի ու Հայ ազգի համար ստեղծում է լուրջ վտանգներ, բայց և բացում է մեծ հնարավորություններ: Այսօր կանգնած լինելով հայոց պատմության վճռորոշ փուլում, վերաիմաստավորելով անցյալը և հայացքով դեպի ապագան՝ գիտակցում ենք մեր պատասխանատվությունն ու իրավունքը կերտելու համայն հայության ազգային պետությունը, և այդ առաքելությամբ ստեղծում ենք «Ազգային օրակարգ» կուսակցությունը:

ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Տեսնում ենք Հայաստանը ազատ ու կենսունակ, անվտանգ և ապահով, նորարար և մրցունակ:

Հայաստան և Հայ հանրություն, որոնց համբավն է բարձրորակություն և բարձրակարգություն՝ հանրային և մասնավոր կյանքի բոլոր դրսևորումներում:

Հայաստան, որը Հայ ազգի լիարժեք ինքնիրագործման և զարգացման գլխավոր երաշխավորն է, համայն աշխարհի հայության շահերի կենտրոնը և պաշտպանը:

Հայաստան, որը պաշտպանն է ազգային կենսատարածքի և ժառանգության, և պահանջատերն է մեր հավաքական իրավունքի:

Հայաստան, որը վերականգնել է համաշխարհային քաղաքակրթական հոլովույթներում իր արժանի դերն ու համբավը:

Հայաստան, որը Արևելք-Արևմուտք, Հյուսիս-Հարավ ներդաշնակ և արդյունավետ երկխոսության, մշակութային համադրության կարևոր հանգույց է, որը տալիս է համամարդկային խաղաղ գոյակցության և կայուն զարգացման բանաձևեր ու լուծումներ:

Տեսնում ենք Հայրենիքը Պետություն դարձած, և Պետությունը՝ Հայրենիք, որպես միաձույլ մի հասկացություն՝ ՀԱՅԱՍՏԱՆ:

ՄԵՐ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Առաքինություն: Առաքինությունն է մեր տեսլականի և առաքելության իրագործման հիմնական բանալին: Առաքինություն ասելով մենք հասկանում ենք հավատամքի, խոսքի և գործի միասնություն, պրոֆեսիոնալիզմ և պատասխանատվություն, բարձրակարգություն և բարձրարժեքություն ամեն ինչում:

Արարում և զարգացում: Հայության ուղին մշտապես արարելն է, դա մեր ինքնարտահայտման բարձրագույն ձևն է: Միայն արարման միջոցով է հնարավոր ապահովել երկրի հարատև զարգացումը հինգ հիմնական ուղղությամբ՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և մշակութային: Զարգացումը հարատև է, եթե յուրաքանչյուր սերունդ հաջորդին ժառանգում է ավելի առողջ ու բարեկարգ հայրենիք՝ բնություն, բնակավայրեր ու ենթակառույցներ, մշակույթ և ավանդույթ, ոգի և գենոֆոնդ:

Ազատություն և պատասխանատվություն: Արարումը հնարավոր է ազատության լիարժեք իրագործման ճանապարհով: Ազատ ապրելու և զարգանալու իրավունքը անպայմանորեն զուգակցվում է համարժեք պատասխանատվությամբ: Պատերնալիզմը և ամբոխավարությունը ազատության հակոտնյան են և մերժելի: Հասարակական-քաղաքական համակարգի հիմքը Ազատ մարդն է՝ իր գիտակից և պատասխանատու ընտրությամբ:

Արդարություն և հավասար հնարավորություններ: Հայաստանում արդարությունը պետք է երաշխավորված լինի իր բոլոր դրսևորումներով, ներառյալ օրենքի գերիշխանություն, բարձրորակ արդարադատություն, հանրային բարիքների հավասար մատչելիություն և խելամիտ բաշխում: Հայաստանում քաղաքացիների համար պետք է ապահովված լինեն նպաստավոր պայմաններ և հավասար հնարավորություններ՝ ազատ ստեղծարարության և բարեկեցության համար:

Անվտանգություն: Հայ ազգի հավաքական կյանքը սեփական երկրում հնարավոր է միայն այն դեպքում, երբ երաշխավորված է նրա ներքին և արտաքին անվտանգությունը: Այն պահանջում է պետության և հասարակության խոր փոխհամաձայնություն, շարունակական աշխատանք և անվերապահ նվիրում՝ ձևավորելու և զարգացնելու տարածաշրջանում առավել արդյունավետ անվտանգության համակարգը, ներառյալ առավել մարտունակ բանակը: Արտաքին անվտանգության պարագայում հրամայական է նախաձեռնողական քաղաքականության իրականացումը՝ առկա և հնարավոր վտանգներին արդյունավետ հակազդելու նպատակով: Ազգային պետությունը պետք է անի առավելագույնը՝ միջազգային իրավունքի շրջանակում Հայոց Ցեղասպանությանն ու Հայրենազրկմանը համարժեք փոխհատուցում ստանալու համար, և ապահովելու, որ Արցախի միացումը Հայաստանի Հանրապետությանը ճանաչվի որպես այդ ուղղությամբ առաջին և անվերապահ քայլ:

Մշակութային վերափոխում: Քաղաքակրթական զարգացումը հանրությունից մշտապես պահանջում է ինքնահաղթահարում, մշակութային վերածնունդ և վերափոխում: Մշակույթը մենք հասկանում ենք իր լայն իմաստով՝ արվեստ և կրթություն, ավանդույթ ու ծես, հաղորդակցության ձևեր, երկխոսություն և համագործակցություն, տնտեսվարում և պետական կառավարում, քաղաքականություն և պատերազմ: Քաղաքակրթական վերելքը կայուն և արգասավոր կարող է լինել միայն այն դեպքում, երբ հիմնված է բարձր մշակույթ կրող անհատների, հանրության և հաստատությունների վրա:

Արդիական և արդյունավետ պետություն: Հայաստանում պետության գործառույթները պետք է կենտրոնանան ազատության, արդարության և անվտանգության երաշխավորման վրա: Պետությունը պետք է սոցիալական քաղաքականության միջոցով ապահովի հասարակության համաչափ զարգացումը, և հնարավոր նվազագույնի հասցնի իր անմիջական ներգրավվածությունը տնտեսության մեջ: Պետությունը պետք է առաջնորդի հայության ընդհանրական ազգային նպատակների ձևակերպման գործընթացը և լայն ազգային համաձայնության հիման վրա ապահովի դրանց իրացումը: Ազգային պետությունը պետք է լինի արդիական, նախաձեռնող և արդյունավետ:

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մեր քաղաքական ծրագիրը բխում է մեր տեսլականից, և խարսխված է մեր հիմնարար սկզբունքների վրա: Այն ուրվագծում է հանրային կյանքի կազմակերպման մեր մոտեցումները և մեր առջև կանգնած հիմնական խնդիրների դրանցից բխող առանցքային լուծումները, և սահմանում է մեր հիմնական քաղաքական նպատակները՝ առաջիկա երկու տասնամյակի համար: Այս քաղաքական նպատակներին հասնելու համար մենք օգտվելու ենք սահմանադրական կարգով նախատեսված բոլոր հնարավորություններից, գործելով թե որպես քաղաքական իշխանություն, և թե որպես ընդդիմություն, և մեզ հասու օրինական միջոցներով ձգտելու ենք իրականություն դարձնել ազգային պետության մեր տեսլականը:

Մեր քաղաքական ծրագիրը հիմվում է Պետություն-տնտեսություն-հասարակություն եռամիասնության համաչափ զարգացման վրա, և ելնում է այն իրողությունից, որ մեր պայմաններում ինքնիշխան, արդիական և արդյունավետ պետությունն է ապահովում հանրային զարգացման հիմքերը, պաշտպանում այն արտաքին և ներքին վտանգներից, և միասնական նպատակադրում իրականացնում՝ ելնելով ընդհանրական ազգային շահերից: Նմանապես, մեր ծրագիրը ելնում է նաև այն իրողությունից, որ մեր պայմաններում միայն առաջանցիկ տնտեսական զարգացումն է, որ հնարավորություն կտա ապահովել հանրային զարգացման, յուրաքանչյուր քաղաքացու բարեկեցության և պետության ամրապնդման համար անհրաժեշտ հիմնական ռեսուրսները: Վերջապես, հանրային համընթաց զարգացումը հնարավոր է միայն՝ ունենալով առողջ հասարակություն, որն իր հերթին ընդունակ է դինամիկ վերարտադրության և կարող է ձևավորել ամուր պետություն և մասնավոր նախաձեռնության հիման վրա զարգացնել տնտեսությունը: Ուստի մեր քաղաքական ծրագիրը կառուցված է երեք հիմնական առանցքի շուրջ, որոնք միասնաբար սահմանում են մեր քաղաքական նպատակադրումը՝

Ազգային պետություն: ժամանակակից, նախաձեռնող և արդյունավետ ազգային-պետական համակարգ;

Մրցունակ տնտեսություն: Համաշխարհային տնտեսությանը ինտեգրված, մարդակենտրոն և դինամիկ տնտեսական համակարգ;

Առողջ հասարակություն: կրթված, արժեքակենտրոն, հոգով և մարմնով առողջ, բարեկեցիկ քաղաքացի, ամուր ընտանիք, համերաշխ համայնք և հասարակություն:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Պետությունը հայ ազգի բարձրագույն հաստատությունն է, և հայության լիարժեք ինքնաարտահայտման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման գլխավոր երաշխավորը: Հայկական պետությունը կոչված է առաջնորդելու հայության միասնական ազգային նպատակների ձևակերպման գործընթացը և ազգային համաձայնության հիման վրա ապահովելու դրանց իրացումը: Պետությունը հզոր է ազատ մտածող, առողջ, կրթված, ստեղծագործ, իր հայրենիքը, համայնքն ու ընտանիքը սիրող քաղաքացիով: Արդիական և արդյունավետ հայկական պետության կայացումը պահանջում է պետության և քաղաքացու համակողմանի շահերի խորքային ընդհանրության գիտակցում, երկուստեք պարտավորությունների և իրավունքների անվերապահ փոխադարձ իրագործում և կողմերի ներդաշնակ գոյակցությունը ապահովող համարժեք միջավայրի ձևավորում:

Հայկական պետությունը իր գործառույթների պատշաճ կատարմամբ պետք է երաշխավորի հայության և հայկական հաստատությունների կայուն կենսագործունեության, զարգացման և առաջընթացի համար նպաստավոր պայմաններ, ներառյալ՝

- անվտանգություն՝ ներուժ առերեսվելու արտաքին և ներքին մարտահրավերներին,
- արդարություն՝ իրավունքների համապարփակ պաշտպանության,
- ազատություն՝ ապրելու և արարելու,
- ապահովություն՝ արժանապատիվ կենսակերպ ունենալու,

• հավասար հնարավորություններ՝ կրթվելու և մշտապես զարգանալու,

• ազգային շահերի խթանում՝ աշխարհով մեկ ճանաչվելու և մրցակցելու:

Պետության դերակատարումը առանցքային է հետևյալ համակարգերում՝ անվտանգային և արտաքին քաղաքական, դատաիրավական և հարկաֆինանսական, կրթական, սոցիալական ապահովման և առողջապահական՝ միտումով այդ համակարգերի համապատասխանեցումը բարձրակարգության առավելագույն չափանիշներին: Պետության ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական կատարելագործման համար կարևորվում է իշխանության տարբեր թևերի միջև խելամիտ փոխզսպումների և հակակշիռների գոյությունը և արժանիքի վրա հիմնված (մերիտոկրատական) սկզբունքների հետ զուգակցված մրցակցային ու հասուն ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորումը:

ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերը նշվածի տրամաբանությամբ, առաջիկա տասնամյակում մեր նպատակն է լինելու ձևավորել արդիական ազգային-պետական կառավարման համակարգ, որը՝

- լավագույնս համատեղում է հասուն ժողովրդավարությունը և պետության ռազմավարական խորությունը, թույլ տալով պետությանը լիարժեք իրականացնել իր հիմնական գործառույթները, մասնավորապես նաև նրանք, որոնք դուրս են քաղաքական շրջափուլերից,
- նախաձեռնող է և կոմպակտ, առանձնանում է բարձրակարգությամբ, բարձր արդյունավետությամբ, մերիտոկրատական մշակույթով և տեխնոլոգիական կատարելությամբ,
- ներգրավում է բարձր որակավորմամբ, մրցունակ մասնագետներ և ապահովում պայմաններ նրանց արդյունավետ գործունեության և զարգացման համար,
- հետևողականորեն նվազեցնում է քաղաքական և վարչական կոռուպցիայի բոլոր հնարավորությունները, ապահովում է հանրային միջոցների արդյունավետ կառավարում և բարձրորակ հանրային ծառայություններ,
- ունի հանրության տարբեր հատվածների և տնտեսվարողների հետ երկխոսելու և համագործակցելու բարձր մշակույթ, հարթակներ ու հաստատություններ,
- հիմնված է իշխանության երեք ճյուղերի միջև արդյունավետ փոխզսպման և հակակշիռների վրա, և բացառում է իշխանության համակենտրոնացումը:

Պետական համակարգի առաջարկվող արդիականացման գործում հիմնական լուծումներ են՝ (ա) սահմանադրական բարեփոխումները, (բ) քաղաքական կուսակցությունների գործունեության և ընտրությունների թափանցիկության ապահովումը, (գ) պետական հաստատությունների կառուցվածքի և գործառնությունների շարունակական կատարելագործումը, (դ) պետական ծառայողների պատշաճ մակարդակի վարձատրության ապահովումը և արդյունավետության կառավարումը, (ե) պետական գործառնությունների թափանցիկությունը և հանրային վերահսկողությունը, (զ) դատաիրավական համակարգի բարեփոխումները, (է) տեղական ինքնակառավարման ամրապնդումը, (ը) պետական կառավարման բնագավառում բարեխիղճ գործելակերպը քաջալերող արդյունավետ իրավական և կանոնակարգային դաշտի զարգացումը: Այս լուծումները պետք է ներդրվեն համակարգված, հստակ ձևակերպված փուլային հաջորդականությամբ, ամեն փուլում նպատակ ունենալով շոշափելի և չափելի առաջընթաց արձանագրել պետության ինստիտուցիոնալ կայացման ոլորտում:

Սահմանադրական բարեփոխումներ

Հայաստանի գործող Սահմանադրությունում առկա են իշխանության կենտրոնացման և հակակշիռների անհամաչափության բազմաթիվ տարրեր: Սահմանադրական բարեփոխումները պետք է բացառեն կառավարման ձևաչափի կտրուկ փոփոխությունները, և նպատակ ունենան խելամիտ, հաշվարկված քայլերով նվազեցնել իշխանության համակենտրոնացումը, ուժեղացնել պետական հաստատությունների ինքնուրույնությունը և հաշվետվողականությունը, և նպաստել նրանց կարողությունների բարձրացմանը: Մասնավորապես, Ազգային ժողովում Սահմանադրական մեծամասնության շեմը բարձրացնել պատգամավորների 3/5-ից 2/3-ի, չեղարկել կայուն մեծամասնության մասին արհեստածին պահանջը, հավասարակշռել վարչապետի գերլիազորությունները՝ նախարարների, ուժային կառույցների ղեկավարների և դեսպանների նշանակումները իրականացնելով միայն ԱԺ համապատասխան հանձնաժողովների համաձայնությամբ, Ազգային ժողովին էլ իրավունք տալով հետագայում անվստահություն հայտնել նրանցից յուրաքանչյուրին: Քննչական մարմինները պետք է հանվեն Կառավարության կազմից, նրանց ղեկավարներին նշանակելու իրավասությունը տրամադրելով Ազգային ժողովին ոլորտի հեղինակավոր մասնագետների թվից՝ ապահովելով նրանց առավելագույն անկախությունը: Ընդդիմության վերահսկողական լիազորությունները ևս պետք է ընդլայնվեն, երաշխավորված տեղեր տրամադրելով պետական մարմիններում, ներառյալ հակակոռուպցիոն և շուկան կարգավորող հանձնաժողովներում: Ճգնաժամային իրավիճակներում զինված ուժերի քաղաքական չեզոքությունը և մարտունակությունը երաշխավորվելու նպատակով նրանց գերագույն հրամանատարությունը վերաենթարկել երկրի նախագահին, ինչպես նաև նրան վերադարձնել ուղիղ օրենսդրական վետոյի իրավունքը: Վերջապես, երկրի համար հիմնարար որոշումների ընդունմանը քաղաքացիների անմիջական մասնակցությունը ապահովելու համար պարզեցվելու են համապետական հանրաքվեների անցկացման մեխանիզմները:

Ընտրական բարեփոխումներ

Խորհրդարանական կառավարման համակարգում առանցքային դեր են ստանձնում կուսակցությունները, և առանձնահատուկ կարևորվում է նրանց միջև իրական մրցակցային քաղաքական միջավայր ապահովելու անհրաժեշտությունը: Բարեփոխելով կուսակցությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունը, հնարավորություն կստեղծվի՝ չեղարկել գրանցված, բայց չգործող կուսակցությունները, սահմանափակել օտարերկրյա ֆինանսավորմամբ կառույցների ազատության աստիճանները՝ ներդնելու իրենց անդամներին քաղաքական ուժերում, և հավակնելու ընտրողի ու նշանակողի քաղաքական պաշտոններին, վերահսկել առանձին կուսակցությունների կողմից ֆինանսական և վարչական միջոցների օգտագործումը, միաժամանակ համարժեք պետական աջակցություն երաշխավորել ընտրություններին մասնակցած և նվազագույն շեմն անցած կուսակցություններին:

Չուգահեռ, ընտրական օրենսդրության բարեփոխման միջոցով, անհրաժեշտ է անցնել միասնական համապետական ցուցակով, լիարժեք համամասնական ընտրական համակարգի, բարձրացնել պատգամավորների թեկնածուների նկատմամբ տարիքային, կրթական և մասնագիտական շեմը, համահարթել ընտրարշավների ընթացքում ծախսվող միջոցները և հանրային հաղորդակցությունը, տեխնիկապես նվազագույնի հասցնել ընտրակեղծիքների հնարավորությունը, բարձրացնել ընտրակաշառքի համար պատասխանատվությունը, ներառյալ վերցնողի համար, և իջեցնել ԱԺ անցնելու ընտրական շեմը՝խրախուսելու իրապես ներկայացուցչական և որակյալ Ազգային ժողով ձևավորելու հնարավորությունը:

Ադմինիստրատիվ բարեփոխումներ

Մեր պետական կառավարման համակարգը և ուժային կառույցները պետք է դառնան շատ ավելի ճկուն, արագաշարժ, արդյունավետ, պետականամետ և մարդակենտրոն: Պետական կառավարման համակարգը պետք է դուրս բերվի կլանային և հատվածական ազդեցություններից, դրա համար անհրաժեշտ է, որ բոլոր պետական կառույցները բարձրագույն իշխանությունից իրական ազդակներ ստանան ծառայելու քաղաքացու և երկրի շահերին, այնտեղ աշխատող մասնագետները ստանան համարժեք վարձատրություն և մասնագիտական աճի հնարավորություններ, նշանակումները կատարվեն՝ ելնելով գործնական որակներից, և հնարավորինս նվազեցվի որոշումների ընդունման մեջ մարդկային գործոնը:

Պետական հաստատությունները իրենց արդյունավետությամբ պետք է չգիջեն լավագույն մասնավոր ընկերություններին, այս նպատակով նրանց ֆունկցիոնալ կառուցվածքը և թվակազմը պետք է շարունակաբար համապատասխանեցվի հանրության կարիքներին, ռեսուրսները վերաբաշխվեն առավել պահանջարկված գործառնությունների վրա: Պետական համակարգում պետք է վերացվի ֆունկցիաների կրկնօրինակումը, միավորվեն մոտ գործառույթներ իրականացնող կառույցները, նրանցից յուրաքանչյուրի գործունեության նպատակները հստակորեն սահմանվեն և յուրաքանչյուր ադմինիստրատիվ գործառույթ հնարավորինս պարզեցվի, թվայնացվի, և իրականացվի ռեսուրսների խելամիտ ծախսումով: Պետական կառույցներում պետք է համատարած ներդրվի առաջավոր կառավարման պրակտիկան, երբ բարդ խնդիրների լուծման համար ստեղծվում են միջֆունկցիոնալ և միջգերատեսչական խմբեր՝ լայն լիազորություններով և հստակ ընթացակարգերով, ակտիվորեն ներգրավելով փորձագիտական և խորհրդատվական ռեսուրսներ մասնավոր հատվածից՝ տվյալ խնդրի առավել որակյալ և հնարավորինս արագ լուծումը մշակելու համար:

Պետական ծառայողների նշանակումը պետք է լինի մրցակցային, հիմնված նրանց կիրառական մասնագիտական որակների վրա, նրանց ընդհանուր վարձատրությունը պետք է համապատասխանեցվի շուկայական մակարդակին, իսկ նրանց գործունեության արդյունավետությունը պարբերաբար գնահատվի, և դրա հիման վրա ընդունվեն մասնագիտական առաջխաղացման մասին որոշումներ: Պետական ծառայողների գնահատականը ֆորմալ գիտելիքների փոխարեն պետք է հիմնվի նրանց գործունեության իրական արդյունքի չափման վրա, այս նպատակով յուրաքանչյուր պետական ծառայող պետք է ստանա նաև հստակ պաշտոնական նկարագրություն, դրանց վրա հիմնված արդյունավետության չափորոշիչներ, որոնք, իրենց հերթին, բխում են իր ստորաբաժանման գործունեության չափորոշիչներից, և այդպես շարունակ մինչև Կառավարության ղեկավար: Պետությունը պետք է մշտապես զբաղվի նաև պետական ծառայողների մասնագիտական զարգացմամբ, և ձգտի այդ գործում առավելագույնս ներգրավել թե միջազգային փորձը, և թե լավագույն տեղական կադրերը: Այն պետական ծառայողներն էլ, որոնք ազատվում են կրճատումների կամ մասնագիտական անհամապատասխանության արդյունքում, պետք է դառնան պետական հոգածության առարկա, հնարավորություն ստանան վերապատրաստվելու և իրենց տեղը գտնելու մասնավոր հատվածում:

Պետական գործառնությունների թափանցիկություն

Մեր երկրում անկախությունից ի վեր բարձր է եղել քաղաքական և վարչական կոռուպցիայի մակարդակը, և դա բերել է ծանր հետևանքների: Առաջիկա տարիներին պետությունը պետք է գործարկի հստակ հակակոռուպցիոն ռազմավարություն, որը պետք է միտված լինի այն ծնող պատճառների հետևողական վերհանմանը և հակազդեցությանը: Այս նպատակով, պետության բոլոր այն գործառնությունները, որոնք ունեն կոռուպցիոն ռիսկեր, պետք է հստակ կանոնակարգվեն, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձիք, որոնք այդ ռիսկերին առնչվում են, պետք է ունենան պետական մարմինների որոշումների բողոքարկման հստակ և երաշխավորված ընթացակարգեր: Մենք նաև անհրաժեշտ ենք համարում այդ նպատակով առանձին վարչական դատարանի ստեղծումը, որը մասնագիտանում է

պետական կառույցների և մասնավոր հատվածի միջև առաջացած խնդիրների քննման վրա, և ունի բավարար թողունակություն՝ փաստացի ծավալով առկա գործերի քննության համար:

Պետական ռեսուրսների ցանկացած օգտագործում՝ գնումներ, գույքի օտարում, լիցենզիաների և իրավունքների տրամադրում, և այլն, այսուհետև պետք է իրականացվեն բաց մրցակցային հիմքի վրա, եթե դա այդպես չի, ապա միայն հանրային քննարկման հիման վրա (բացառությամբ անվտանգությանը առնչվող հատուկ դեպքերի): Պետական պաշտոնայի վրա ցանկացած ճնշում՝ կոնկրետ գործողություն իրականացնելու, պետք է լինի քրեորեն հետապնդելի, պետական պաշտոնյան իր գործողություններում պետք է առաջնորդվի միայն օրենքների պահանջներով: Միևնույն ժամանակ, ադմինիստրատիվ կաթվածից խուսափելու նպատակով, պետական պաշտոնյաների որոշումներ ընդունելու լիազորությունները պետք է ընդարձակվեն՝ համապատասխան խելամիտ կանոնակարգման հիման վրա:

Դատա-իրավական բարեփոխումներ

Դատա-իրավական բարեփոխումները Հայաստանում առանձին մեծ խնդիր են, հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները: Հայաստանում ներկայումս գործող համակարգը, ֆորմալ տեսանկյունից, ապահովում է դատավորների անկախությունը և հաշվետվողականությունը, սակայն իրականության մեջ, այն դեռ հեռու է կատարյալից, քանի որ իր մեջ կրում է անցյալի մեծ իներցիա: Դատական բարեփոխումները պետք է կենտրոնացնել մի քանի խնդիրների լուծման վրա՝

Դատավորների իրական անկախության ապահովում. այսօր դեռ դատավորի կամ նրա մերձավորների նկատմամբ ճնշումները հնարավորություն են տալիս ազդել դատավորների փաստացի անկախության վրա: Այս ոլորտը պետք է ավելի խիստ կանոնակարգվի, դատավորների կամ նրանց անմիջական մերձավորների նկատմամբ քրեական հետապնդման շեմը պետք է բարձրացվի, այդ գործերը պետք է քննվեն առանձին դատարանում: Նաև, պետք է բարձրացվի դատավորների նշանակման որակական շեմը, դատավորներ պետք է նշանակվեն միայն այն իրավաբանները, որոնք ունեն բարձր մասնագիտական հեղինակություն և ճանաչում, հիմնված հստակ սահմանված չափորոշիչների վրա: Վերջապես, դատավորները պետք է երաշխավորված բարձր վարձատրություն ստանան, միևնույն ժամանակ, նրանք իրենց և իրենց մերձավորների գույքի և գործարքների վերաբերյալ ամենամյա հստակ հաշվետվություն պետք է ներկայացնեն, և ցանկացած կասկածելի գործարք պետք է հիմք դառնա կարգապահական քննության համար:

Դատավորների անաչառություն և հաշվետվողականություն. Դատավորների ընդունված որոշումների նկատմամբ պետք է լինի հստակ մշտադիտարկում, այն դատավորները, որոնց ընդունված որոշումները առավել հաճախ են բեկանվել վերադաս ատյանների կողմից (ներառյալ ՄԻԵԴ-ի), պետք է ֆինանսական և ադմինիստրատիվ պատասխանատվություն կրեն: Անհրաժեշտ է նաև դիտարկել դատական կոլեգիայի ինստիտուտի ներդնումը Հայաստանում, մասնավորապես, առավել ծանր հանցագործությունների համար, երբ որոշումը ընդունում է մի քանի դատավորից բաղկացած մարմինը, ընդ որում, այդպիսի դեպքերում կարելի է դիտարկել սփյուռքահայ հեղինակավոր իրավաբանների մասնակցությունը՝ որպես այդպիսի կոլեգիայի հրավիրված անդամ:

Դատական համակարգի թողունակության բարձրացում. այսօր դատարանները խիստ ծանրաբեռնված են, գործերը շատ երկար են քննվում, բազմաթիվ են գործի քննության ձգձգման հնարավորությունները: Առաջիկայում, անհրաժեշտ է ավելացնել առաջին և երկրորդ ատյանի դատավորների թիվը, թվայնացնել գործերի ընդունման և բաշխման համակարգը, ստեղծել նախադեպերի թվային շտեմարաններ: Հեռանկարում, նաև պետք է խստացնել Վճռաբեկ դատարան գնացող գործերի կանոնակարգումը, պարզեցնելու դատական գործերի քննության շղթան, և պակասեցնելու դրանց ձգձգման հնարավորությունները:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ

Հայաստանում ավանդաբար տեղական ինքնակառավարման մարմինները ունեն սահմանափակ լիազորություններ, միևնույն ժամանակ դրանց գործունեության մեջ բազմաթիվ են կոռուպցիոն ռիսկերը, և հաճախ խնդրահարույց է վարչարարության որակը, դա բերում է խնդիրների կուտակման, և համապետական մակարդակում կենտրոնացման: Մեր նպատակն է լինելու առաջիկա տարիներին բարձրացնել տեղական ինքնակառավարման որակը, և դրա միջոցով հասնել համայնքների կյանքի իրական բարելավվման, կենտրոնանալով մի քանի խնդիրների լուծման վրա՝

- Համայնքների իրավասությունների ընդլայնում՝ սեփական տարածքներում կրթա-մշակույթային, սոցիալական, իրավակարգի պաշտպանության, հանրային գույքի կառավարման ոլորտներում, ընդհանուր պետական կարգավորման շրջանակներում,
- Համայնքների բյուջետային հնարավորությունների ընդլայնում՝ գույքահարկի փաստացի բարձրացման, և միասնական չափանիշների վրա հիմնված (օրինակ, բնակչության թիվ) պետական սուբվենցիաների համակարգի ներդրման հաշվին, սա նաև հնարավորություն կտա օժանդակել համաչափ տարածքային զարգացմանը,
- Համայնքների ղեկավարների և ավագանու պաշտոնավարման ժամկետի նվազեցում մինչև 3 տարի, ընտրվող անձանց նկատմամբ որակական չափանիշների խստացում, համայնքների բնակչության առաջ հաշվետվողականության թափանցիկ մեխանիզմների և գործողությունների բողոքարկման գործուն միջոցների ներդրում,
- Համայնքային հանրաքվեների ինստիտուտի ամրապնդում՝ ընթացակարգերի պարզեցման, և ակտիվ խրախուսման միջոցով:

Բարեխիղճ գործելակերպի քաջալերում

Թեև պետական շինարարության հիմքում կառուցվածքային և գործառնական բարեփոխումներն են, առանցքային է նաև պետական ծառայողների, դատավորների, իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից բարեխիղճ գործելակերպի քաջալերումը՝ պետությանը հասու բոլոր միջոցներով: Դա սկսվում է պետության ղեկավարների կողմից սեփական գործունեության մեջ բարեխիղճ և առաքինի գործելակերպի դրսևորմամբ և պետք է ներառի այնպիսի տարրեր, ինչպես պետական ծառայության պարկեշտ և ազնվաբարո քաղաքացիների ընդունումը՝ համապատասխան ընթացակարգերի միջոցով, պետական ծառայողների մասնագիտական զարգացումը և աշխարհի լավագույն կառավարման պրակտիկային ծանոթացումը, աշխատանքի պայմանների շարունակական բարելավումը, ներառյալ բարձր տեխնոլոգիաների ներդրման միջոցով, կոնկրետ պետական ծառայողի նկատմամբ հանրային վստահության ձևավորման մեխանիզմների ներդնումը հետադարձ կապի միջոցով, պարգևատրումները, և այլն: Հայաստանում պետք է հարգի լինի պետական ցանկացած պաշտոնյայի աշխատանքը, և ոչ այն պատճառով, որ նա ունի սեփական շահերը առաջ մղելու տարատեսակ հնարավորություններ, այլ որովհետև նա նվիրված ծառայում է հանրային շահին, և նրա ծառայությունը իրապես գնահատված է այդ հանրության կողմից:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Հաշվի առնելով այն պատմական և աշխարհաքաղաքական իրողությունները, որոնց համատեքստում տեղի է ունենում մեր ազգային պետության կայացումը, երկրի ներքին և արտաքին անվտանգության ապահովումը պետության կարևորագույն առաքելությունն է

լինելու առնվազն առաջիկա մի քանի տասնամյակների ընթացքում, ուստի պետական շինարարության կարևորագույն առանցքը եղել և շարունակելու է լինել ազգային անվտանգության կառույցների մշտական զարգացումը և ամրապնդումը: Անվտանգության համակարգի ամրապնդումը մշտապես լինելու է մեր կուսակցության ուշադրության կենտրոնում, ստորև շարադրված համակարգային տրամաբանության շրջանակներում:

Ազգային բանակ

Ազգային բանակը պետության կարևորագույն հաստատությունն է, և Հայաստանի անվտանգության, ազատության, անկախության և ինքնիշխանության գլխավոր ինստիտուցիոնալ երաշխավորը: Ազգային բանակը պետք է հավակնի լավագույնը դառնալ տարածաշրջանում իր մարտունակությամբ, ուստի հայկական զինուժի և ռազմարդյունաբերության մշտական արդիականացումը հրամայական է: Բանակի տեսլականն ու արդիականացման ուղղություններն են՝

- *Հմուտ և արժեքակենտրոն*՝ բարձր մասնագիտացված, ամուր բարոյա-հոգեբանական որակներով, և կուռ արժեհամակարգով անձնակազմ: Բանակը շարունակաբար իրականացնելու է միջոցառումներ՝ ուղղված անձնակազմի մասնագիտական և բարոյա-հոգեբանական որակների բարձրացմանը: Զինծառայությունը պետք է դառնա երկրում առավել հարգի մասնագիտություններից մեկը, յուրաքանչյուր անհատը պետք է բավարարի բարձր որակական պահանջների՝ պայմանագրային զինծառայության անցնելու համար: Պայմանագրային զինծառայողները պետք է ստանան շուկայականմիջինից բարձր վարձատրություն, և պետությունը պետք է հոգա նրանց խելամիտ սոցիալական կարիքները: Պետությունը նաև պետք է ապահովվի բարձրորակ կրթություն՝ հիմնական զինվորական մասնագիտությունների գծով:
- *Արագ մոբիլիզացվող*՝ յուրաքանչյուր զինապարտ քաղաքացի պետք է իմանա զինված բախման և արտակարգ իրավիճակների դեպքում իր տեղն ու անելիքը, այնպես, որ միշտ և ցանկացած պահի պատրաստ լինի պաշտպանության և զինված պայքարի: Արագ մոբիլիզացիայի և մարտունակության բարձրացման համար Հայաստանի քաղաքացիները պետք է պարբերաբար անցնեն կարճաժամկետ զինվորական պատրաստություն՝ մարտականին մոտ տարրերով: Սահմանամերձ բնակավայրերում բնակվող Հայաստանի քաղաքացիների համար այս հաճախականությունը պետք է լինի կրկնակի բարձր, նրանք պետք է ամրագրված լինեն իրենց մերձակա զորամասերում, ունենան կցագրված զենք, մարտական համազգեստ և մարտական այլ միջոցներ:
- *Շարժունակ, խելացի և ճշգրիտ*՝ զինված բարձր տեխնոլոգիական, արդյունավետ և արագաշարժ տեխնիկայով, զենք ու զինամթերքով, հեռահար ճշգրիտ հարվածի հնարավորություններով, ինչպես նաև բարձր ֆիզիկական ու տակտիկական պատրաստվածությամբ անձնակազմով: Հայկական բանակը պետք է ընդունակ լինի ոչ միայն պաշտպանել երկրի տարածքը, այլև սրընթաց հարձակողական գործողություններ իրականացնել՝ հնարավոր հակառակորդներին մեզ համար բարենպաստ պայմաններով խաղաղություն պարտադրելու նպատակով: Այս նպատակով, Հայաստանը պետք է անցնի պաշտպանական դոկտրինից հիբրիդային դոկտրինի, և համապատասխանաբար արդիականացնի զինված ուժերի կազմը և նրանց սպառազինությունը:
- *Բարձր արդյունավետ*՝ ըստ հնարավորի առավելագույնս ավտոմատացված մարտական կարողություններով, յուրաքանչյուր զինծառայողի կրակային արդյունավետության և մարտական պայմաններում անվտանգության

բարձրացմանն ուղղված մշտական աշխատանքով, հարակից և սպասարկող ոլորտներում արդյունավետության մշտական բարձրացման, ժամանակակից խելացի տեխնոլոգիաների կիրառման, և կորուստների կրճատմանն ուղղված գործողությունների հաշվին:

- *Արժանավայել և անվտանգ*՝ որտեղ ապահովված են. (ա) յուրաքանչյուր անձի արժանապատվության նկատմամբ բացարձակ հարգանք, (բ) զինվորականների կյանքի ու կենցաղի արժանավայել պայմաններ, (գ) կյանքի և առողջության անվտանգություն և ապահովագրություն, (դ) բուժման և վերականգնման բարձրակարգ միջոցներ ու պայմաններ: Այս նպատակով, բանակը ձևավորելու է համապատասխան կարողություններ՝ զինծառայողներին որակյալ հոգեբանական աջակցություն հատկացնելու, զինծառայողների շրջանում կոնֆլիկտածին վիճակները նվազեցնելու, զորամասերի տարածքում նրանց կենցաղային պայմանները բարելավելու նպատակով:
- *Կրթող*՝ որտեղ զինվորը ստանում է ֆիզիկական, մարտավարական և բարոյա-հոգեբանական բարձր կրթություն և պատրաստվածություն, ինչպես նաև հնարավորություն է ունենում նոր գիտելիք և մասնագիտություն սովորելու՝ ապագայում խաղաղ կյանքի ընթացքում կիրառելու համար: Այս նպատակով, բոլոր զորամասերում ստեղծվելու են կարողություններ՝ զինծառայողների կողմից լրացուցիչ գիտելիքներ և քաղաքացիական մասնագիտացումներ ստանալու նպատակով: Մեծ տեղ է հատկացվելու կիբեռանվտանգությանը՝ համապատասխան արդի սարքավորումների և ուսուցողական տարբեր ծրագրերի կիրառմամբ:
- *Արդիականացված պաշտպանական հնարավորություններով*՝ ներառյալ երկրի ողջ տարածքում ենթակառուցվածքների ստեղծումը՝ այն հաշվարկով, որ երկիրը անառիկ ու ապահով ամրոց դառնա, և ռազմական գործողությունների դեպքում բնակչությանլիարժեք անվտանգություն ապահովի: Այս նպատակով, լրացուցիչ ներդրումներ կկատարվեն ռմբապաստարանների ցանցի ստեղծման, սննդի և առաջին անհրաժեշտության այլ ռեզերվների ձևավորման նպատակով:
- *Արդիական ռազմարդյունաբերությամբ,* որն ունակ է սպասարկելու բանակի բարձր տեխնոլոգիական կարիքները, և դառնալ միջազգային ռազմական շուկայի մրցունակ մասնակից: Այս նպատակով, ռազմաարդյունաբերության ոլորտում պետությունը կիրականացնի հետազոտությունների առաջանցիկ ֆինանսավորում՝ գերակա ոլորտներում, և կձևավորի մասնավոր-պետական համագործակցություններ՝ մրցակցային առավելությունները համատեղ զարգացնելու համար: Պետությունը նաև կհամակարգի հայկական արտադրության ռազմարդյունաբերական տեխնոլոգիաների առաջխաղացումը արտասահմանում, և բարենպաստ պայմաններ կստեղծի նրանց արտահանման համար:

Բանակը համալրվելու է երկու մոդելով՝ զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ժամկետային ծառայություն և պայմանագրային ծառայություն: Ժամկետային ծառայողները ժամանակի մեծ մասը պետք է անցնեն ինտենսիվ մարտական պատրաստություն, անմիջական մարտական ծառայությունը խաղաղ պայմաններում պետք է սահմանափակվի կես տարով: Ըստ ծառայության տեսակների, տևողությունը կարող է տարբերվել, ծառայության առավել վտանգավոր և ծանր տեսակների համար պետք է նախատեսվի ավելի կարճ տևողություն կամ նյութական փոխհատուցում:

Կանայք պետք է ունենան բանակում ծառայելու հավասար հնարավորություն, բայց ոչ պարտադիր: Այն տղամարդիկ, որոնք առողջական պատճառներով հնարավորություն չունեն զինվորական ծառայություն անցնել զորանոցային պայմաններում, պետք է անցնեն իրենց կարողություններին համապատասխան այլընտրանքային ծառայություն: Ծառայությունից

պետք է ազատվեն միայն ծանր ֆիզիկական կամ հոգեկան սահմանափակումներ ունեցող տղամարդիկ:

Հայաստանը առաջիկա տասնամյակներում շարունակելու է ապրել ռազմական բարձր վտանգի պայմաններում, ուստի ստիպված է լինելու ունենալ ոչ միայն բարձր մարտունակ, այլև իր բնակչության համեմատ բարձր թվակազմով, և տեխնոլոգիապես հագեցած բանակ: Սա պահանջելու է զգալի ռեսուրսներ հասարակությունից, ուստի բանակը պետք է մի կողմից ստանա ՀՆԱ առնվազն 5%-ը՝ իր խնդիրները համարժեք կատարելու համար, մյուս կողմից այն պետք է առավելագույն արդյունավետություն ապահովի ստացված ռեսուրսների օգտագործման տեսակետից, նվազագույնի հասցնի կորուստները և կոռուպցիոն դրսևորումները՝ նաև հնարավորինս նախապատվություն տալով մրցունակ տեղական արտադրանքին, և շարունակաբար աշխատի զինծառայողների մասնագիտական արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Պատերազմը հանրային կյանքի կարևորագույն իրողություն է, իսկ պատերազմի մշակույթն էլ՝ ինքնության կարևոր դիմագիծ: Շատ կարևոր է հանրության և հատկապես զինվորականության շրջանում ներդնել համարժեք ընկալում պատերազմի, հայրենասրության, կենաց ու մահվան պայքարի վերաբերյալ, և սահմանել պատշաճ վարքի կանոններ: Խաղաղության ձգտումը և հայության ավանդական խաղաղասիրությունը չպետք է շղարշեն մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական բարդ իրողությունները և պատերազմների առաջացման իրական վտանգները: Հայաստանում չպետք է խրախուսվի խաղաղասիրության միակողմանի քարոզչությունը, հետևողականորեն պետք է վերացվի պարտադիր զինվորական ծառայությունը որպես ժամանակի կորուստ դիտարկելու ձևավորված կարծրատիպը, իսկ երիտասարդ սերունդն էլ պետք է դաստիարակվի պատերազմին մշտապես պատրաստ լինելու և հայրենիքի հանդեպ սեփական պարտքը ցանկացած պահին կատարելու բարձր գիտակցությամբ:

Անվտանգության մարմիններ

Ազգային անվտանգության մարմինների գործունեության առանցքում մեր պետականության ներքին անվտանգային բնագիծը հակառակորդներից պաշտպանելն է, որը թույլ չի տա օտարերկրյա պետություններին, օտար շահեր սպասարկող տարաբնույթ կազմակերպություններին և ծայրահեղական տարբեր ուժերին մեր պետությունը ներսից քայքայել և տապալել այն՝ կաթվածահար անելով պետական համակարգը, պառակտել ու այլասերել հասարակությունը՝ վերածելով այն անդեմ և անկազմակերպ զանգվածի: Մեր անվտանգության համակարգի մշտական արդիականացումը հույժ կարևոր է, քանի որ անվտանգության մարտահրավերները բարդանում են, և սկսում են կրել ավելի քողարկված բնույթ: Ազգային անվտանգության մարմինների տեսլականն ու արդիականացման հիմնական նպատակներն են՝

- *Գործունեության ուղղությունների հստակեցում* ազգային անվտանգության մարմինների գործունեության հիմնական ուղղություններն են՝ **հետախուզությունը, հակահետախուզությունը և ահաբեկչության դեմ պայքարը**: Այս տրամաբանության մեջ ազգային անվտանգության մարմինների գործունեությունը, որպես հատուկ ծառայություն, որոշակիորեն պետք է տարանջատվի իրավապահ մարմինների գործունեությունից, որոնց պարտականությունները սահմանափակվում են ներքին հանցավորության դեմ պայքարով և ենթադրում են այլ գործիքակազմ:
- *Դինամիկ, աղապտիվ և նախաձեռնող գործելաոճ՝* հաշվի առնելով, որ անվտանգային միջավայրի ու ռազմաքաղաքական գերակայություններով պայմանավորված՝ ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերներն ու սպառնալիքները կարող են փոփոխվել՝ նախաձեռնողականությունը անհրաժեշտ է՝ հնարավոր հակառակորդների քայքայիչ գործունեությունը կանխակայելու և վաղ փուլերում չեզոքացնելու համար:

- *Ապաքաղաքականացվածություն՝* հաշվի առնելով անվտանգության մարմինների գործունեության բնույթն ու գործիքակազմը, միշտ լինելու է գայթակղություն դրանց ունեցած լայն հնարավորություններն օգտագործել տարատեսակ իրավապահ հարցերի լուծման համար, ինչպես նաև այդ կառույցը ներքաշել ներքաղաքական գործընթացների մեջ, ինչի արդյունքում թուլանում է պետության ներքին դիմադրողականությունը: Անվտանգության մարմինները պետք է կենտրոնանան իրենց առանցքային գործառնությունների վրա, դրանց համար ստանան համարժեք ռեսուրսներ, բայց զերծ պահվեն պետության իրավապահ գործառույթներին մասնակցությունից:
- *Կազմակերպչական բարձր մակարդակ՝* ազգային անվտանգության մարմիններում պետք է ծառայեն պատշաճ վարձատրվող, բարձրակարգ պրոֆեսիոնալ կադրեր, շարունակաբար ընդլայնվեն ծառայությունների օպերատիվ հնարավորությունները, կատարելագործվեն հետաքննության և նախաքննության մեթոդները, ապահովվեն նյութատեխնիկական բավարար ռեսուրսներ: Ազգային անվտանգության մարմինների վրա պետք է ծախսվի ընդհանուր պետական բյուջեի առնվազն 2%-ը, և այս միջոցների ծախսման արդյունավետության հստակ չափորոշիչներ պետք է սահմանվեն և վերահսկվեն:
- *Անկախություն՝* ազգային անվտանգության մարմինները պետք է օժտված լինեն անհրաժեշտ մեխանիզմներով՝ օպերատիվ որոնողական աշխատանքներն իշխանության վերին օղակների և նրանց մոտ կանգնած անձանց միջավայրում լիարժեք իրականացնելու համար, քանի որ հենց այս շրջանակն է հակառակորդների հատուկ ծառայությունների և տարաբնույթ օտարերկրյա կազմակերպությունների առաջնահերթ թիրախներից մեկը: Այս պատճառով, անվտանգության մարմինների ղեկավարությունը պետք է նշանակվի անվտանգության պրոֆեսիոնալ կադրերից, ֆիքսված ժամկետով, և հաշվետու լինի միայն օրենքի առաջ:
- *Գիտահենք և տեխնոլոգիապես հագեցած՝* ազգային անվտանգության մարմինները պետք է ունակ լինեն արագ կիրարկելու տեխնոլոգիական առաջընթացի ընձեռած հնարավորությունները, կատարելագործեն կիբերհանցավորության դեմ պայքարի մեթոդները, կատարելագործեն գիտա-տեխնիկական, փորձագիտական-վերլուծական կարողությունները, ընդլայնեն սեփական կրթական բազան: Երկրի գիտական պոտենցիալը պետք է լիարժեք ծառայի անվտանգության մարմինների կարիքներին, առավել տաղանդավոր երիտասարդները իրենց ծառայությունը կարող են անցնել նաև անվտանգության մարմիններում:
- *Գլոբալացված՝* Հայաստանին և հայությանը սպառնող անվտանգության մարտահրավերները չեն սահմանափակվում Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքներով, նրանք կարող են առաջանալ են ցանկացած այն կետում, որում հայությունը կենսական շահեր ունի: Ազգային անվտանգության մարմինները պետք է ընդունակ լինեն իրենց գործունեությունը տեղափոխել և արդյունավետ իրականացնել աշխարհի ցանկացած կետ, որում այդպիսի անհրաժեշտություն ծագի: Հայաստանի և հայության շուրջ ձևավորվել են բարդագույն անվտանգային միջավայրեր: Անվտանգության մարմինների առաքելությունն է պաշտպանել հայոց անկախ պետականությունն ու ազգային շահերը, և մեր նպատակն է լինելու կառուցել արդյունավետ, դինամիկ, ճկուն ազգային անվտանգության համակարգ՝ առկա սահմանափակ ռեսուրսների լավագույն օգտագործմամբ: Այս գործընթացում հասարակությունը և յուրաքանչյուր քաղաքացի պետք է պահանջատեր լինեն անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ, միևնույն ժամանակ սատարեն և կատարեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրենց պարտականությունները՝ անմիջական

մասնակից դառնալով մեր հակառակորդների հակազդմանն ուղղված գործունեությանը:

Ոստիկանություն

Մեր երկրում ոստիկանության գործունեության նպատակն ապահով և անվտանգ համակեցության միջավայրի ապահովումն է, հանցագործությունների դեմ պայքարը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը:

Ոստիկանության համակարգի մշտական արդիականացումը հույժ կարևոր է, քանի որ հանցատեսակները և հանցավորությունը, ինչպես նաև դրանք ծնող պատճառներն ու նպաստող պայմանները բարդանում են և սկսում են կրել անդրազգային բնույթ: Միևնույն ժամանակ, կարևոր է, որ Հայաստանի պարագայում, ոստիկանության մարմինները լինեն կոմպակտ, և իրենց խնդիրներ կարողանան լուծել սահմանափակ միջոցներով: Ոստիկանության համակարգի մարմինների գործունեության տեսլականն ու արդիականացման հիմնական նպատակներն են՝

- *Արագ, ճկուն և նախաձեռնող գործելաոճ՝* հաշվի առնելով հանցավորության ադապտացման, տարատեսակ քրեածին միջավայրերի հետ սերտաճման և նոր հանցատեսակների առաջացման իրողությունները, հանցավորության, կազմակերպված հանցավորության ու քրեածին իրավիճակի խիստ հսկողության նպատակով պետք է մշտապես ավելացվեն ոստիկանության համակարգի օպերատիվ հետախուզական, ներառյալ տեխնոլոգիական հնարավորություններն, ու կատարելագործվի ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական համակարգը:

- *Ապաքաղաքականացվածություն՝* հաշվի առնելով ոստիկանության գործունեության բնույթն ու գործիքակազմը, միշտ լինելու է գայթակղություն վերջինիս ունեցած հնարավորություններն օգտագործել իրավապահ մարմինների գործառնական պարտականությունների մեջ չմտնող հարցերի լուծման համար: Ոստիկանության ապաքաղաքաքանացվածության երաշխիքներից է վերջինիս կարգավիճակի փոփոխությունը: Այն պետք է դառնա ներքին գործերի նախարարության մաս, և հայտնվի Ազգային ժողովի հաշվետվողականության դաշտում: Ոստիկանության հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի միմիայն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված հստակ գործառնական պարտականությունների կատարմանը՝ որպեսզի համակարգը չներքաշվի ներքաղաքական գործընթացներում և չդառնա քաղաքականության գործիք օրվա իշխանության համար:

- *Կազմակերպչական բարձր մակարդակ՝* ոստիկանության կառուցվածքային վերադասավորում՝ կրկնօրինակող ստորաբաժանումների լուծարում և արդի պայմաններում նոր հանցատեսակների առկայությամբ պայմանավորված համապատասխան ստորաբաժանումների կազմավորում: Ոստիկանության համակարգում պետք է ծառայեն պատշաճ վարձատրվող, բարձրակարգ պրոֆեսիոնալ կադրեր, շարունակաբար բարձրացվի ոստիկանության ծառայողների ծառայողական և ֆիզիկական պատրաստականության մակարդակը, կատարելագործվեն հետաքննության և նախաքննության՝ այդ թվում հակակոռուպցիոն, մեթոդները, ապահովվեն նյութատեխնիկական բավարար ռեսուրսներ:

- *Հմուտ և արժեքակենտրոն՝* բարձր մասնագիտացված, ամուր բարոյա-հոգեբանական որակներով, և կուռ արժեհամակարգով անձնակազմ: Ոստիկանությունը շարունակաբար իրականացնելու է միջոցառումներ՝ ուղղված անձնակազմի

մասնագիտական և բարոյա-հոգեբանական որակների բարձրացմանը: Ոստիկանական ծառայությունը պետք է սկսի ընկալվել որպես հասարակության համար օգտակար և հարգի, ոստիկանական ծառայության անցնող յուրաքանչյուր անձ պետք է բավարարի բարձր որակական պահանջների: Ոստիկանության ծառայողները պետք է ստանան շուկայականին համարժեք վարձատրություն, և պետությունը պետք է հոգա նրանց խելամիտ սոցիալական կարիքները՝ բարձրացնելու մասնագիտության գրավչությունը, և նվազեցնելու առկա կոռուպցիոն ռիսկերը:

- *Գիտահենք և տեխնոլոգիապես հագեցած՝* ոստիկանությունը պետք է ունակ լինի արագ կիրարկելու տեխնոլոգիական առաջընթացի ընձեռած հնարավորությունները, կատարելագործի հանցավորության դեմ պայքարի մեթոդները և իր գիտա-տեխնիկական, փորձագիտական-վերլուծական կարողությունները, ընդլայնի և որակական նոր մակարդակի բարձրացնի սեփական կրթական բազան: Երկրի գիտական պոտենցիալը պետք է լիարժեք ծառայի նաև ոստիկանության կարիքներին:

Հայաստանը, զարգացող երկրների շարքում, ունի հանցավորության համեմատաբար ցածր մակարդակ, ուստի կարիք չունի ունենալու ոստիկանանական մեծ անձնակազմ: Հայաստանում ոստիկանության անձնակազմը չպետք է գերազանցի աշխատուժի 1%-ը, իսկ ոստիկանության վրա կատարվող ծախսերը չպետք է գերազանցեն ՀՆԱ 1%-ը: Միաժամանակ, ոստիկանությունը պետք է առավելագույն արդյունավետություն ապահովի ստացած ռեսուրսների օգտագործման տեսակետից, նվազագույնի հասցնի վատնումները և կոռուպցիոն դրսևորումները: Ոստիկանությունը պետք է պարբերաբար ավելացնի նաև իր կարողությունները՝ արդյունավետ մասնակցելու Հայաստանի տարածքում կամ առանձին հատվածներում արտակարգ իրավիճակի կամ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը: Հանցավորության դեմ պայքարը, սակայն, չի սահմանափակվում միայն ոստիկանության գործառնական շրջանակներով: Ավելի ընդարձակ համատեքստում այն մշակութային հիմնահարց է, որի բաղադրիչներից են կրթությունը, ընտանիքը, հայրենասիրական դաստիարակությունը և այլն: Ոստիկանությունն իր խնդիրներն իրականացնելիս պետք է արդյունավետ համագործակցի այլ ուժային կառույցների և իրավապահ մարմինների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ՝ արդյունավետ կանխարգելելու հանցագործությունների առաջացումը, և ապահովելու հանրային անվտանգությունը:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգային պետության ևս մեկ առանցքային գործառույթն է արտաքին հարաբերությունների բազմաբարդ համակարգի զարգացումը, և դրա միջոցով հանրային կենսագործունեության և զարգացման բարենպաստ պայմանների ապահովումը: Դրա շնորհիվ առաջիկա տասնամյակներում Հայաստանը պետք է կարողանա իր արժանապատիվ դերն ու դիրքը նվաճել աշխարհի զարգացման արդի գործընթացներում: Հայաստանը պետք է շարունակաբար ամրապնդի իր ինքնիշխանությունը, հավատարիմ մնալով իր քաղաքակրթական առաքելությանը, միևնույն ժամանակ ակտիվորեն մասնակցելով ընդարձակ տարածաշրջանում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացներին, և շարունակելով հանդես գալ որպես ազգերի ինքնորոշման և իրավունքների առաջամարտիկ միջազգային ասպարեզում: Հայաստանը պետք է դառնա նաև արևելք-արևմուտք, հյուսիս-հարավ արդյունավետ, հավասարակշռված և ներդաշնակ երկխոսության և փոխգործակցության իրական հանգույց, որը տալիս է համամարդկային խաղաղ գոյակցության և կայուն զարգացման բանաձևեր և լուծումներ, մշակութային համադրության (սինթեզի) կարևոր կենտրոն է, բարձրորակության և բարձրարժեքության ջահակիր է տարածաշրջանում:

Հայաստանը ունի նաեւ պատմական անբարենպաստ ժառանգություն, որի արդյունքում իր չորս հարևանից երկուսի հետ գտնվում է փաստացի շարունակական հակամարտության մեջ: Այս հակամարտությունը հսկայական ռեսուրսներ է պահանջում մեր երկրից և ազգից, և առնչվում է մեր գոյության բուն իրավունքին: Այս հակամարտության հայանապաստ հանգուցալուծումը հնարավոր է միայն այն պայմաններում, երբ Հայաստանը դառնա հզոր, ինքնաբավ երկիր, և կարողանա հարևաններին առաջադրել լուծումներ, որոնք կբերեն մնայուն խաղաղության և տարածաշրջանի բարգավաճման: Մինչև այդ, մեր ջանքերը պետք է կենտրոնացած լինեն չեզոքացնելու այս հարևաններից եկող մարտահրավերները, պաշտպանելու մեր ազգային տարածքը և անվտանգությունը, և դիմակայելու այս հակամարտության հնարավոր սրացումներին:

Մեզ շրջապատող աշխարհը ևս լի է բուռն զարգացումներով՝ նոր աշխարհաքաղաքական ուժի կենտրոնների ձևավորում, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական հակասությունների շարունակական սրում, արմատական ուսմունքների առաջացում և տարածում, ֆինանսա-տնտեսական անկայունություն, մարդկանց աննախադեպ մեծ միգրացիոն հոսքեր, տեխնոլոգիական նոր ճեղքում և հանրային կյանքի համաշխարհայնացում: Այս իրավիճակը Հայաստանի ու հայության համար ստեղծում է լուրջ վտանգներ, բայց և բացում է մեծ հնարավորություններ, որոնցից մենք կկարողանանք օգտվել, եթե ստեղծենք համապատասխան տեխնոլոգիական, կառավարչական և հումանիտար կարողություններ, և կարողանանք նախաձեռնող քաղաքականություն վարել մեզ համար գերակա ուղղություններով: Մասնավորապես, այս զարգացումները պետք է մեզ հնարավորություն տան հաղթահարել տարածաշրջանային մեկուսացումը, և գլոբալացնել Հայաստանի տնտեսական և անվտանգային կապերը, դրանով չեզոքացնելով մեր անմիջական երկու հարևանի թշնամական նկրտումները:

Այս համատեքստում, Հայաստանը պետք է շարունակի զարգացնել ռազմավարական գործընկերությունը Ռուսաստանի հետ, արդյունավետ ռազմավարական համագործակցություն կառուցի աշխարհաքաղաքական մյուս հիմնական կենտրոնների՝ Եվրոպական Միության, ԱՄՆ և Չինաստանի, ինչպես նաև երկու խոշոր տերությունների՝ Իրանի և Հնդկաստանի հետ, և հետևողականորեն զարգացնի փոխշահավետ համագործակցությունը տարածաշրջանի և աշխարհի բոլոր բարեկամաբար տրամադրված երկրների հետ: Հայաստանը շարունակաբար պետք է փորձի համադրել համաշխարհային և տարածաշրջանային տերությունների շահերը իր համար կենսական կամ կարևոր նշանակություն ունեցող խնդիրներում՝ հնարավորինս ձգտելով փոխշահավետ գործակցության: Ընդ որում, որևէ երկրի կամ միջպետական կառույցի հետ համագործակցությունը պետք է համապատասխանեցվի մեր ազգային շահերին և չխանգարի նաև այլ գործընկերների հետ կապերի զարգացմանը: Այն դեպքերում, երբ Հայաստանի տարբեր գործընկերների միջև աշխարհաքաղաքական լարվածություն է առաջանում, Հայաստանը ձգտելու հավասարակշռված մոտեցում որդեգրել, իր սկզբունքային դիրքորոշմամբ և հաշվարկված գործողություններով նաև փորձելով նպաստել այդ լարվածության հնարավոր թուլացմանը:

Հայաստանը պետք է պաշտպանի իր քաղաքացիների և հավաքական ազգային շահերը աշխարհի բոլոր մասերում, և միաժամանակ գործուն խրախուսի հայրենադարձությունը և հայազգի անձանց կողմից Հայաստանի քաղաքացիության ձեռքբերումը: Հայաստանը Հայ ազգի ինքնության, կենսագործունեության և առավելագույն ինքնաարտահայտման կենտրոնը պետք է դառնա, Հայաստանի ցանկացած քաղաքացի, Հայաստանի պաշտպանությունը հայցող հայազգի անձ, աշխարհի ցանկացած կետում պետք է իրեն պաշտպանված զգա հայկական պետության կողմից: Միևնույն ժամանակ, Հայաստանը իր արտաքին քաղաքականությամբ պետք է նպաստի տարածաշրջանային անվտանգության ամրապնդմանը, ակտիվորեն մասնակցի միջազգային խաղաղապահ առաքելություններին, հանդիսանալով վստահելի «անվտանգության արտահանող» և կայուն խաղաղություն պարտադրող գործոն:

Հայաստանի արտաքին քաղաքականության արդյունավետ իրականացումը պահանջելու է դիվանագիտական ծառայության կադրային և նյութական բազայի ամրապնդում, աշխարհի տարբեր երկրներում գործող հայկական կառույցների հետ ռազմավարական փոխգործակցության արդյունավետության բարձրացում, համատեղ լոբբիստական կարողությունների ընդարձակում և օրակարգի փոխհամաձայնեցում: Սա կպահանջի նաև դիվանագիտական ծառայության առավելագույն ապաքաղաքականացում՝ զերծ պահելու այն ներքաղաքական վայրիվերումներից և կադրային հաճախակի փոփոխություններից: Հեռանկարում, արտաքին հարաբերությունների իրականացման համար պետք է հատկացվի ՀՆԱ առնվազն 0,5%, սա թույլ կտա այս ոլորտ ներգրավել լավագույն մասնագետներին, և բարձրացնել արտասահմանում գործող պետական հաստատությունների ընդհանուր կարողությունները և արդյունավետությունը, ներառյալ երկիր ներդրումների ներգրվման մասով:

Հաշվի առնելով աշխարհաքաղաքական տարբեր կենտրոնների, նրանց դաշինքների, և տարբեր երկրների հետ առկա հարաբերությունների առանձնահատկությունները, Հայաստանի արտաքին քաղաքականությունը յուրաքանչյուր ուղղությամբ ևս պետք է լինի տարբերակված և նախաձեռնող: Ստորև ներկայացված են յուրաքանչյուր առանցքային ուղղությամբ Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուրվագծերը:

Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի Դաշնությունը տարածաշրջանի հզորագույն տերությունն է, ինչպես նաև պատմականորեն Հայաստանի կարևորագույն արտաքին գործընկերը, և ներկայումս էլ մենք գտնվում ենք երկու կարևոր միջպետական կառույցի՝ ԵԱՏՄ և ՀԱՊԿ կազմում: ՌԴ տարածքում բնակվում են երկու միլիոնից ավել հայ, որից մոտ կես միլիոնը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ: ՌԴ ընկերությունները խոշորագույն ներդրողներն են Հայաստանի ենթակառուցվածքային ոլորտներում, միևնույն ժամանակ, ՌԴ հանդիսանում է Հայաստանից արտահանվող արտադրանքի և զբոսաշրջային ծառայությունների խոշորագույն շուկան: Ի հավելումն, Հայաստանի Հանրապետության տարածքում է գտնվում ՌԴ ռազմակայանը, և Թուրքիայի հետ սահմանի պաշտպանությունը իրականացվում է համատեղ ուժերով: Սա բերում է մեր երկու երկրների միջև սերտ հարաբերությունների, որոնք պետք է շարունակեն համընթաց զարգանալ:

Միևնույն ժամանակ, կարևոր է, որ այդ զարգացումները համապատասխանեն երկու երկրների իրական շահերին, և բերեն շոշափելի որակական փոփոխությունների: Անկախությունից ի վեր, Հայաստանի Հանրապետությունը տնտեսական զարգացման և անվտանգային համակարգի հասունության տեսանկյունից զգալիորեն հետ է մնում Ռուսաստանի Դաշնությունից, դա բացասաբար է անդրադառնում մեր երկրի անվտանգության վրա, և մինչ այժմ ուժեղացրել է միակողմանի կախվածությունը: Ռուսաստանի կոշտ հակադրությունը Հյուսիս-Ատլանտյան դաշինքին ևս լրացուցիչ խնդիրներ է ստեղծել Հայաստանի համար, քանի որ որպես Ռուսաստանի ռազմավարական դաշնակից, Հայաստանն անուղղակիորեն ներքաշված է այս հակադրության մեջ, և դա բացասաբար է անդրադարձել հավասարակշռված քաղաքականություն վարելու Հայաստանի հնարավորությունների վրա:

Ռազմավարական գործընկերությունը ենթադրում է սակայն, որ երկրները նպաստում են փոխադարձ անվտանգության ապահովմանը և տնտեսական զարգացմանը: Դա, մասնավորապես նշանակում է, որ Հայաստանը պետք է հնարավորություն ունենա առանց խոչընդոտների դիվերսիֆիկացնել իր էներգետիկ աղբյուրները, համագործակցությունը երկու երկրների միջև պետք է հնարավորություն տա արագացված տեմպերով արդիականացնել Հայաստանի տնտեսությունը, ներառյալ մեր ռազմարդյունաբերական համալիրը: Հեռանկարում, Հայաստանը պետք է դառնա Ռուսաստանի և տարածաշրջանի այլ երկրների տնտեսական համագործակցության բարենպաստ հարթակ, և դրանով

նորարական լուծումների հոսք ապահովի արդեն հենց Ռուսաստանի զարգացման համար: Անվտանգության ոլորտում, երկու երկրները պետք է նոր մակարդակի բարձրացնեն իրենց համագործակցությունը՝ մի կողմից, Հայաստանը պետք է կարողանա արտոնյալ պայմաններով նորագույն սպառազինություններ ձեռք բերել Ռուսաստանի Դաշնությունից, սեփական զինված ուժերը արդիականացնելու և տարածաշրջանում անվտանգության համատեղ ապահովման նպատակով, մյուս կողմից պետք է գործուն աջակցի Ռուսաստանին՝ նրա հարավային անկայուն սահմաններում անվտանգության ընդհանուր կառուցակարգի ապահովման գերխնդրում, այսպիսով դառնալով տարածաշրջանային անվտանգության ազդեցիկ գործոն: Այս խնդիրների լուծման համար գործող միջպետական կառույցները կարող են լրացուցիչ հարթակ ապահովել, և Հայաստանը պետք է ակտիվ մասնակցություն ունենա դրանց շրջանակներում երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացմանը:

Եվրոպական Միություն

Եվրոպական Միությունը ներկայումս իր կարևորությամբ Հայաստանի երկրորդ խոշոր արտաքին գործընկերն է: Այն աշխարհի խոշորագույն միասնական շուկան է, և Հարավային Կովկասում իրականացնում է ակտիվ քաղաքականություն Արևելյան գործընկերության և այլ նախաձեռնությունների միջոցով: ԵՄ հետ մեր հարաբերությունները խարսխվում են 2017 թ. կնքված առանցքային ՀՏՀՊ պայմանագրի վրա, որը համագործակցության լայն դաշտ է բացում ԵՄ և Հայաստանի միջև: Ուստի Հայաստանի հարաբերությունները ԵՄ հետ պետք է հիմնված լինեն քաղաքակրթական միևնույն տիրույթում գտնվելու, հիմնարար արժեքների հանդեպ փոխադարձ հարգանքի, պատմական կապերի վերահիմաստավորման և տնտեսական, քաղաքական, տարածաշրջանային շահերի համադրման սկզբունքների վրա: Կարևոր է նաև փոխադարձ շահերի գիտակցումը և երկուստեք կոմունիկացիան:

ԵՄ-ն Հայաստանի համար պետք է դառնա տնտեսական առանցքային գործընկեր՝ ելնելով մի շարք ոլորտներում արտադրության և ծառայությունների մատուցման (գյուղատնտեսական արտադրանք, բարձր տեխնոլոգիաներ, ֆինանսական և պրոֆեսիոնալ ծառայություններ և այլն) մրցակցային առավելություններից և որակ/գին լավագույն հարաբերակցությունից: Հայաստանը ԵՄ-ից պետք է յուրացնի լավագույն փորձը և ստանդարտները՝ հասնելու ապրանքների և ծառայությունների եվրոպական շուկաներում ընդունելի որակին և հեշտացնելու դրանց արտահանումն ու իրացումը: Բացի դրանից, եվրոպական չափանիշները մարդու իրավունքների պաշտպանության, դատական համակարգի, կրթական և առողջապահական ոլորտներում, պետք է ներդրվեն հայաստանյան բարեփոխումների հիմքում, հաշվի առնելով սակայն մեր ազգային առանձնահատկությունները:

Իր հերթին, Հայաստանը արդյունավետ կամրջի դեր պետք է խաղա ԵՄ-Մերձավոր Արևելք և ԵՄ-Ռուսաստան հարաբերություններում՝ թե՛ աշխարհագրական, թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական իմաստով: Աշխարհագրական բարենպաստ դիրքը Արևմուտքի և Արևելքի միջև պետք է հնարավորություն ընձեռի ԵՄ տուրիստական և առևտրային հոսքերի տարանցել դեպի այնպիսի շուկաներ, ինչպիսին են Իրանը, Հնդկաստանը, Չինաստանը, և այլն: Մյուս կողմից, Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին կարող է բարենպաստ հարթակ հանդիսանալ ԵՄ-Ռուսաստան համագործակցության համար՝ ապահովելով թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական երկխոսության բարենպաստ միջավայր:

Այս փոխշահավետ համագործակցությանը հասնելու համար ՀՀ-ն պետք է թե՛ քաղաքական և թե՛ դիվանագիտական առումով արդյունավետ համագործակցի ԵՄ օրենսդիր (Եվրախորհրդարան) և գործադիր (Եվրոպական հանձնաժողով) մարմինների, ինչպես նաև Եվրոպական այլ կառույցների հետ, ինչպիսին են Եվրոպական խորհուրդը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և այլն: Մասնավորապես, կարևոր առաջնահերթություններ են ՀՏՀՊ վավերացումը և կյանքի կոչումը, մուտքի արտոնագրերի ազատականացումը, շարունակական բարեփոխումները դատական, կրթական,

առողջապահական և իրավապահ համակարգերում՝ դրանց ԵՄ ստանդարտների համապատասխանության համար: Կարևոր են նաև տնտեսական համագործակցությունը և եվրոպական ընկերությունների կողմից Հայաստանի հանդեպ ներդրումային հետաքրքրության խթանումը:

Ի հավելումն, Եվրամիության հետ ինստիտուցիոնալ հարաբերությունների, խիստ կարևոր են երկկողմանի հարաբերությունները ԵՄ անդամ առանցքային երկրների հետ, մասնավորապես, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի (չնայած սպասվելիք ԵՄ կազմից դուրս գալուն), Լեհաստանի, Հունաստանի, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի մի քանի այլ երկրների հետ, հաշվի առնելով այս երկրներից յուրաքանչյուրի ներկայությունը և ակտիվ քաղաքականությունը մեր տարածաշրջանում: Հայաստանը պետք է այս երկրներից յուրաքանչյուրում ընդարձակի իր դիվանագիտական ներկայությունը, անմիջական կապեր հաստատի ազդեցիկ քաղաքական ուժերի հետ, կայուն ավիացիոն հաղորդակցություն հաստատի առնվազն բոլոր մայրաքաղաքների հետ, և խթանի ներդրումային, առևտրային և զբոսաշրջային երկկողմանի հոսքերը: Անվտանգության բնագավառում, այս երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության ընդլայնման զգալի ներուժ կա, որը Հայաստանը պետք է հետևողականորեն իրացնի՝ արդիականացնելով սեփական զինված ուժերը, մասնակցելով բազմազգ խաղաղարար առաքելություններին, և նաև ինտեգրելով սեփական ռազմարդյունաբերությունը եվրոպական արժեքային շղթաների հետ:

ԱՄՆ

Ամերիկայի միացյալ նահանգները աշխարհի հզորագույն տերությունն է՝ խոշորագույն զարգացած տնտեսությամբ, և մնացած բոլոր երկրներին գերազանցող ռազմական կարողություններով: ԱՄՆ միակ տերությունն է, որ ակտիվորեն ներկա է աշխարհի բոլոր տարածաշրջաններում, և վարում է նախաձեռնողական քաղաքականություն՝ պաշտպանելով և առաջ մղելով իր և իր դաշնակիցների շահերը: ԱՄՆ-ը ՌԴ-ից հետո հայազգի բնակչությամբ երկրորդ մեծ երկիրն է, այնտեղ բնակվում է մեկ միլիոնից ավել հայ, որոնցից մոտ հարյուր հազարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են: ԱՄՆ Հայաստանի անկախությունից ի վեր շոշափելի ամենամյա օժանդակություն է հատկացրել Հայաստանին, ներառյալ Արցախը, և իր ռազմավարական ներկայությամբ կայունացնող դեր ունեցել տարածաշրջանում: Միևնույն ժամանակ, ԱՄՆ հակասությունների սրումը Հայաստանի ավանդական գործընկերների հետ, անբարենպաստ է անդրադառնում Հայաստանի քաղաքացիների վրա, խոչընդոտում է տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացներին, և Հայաստանին կանգնեցնում է բարդ ընտրության առջև: ԱՄՆ դեպքում, կախված իշխանության մեջ հանրապետական կամ դեմոկրատական թևի գերակայությունից, տարածաշրջանային քաղաքականությունը պարբերաբար կարող է նաև շոշափելի փոփոխություններ կրել, լրացուցիչ բարդություններ ստեղծելով Հայաստանի համար:

Վերջին տասնամյակի ընթացքում, ԱՄՆ տնտեսական ներկայությունը Հայաստանում շոշափելիորեն ընդլայնվել է, դա պայմանավորված է բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացմամբ, որտեղ ամերիկյան ընկերությունները խոշորագույն ներդրողներն են: Հայաստանի շահերից է բխում ԱՄՆ հետ տնտեսական համագործակցության հետագա ընդլայնումը, մասնավորապես, բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Հեռանկարում, Հայաստանը պետք է դառնա բարենպաստ հարթակ ամերիկյան այն ընկերությունների համար, որոնք աշխատում են տարածաշրջանում, և կարիք ունեն հուսալի և որակյալ տեղական բազայի, սա լրացուցիչ կամրջակն դի մեր երկկողմանի կապերը: Կարևոր է նաև ամերիկյան (ներառյալ ամերիկահայ) ներդրողների ակտիվ ներգրավումը Հայաստանի տնտեսության այլ ճյուղերի զարգացման մեջ, ԱՄՆ հետ ուղիղ ավիացիոն հաղորդակցության հաստատումը, և ամերիկյան համալսարանների և գիտա-հետազոտական կենտրոնների հետ համագործակցության զարգացումը:

Անվտանգության ոլորտում, պետք է ընդլայնվեն համատեղ այն ծրագրերը (ներառյալ Հյուսիսատլանտյան դաշինքի հետ), որոնք ուղղված են ընդարձակ տարածաշրջանում անվտանգության մակարդակի բարձրացմանը, առկա բազմաթիվ կոնֆլիկտների լուծմանը կամ մեղմմանը: Մասնավորապես, Հայաստանը պետք է շարունակի մասնակցել համատեղ խաղարար առաքելություններին և ԱՄՆ հետ ռազմական փորձի փոխանակմանը, ընդարձակի ռազմարդյունաբերական համագործակցությունը այն ոլորտներում, որտեղ ԱՄՆ-ն հանդիսանում է ընդգծված առաջատար, և աջակցի այն առաքելություններում, որոնք հստակ համապատասխանում են մեր սեփական ազգային շահերին և ուղղված չեն մեր դաշնակիցների և գործընկերների դեմ: Այն հարցերում, որտեղ ԱՄՆ և Հայաստանի ռազմավարական շահերը չեն համընկնում, Հայաստանը առաջնորդվելու է իր ազգային շահով, միևնույն ժամանակ մշտապես կառուցողական երկխոսություն պահպանելով ամերիկյան կողմի հետ, և փորձելով փոխադարձ ընդունելի լուծումներ գտնել:

Չինաստան

Չինաստանը արագ բարձրացող հզոր աշխարհաքաղաքական բևեռ է, և աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսությունը: Չինաստանը պատմականորեն հայտնի է արտաքին խաղաղասիրական քաղաքականությամբ, և ներկայումս առանցքային դերակատար է դառնում տարածաշրջանի երկրների խաղաղ գոյակցության և տնտեսական զարգացման գործում: Չինաստանը ձգտում է իր շուրջ ձևավորել անվտանգության նոր կառուցակարգ, որի հիմքում կայուն խաղաղությունն է և տարանցիկ առևտուրը, այս իմաստով նրա շահերը որոշակիորեն տարբերվում են այլ աշխարհաքաղաքական կենտրոնների շահերից, որոնք մեր տարածաշրջանը պատմականորեն դիտարկել են սեփական ազդեցության գոտիների բաժանման պրիզմայով: Չինաստանը նաև, լինելով նոր խաղացող մեր տարածաշրջանում, առավել հակված է իր շահերը առաջ մղել՝ հարգելով կողմերի իրավահավասարության սկզբունքը, և փոխշահավետ լուծումներ առաջարկելով:

Հայ-չինական հարաբերությունները գալիս են դարերի խորքից, և ներկայումս արագ զարգացող Չինաստանը կարող է դառնալ Հայաստանի ռազմավարական նոր գործընկերը, հաշվի առնելով շահերի հնարավոր ընդհանրությունը տարբեր բնագավառներում: Հայաստանի համար կարևոր է զարգացնել այդ գործընկերությունը, և այն լցնել իրական բովանդակությամբ: Մասնավորապես, Հայաստանը պետք է ձգտի ակտիվորեն ներգրավվել Չինաստանի և Եվրոպայի միջև տարանցիկ առևտրի գոտի ստեղծելու ծրագրերին, դրան ծառայեցնելով Հյուսիս-հարավ մայրուղին, ինչպես նաև զարգացնի օդային հաղորդակցության տարանցիկ հանգույց դառնալու հնարավորությունները: Հայաստանը նաև պետք է ակտիվորեն զարգացնի առևտրային և զբոսաշրջային հարաբերությունները Չինաստանի հետ, օգտվելով նրա հսկայական և արագ աճող շուկայից:

Տնտեսական կապերին զուգահեռ, Հայաստանը պետք է զարգացնի Չինաստանի հետ նաև ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցությունը և օգտագործի այն ինչպես սեփական պաշտպանական կարողությունները ընդլայնելու, այնպես էլ ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանման ընդլայնման նպատակով: Իր հերթին, Չինաստանը, ի դեմս Հայաստանի տարածաշրջանում պետք է ստանա վստահելի գործընկեր, որը ակտիվորեն նպաստում է տարածաշրջանային կայունությանը, և նրա տարածքով տարանցիկ առևտրի ծավալմանը:

Իրան

Իրանը հանդիսանում է մերձավորարևելյան տարածաշրջանի առաջատար տերություններից մեկը, և տարածաշրջանի անվտանգության համակարգում կարևոր կարգավորող դեր և ազդեցություն ունի: Հայաստանն ունի հարուստ պատմություն Իրանի հետ քաղաքական, ռազմական, առևտրատնտեսական և մշակութային ոլորտներում

նախաքրիստոնեական ժամանակներից սկսած, մասնավորապես մեր մշակութային ընդհանրությունները բացառիկ են՝ երկրների տարբեր կրոնական պատկանելիության համատեքստում: Իրանում բնակվում է նաև լավ կազմակերպված և Հայաստանի հետ սերտորեն կապված հայկական համայնք, որը կարևոր կապող օղակ է հանդիսանում մեր երկրների միջև: Իրանը հանդիսանում է նաև ՀՀ համար կարևոր շուկա, տարանցիկ դարպաս դեպի Մերձավոր Արևելք և Պարսից ծոցի երկրներ, իսկ հեռանկարում նաև՝ դեպի Չինաստան և Հեռավոր Արևելք: Վերջապես, Իրանն ունի պատմականորեն ձևավորված կարևոր ազդեցություն արցախյան հիմնախնդրի կարգավորման վրա, և այդ ազդեցությունը հավասարակշռող դեր է խաղացել տարածաշրջանում:

ՀՀ-Իրան հարաբերությունները ունեն զարգացման զգալի պոտենցիալ միջպետական հարաբերությունների բազմաթիվ ուղղություններով: Մասնավորապես, Իրանի հետ տրանսպորտային և կոմունիկացիոն բնագավառների զարգացումը հնարավորություն է կտա թուլացնել մեզ ոչ բարեկամ երկրների կողմից պարտադրված, ազգային անվտանգությանը սպառնող շրջափակումը, դառնալով նաև մաս Չինաստան-Եվրոպա տարանցիկ ճանապարհի: Իրանի և ԵԱՏՄ միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքումը հնարավորություն կտա կտրուկ նվազեցնել մաքսային սահմանափակումները, և ընդարձակել երկկողմանի շահավետ առևտուրը և զբոսաշրջային հոսքերը: Վերջապես, Հայաստանը պետք է շարունակի ընդլայնել էներգետիկ համագործակցությունը Իրանի հետ, դիտարկելով այն որպես սեփական էներգետիկ անվտանգությունը բարձրացնելու, և էներգակիրների մատակարարման աղբյուրները դիվերսիֆիկացնելու կարևորագույն լծակ:

ՀՀ-Իրան հարաբերությունների զարգացումը կնպաստի մերձավորարևելյան տարածաշրջանում կայունության և անվտանգության ամրապնդմանը: Մասնավորապես, Հայաստանը ունակ է Իրան-Արևմուտք բարդ հարաբերությունների շառավղում իր բազմաշերտ քաղաքականության շնորհիվ դառնալ քաղաքակրթական երկխոսության հարթակ, ուր հնարավոր կլինի համադրելով պետության արտաքին շահերը արևմտյան և իրանական վեկտորների հետ, լավագույնս ապահովել Հայաստանի Հանրապետության առաջնահերթ և հեռակա ռազմավարական ծրագրերի իրագործումը, սա սակայն պահանջելու է խիստ նախաձեռնողական քաղաքականություն և ճկուն դիվանագիտություն: Զուգահեռ, Հայաստանը պետք է ընդլայնի ռազմատեխնիկական փոխշահավետ համագործակցությունը Իրանի հետ, ինչպես ձեռք բերելով արդիական լուծումներ, այնպես էլ առաջարկելով դրանք այն ոլորտներում, որում ունի մրցակցային առավելություն: Հաշվի առնելով ԱՄՆ և Իրանի միջև հարաբերությունների պարբերական սրումը, այս ամենի իրագործումը պահանջելու է Հայաստանից քաղաքական և դիվանագիտական ճկունություն, սեփական ազգային շահի հստակ գիտակցություն, և ոչ ստանդարտ լուծումներ:

Հնդկաստան

Հնդկաստանը բնակչության թվով աշխարհի երկրորդ մեծ պետությունն է, արագ աճող տնտեսությամբ, և ընդլայնվող աշխարհաքաղաքական հավակնություններով: Հայ-հնդկական հարբերությունները, իրենց հերթին, բազմադարյա պատմություն ունեն, սկսած էթնիկ ընդհանրություններից, և վերջացրած հայության ունեցած կարևոր դերակատարմամբ՝ ուշ միջնադարում Հնդկաստանից Եվրոպա տարանցիկ առևտուր կազմակերպելու գործում: Վերջին տասնամյակների ընթացքում էլ, երկու երկրների միջև կապերը զարգանում էին, մասնավորապես, բարձր տեխնոլոգիաների ոլորտում և կրթության ոլորտում: Հայաստանը ավանդաբար հյուրընկալում է մի քանի հազար հնդիկ ուսանողի՝ տարբեր բնագավառներում: Վերջապես, Հնդկաստան-Պակիստան հակամարտության և Պակիստան-Ադրբեջան ռազմավարական դաշինքի ֆոնին, Հնդկաստանը դարձել է նաև Հայաստանի համար կարևոր գործընկեր միջազգային կազմակերպություններում:

Հայաստանի համար կարևոր է զարգացնել Հնդկաստանի հետ ռազմավարական գործընկերությունը, և ընդլայնել այն, հաշվի առնելով նաև Հնդկաստանի մեծացող դերը

տարածաշրջանում: Մասնավորապես, Հայաստանը պետք է ուղիղ ավիացիոն հաղորդակցություն ապահովի Հնդկաստանի խոշոր կենտրոնների հետ, աշխատի փոխադարձ զբոսաշրջային հոսքերը ընդլայնելու ուղղությամբ, և շարունակի բարձր տեխնոլոգիական ոլորտում համագործակցությունը: Հայաստանը պետք է ակտիվորեն ներգրավվի նաև Եվրոպայի և Հնդկաստանի միջև տարանցիկ առևտրի և ավիացիոն հաղորդակցության զարգացմանը, հաշվի առնելով Երևանի բարենպաստ աշխարհագրական դիրքը: Հաշվի առնելով սակայն, Հնդկաստանից աղքատ բնակչության ներհոսքի բարձր տեմպերը, Հայաստանը պետք է կանոնակարգի մուտքի և աշխատանքի արտոնագրերի տրամադրման կարգը, խուսափելու աշխատանքային միգրանտների անկառավարելի հոսքերից:

Տնտեսական կապերին զուգահեռ, Հայաստանը պետք է զարգացնի Հնդկաստանի հետ նաև ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցությունը և օգտագործի այն ինչպես սեփական պաշտպանական կարողությունները ընդլայնելու, այնպես էլ հեռանկարում ռազմարդյունաբերական կարողությունների ընդլայնման և արտադրանքի արտահանման աճի նպատակով: Իր հերթին, Հնդկաստանը ի դեմս Հայաստանի պետք է ստանա վստահելի գործընկեր, որը կաջակցի Հնդկաստանին միջազգային ատյաններում:

Թուրքիա

Թուրքիան ևս հանդիսանում է մերձավորարևելյան տարածաշրջանի խոշորագույն տերություններից մեկը, և պատմականորեն առավել ազդեցիկ աշխարհաքաղաքական խաղացողն է: Օսմանյան կայսրության ձևավորումից և ծավալումից ի վեր, հայության գերակշիռ մասը բնակվել է նրա տարածքում, սակայն 19-րդ դարի կեսերից սկսած, հարաբերությունները աստիճանաբար քայքայվող կայսրության և նրա տարածքում բնակվող հայ բնակչության միջև սկսեցին սրվել, միջազգային հարաբերությունների օրակարգում ի հայտ եկավ Հայկական հարցը: Օսմանյան կայսրության փլուզման շրջանում Հայկական հարցի լուծման ձախողման, նրա հայաբնակ նահանգների ապագաղութացման փոխարեն դրանց տարածքում կայսրության կառավարության կողմից հայ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպանության և հայրենազրկման արդյունքում, վերջին հարյուրամյակի ընթացքում կայսրության իրավահաջորդ Թուրքիան և հայ ժողովուրդը գտնվում են շարունակական դիմակայության մեջ: Խորհրդային Հայաստանի անկախացումից ի վեր, հայ-թուրքական հակամարտությունը նորաստեղծ Հայաստանի Հանրապետության վրա կախված առավել լուրջ անվտանգային մարտահրավերն է, որն ամեն պահ կարող է էքզիստենցիալ վտանգներ ստեղծել Հանրապետության և նրա տարածքում բնակվող հայ ազգի հիմնական հատվածի համար:

Հայ-թուրքական հակամարտությունը չունի արագ լուծում, քանի որ հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնումը կտրականապես մերժվում է արդի Թուրքիայի Հանրապետության քաղաքական վերնախավի կողմից: Ավելին, Թուրքիան շարունակում է ուժային շանտաժի ենթարկել Հայաստանի Հանրապետությանը, ակնկալելով, որ Հայաստանը կհրաժարվի այդ իրավունքների հետապնդումից, և պատրաստ կլինի համակերպվել առկա իրողություններին: Այս պայմաններում սակայն, հայ ժողովուրդը փաստացի պետք է հրաժարվի իր պատմական հայրենիքում հավաքական կենսագործունեության նույնիսկ հեռավոր հեռանկարից, դատապարտելով իրեն դանդաղ տարալուծման: Միևնույն ժամանակ, Թուրքիայի Հանրապետության ռազմա-տնտեսական և ժողովրդագրական հզորությունը ընթացիկ շրջանում անհավանական են դարձնում նրա հետ անմիջական ուժային դիմակայության հեռանկարը, ուստի Հայաստանի Հանրապետությունը պետք է պատրաստ լինի երկարատև պայքարի՝ այս հակամարտության հայանպաստ կամ գոնե մասամբ հայանպաստ լուծման հասնելու համար:

Հայ-թուրքական հակամարտության երկարաժամկետ լուծումը, առնվազն, ենթադրում է, որ Հայաստանի Հանարապետության պաշտպանական և դիվանագիտական ներուժը

շարունակաբար ընդլայնվում է, և երաշխավորում է, որ Թուրքիան երբևէ գայթակղություն չի ունենա Հայաստանի հետ առկա հակամարտությունը տեղափոխել բացահայտ ռազմական տիրույթ: Այդ պայմաններում, Հայաստանի Հանրապետությունը չպետք է Թուրքիայի հետ որևէ համապարփակ կարգավորման պայմանագիր կնքի, որով այն կճանաչի Թուրքիայի և Խորհրդային Հայաստանիի միջև ձևավորված դե-ֆակտո սահմանները՝ որպես նոր-հայ թուրքական պետական սահման, և կամ էլ բացի Հայաստանի Հանրապետության տարածքը՝ թուրքական ապրանքների և կապիտալի ներթափանցման համար՝ առանց Թուրքիայի կողմից համարժեք զիջումներ ստանալու:

Հայաստանի Հանրապետությունը, համապատասխան իրավական և քաղաքական պատրաստությունից հետո, պետք է սփյուռքի հայության հիմնական կազմակերպված ուժերի հետ համատեղ, նախաձեռնի երկարաժամկետ գործընթաց, որով պետք է ստանձնի հայ ժողովրդի ոտնհարված իրավունքների վերականգման հավաքական պատասխանատվությունը և այս խնդիրը սկսի հետևողականորեն բարձրացնել պատկան միջազգային ատյաններում (ՄԱԿ, Արդարադատության միջազգային դատարան, այլ երկրների խորհրդարաններ): Ժամանակի ընթացքում, սա պետք է ձևավորի հայ-թուրքական միջպետական երկխոսության նոր օրակարգ, որի հիմքում հայ ժողովրդի ոտնհարված իրավունքների համար Թուրքիայի Հանրապետության կողմից, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, հատուցման տրամադրումն է: Հայաստանի և Թուրքիայի Հանրապետությունների միջև համապարփակ կարգավորման պայմանագիր պետք է կնքվի միայն այն պայմաններում, երբ Թուրքիայի Հանրապետությունը առարկայական փոխհատուցում տրամադրի հայ ժողովրդին, և այն ընդունվի մեր աշխարհասփյուռ ժողովրդի ակտիվ մեծամասնության կողմից՝ որպես առկա պատմական պայմաններում համարժեք, և հայության հավաքական շահերին համապատասխանող լուծում: Սա կարող է հիմք հանդիսանալ՝ պատմական հաշտեցման, տարածաշրջանում կայուն խաղաղության, Հայաստանի և Թուրքայի միջև լիարժեք միջպետական հարաբերությունների վերականգման համար:

Վրաստան

Վրաստանի հետ հարաբերությունները հատուկ կարևորություն ունեն մեզ համար, հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը, և պատմական խորն ընդհանրությունները: Վրաստանը Հայաստանի տարանցիկ առևտրի հիմանական դարպասն է, այնտեղ է ապրում է խոշոր և Հայաստանի հետ սերտորեն կապված հայկական համայնք, և մեր երկրների տնտեսությունները բազմաթիվ ընդհանրություններ ունեն: Հայաստանը և Վրաստանը, լինելով հարևան և բարեկամ երկրներ, փաստացի սակայն տարբեր աշխարհաքաղաքական կողմնորոշում ունեն: Թե տնտեսական համագործակցության, և թե տարածաշրջանային անվտանգության տեսակետից, սա բազմապիսի խնդիրներ է ծնում, և կարող է էլ ավելի բարդանալ, եթե Վրաստանը երբևէ պաշտոնապես անդամակցի Հյուսիս-Ատլանտյան դաշինքին: Հայաստանը պետք է պատրաստ լինի հնարավոր այսպիսի զարգացանը, և հետևողականորեն ձգտի բարելավել երկկողմանի հարաբերությունները Վրաստանի հետ, սա պահանջելու է քաղաքական ճկունություն, և բարդ վիճակներում մանևրելու կարողություն:

Հայաստանը, մասնավորապես, պետք է ձգտի Վրաստանի և նրա ինքնավար կազմավորումների հետ համատեղ աշխատելով, հասնել դեպի ՌԴ տանող ռազմավարական ճանապարհների ապաշրջափակման և դարձնել դրանք տարանցիկ առևտրի և համագործակցության գոտիներ: Զուգահեռ, Հայաստանը, Վրաստանի հետ համագործակցելով, պետք է ներդրումներ իրականացնի Վրաստանի հայաբնակ շրջաններում, դիտարկելով դրանք որպես կապող օղակ՝ երկու երկրների միջև, նույնը հնարավոր է նաև Վրաստանի կողմից՝ նրան հարող Հայաստանի հյուսիսային շրջաններում: Ոչ վերջին հերթին, Հայաստանը պետք է նախաձեռնի Վրաստանի հետ համատեղ միասնական տուրիստական գոտու ստեղծումը, սա բխում է երկու երկրների շահերից, և կպահանջի համատեղ նոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացում՝ դյուրացնելու երկու երկրների միջև հաղորդակցությունը:

Ադրբեջան

Ադրբեջանը մեր հարևան չորս երկրից մեկն է, որի հետ հակամարտությունը շարունակվում է արդեն ավելի քան հարյուր տարի և մինչև հիմա էլ չի գտել իր խելամիտ հանգուցալուծումը: Հայ-ադրբեջանական հակամարտությունը և այսօր դրա հիմնական բաղադրիչ հանդիսացող Արցախի հիմնախնդիրը առաջացել է 1920 թ. Հայաստանի Հանրապետության բռնազավթման և նրա տարածքի անդամահատման արդյունքում: Հայ-ադրբեջանական հակամարտության հայանպաստ և արդարացի լուծումը Հայ ժողովրդի կենսական իրավունքների վերականգնման կարևորագույն բաղկացուցիչ է, ինչպես նաև Հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքացիների ապագա կենսագործունեության, զարգացման և առաջընթացի համար անհրաժեշտ պայման: Այն նախկին ԼՂԻՄ-ի ինքնորոշման հարցով սահմանափակելը աղավաղում է հարցի էությունը, հաշվի առնելով Ադրբեջանի իշխանության ծավալապաշտական նկրտումները, և Հայաստանի Հանրապետության բուն գոյության հանդեպ բազմիցս հնչեցրած սպառնալիքները:

Հայ-ադրբեջանական հակամարտության իրապես կայուն, երկարաժամկետ լուծումն այն է, որ Հայաստանը վերականգնի իր պետական գերիշխանությունը մեր պատմական Հայրենիքի այն տարածքների նկատմամբ, որոնք Խորհրդային Ադրբեջանին են օտարվել 1921 թվականի Մոսկվայի և Կարսի, միջազգային իրավունքի տեսակետից ապօրինի պայմանագրերով և այնուհետև էլ բոլշևիկյան իշխանության ապօրինի որոշումներով և դառնա այդ տարածքներում բնակվող բոլոր մարդկանց, անկախ ազգային պատկանելիությունից, անվտանգության և բարգավաճման երաշխավորը: Իր հերթին, սա նշանակում է, որ այսօրվա բանակցային օրակարգը ժամանակի ընթացքում պետք է փոխվի, հիմք ընդունելով այնպիսի ժամանակակից տարածքային սահմանազատումը, որը կերաշխավորի յուրաքանչյուր պետության կայուն անվտանգությունը, ճանապարհ կբացի քաղաքական և տնտեսական փոխշահավետ համագործակցության համար, և կբացառի հակամարտության հետագա շարունակումը:

Այսպիսի երկարաժամկետ լուծումը, իր հերթին, ենթադրում է, որ Հայաստանի Հանարապետության պաշտպանական ներուժը առնվազն չի զիջում Ադրբեջանի պաշտպանական ներուժին, և տարածաշրջանում գործող ընդհանուր միջազգային անվտանգային համակարգը, նրանում ներառված հիմնական ուժային կենտրոնները հանդիսանում են այդպիսի լուծման կոլեկտիվ երաշխավոր: Այսօր այդպիսի իրականություն դեռևս գոյություն չունի, սակայն այն ձևավորելը իրատեսական է երկարաժամկետ հեռանկարում՝ Հայաստանի արագանցիկ զարգացման պայմաններում, ուստի հայ-ադրբեջանական հակամարտության երկարաժամկետ և կայուն կարգավորումը իր հիմքում ունենալու է այդպիսի զարգացումը:

ԱՊՀ երկրներ

ԱՊՀ տարածաշրջանում Հայաստանի կարևոր գործընկերներն են Բելառուսը և Ղազախստանը, հեռանկարում այդպիսին կարող են դառնալ նաև Ուկրաինան և Ուզբեկստանը: Այս երկրների հետ մեզ կապում է պատմական անցյալը ընդհանուր Խորհրդային պետության, և մինչ այդ էլ Ռուսական կայսրության շրջանակներում, նրանց տարածքում միասին ապրում է մի քանի հարյուր հազար հայ, նրանց հետ կան բազմապիսի տնտեսական կապեր, իսկ Ղազախստանի և Բելառուսի հետ մենք գտնվում ենք նաև ընդհանուր անվտանգության կառույցի՝ ՀԱՊԿ կազմում: Մեր հարաբերությունները այս երկրների հետ, սակայն զերծ չեն հակասություններից և խնդիրներից՝ մասնավորապես, այս երկրներից տառացիորեն յուրաքանչյուրը ներկայումս ավելի սերտ տնտեսական և ռազմատեխնիկական համագործակցություն է ձևավորել Ադրբեջանի հետ, իսկ Ուկրաինայի հետ հարաբերություններում բացասական դեր է խաղում նաև այդ երկրի կոնֆլիկտը ՌԴ հետ, և Հայաստանի մինչ այժմ դրսևորած դիրքորոշումը այդ հարցում:

Բոլոր այս երկրների հետ կապված, Հայաստանի նպատակը պետք է լինի տնտեսական համագործակցության ընդլայնումը, և նախաձեռնողական դիվանագիտությունը՝ մեղմելու ներկայումս առաջացած հակասությունները: Կարևոր է նաև Ուկրաինայի և Բելառուսի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը՝ թե որպես միջոց դիվերսիֆիկացնելու մեր սպառազինության աղբյուրները, և թե որպես հակակշիռ՝ Ադրբեջանի հետ այս երկրների սերտ համագործակցությանը: Ղազախստանի դեպքում, Հայաստանը պետք է ձգտի նաև այդ երկրից ներդրումներ ներգրավել սեփական տնտեսության մեջ, և ընդլայնել զբոսաշրջային հոսքերը: Կարևոր է նաև ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության զարգացումը, համատեղ անվտանգային ծրագրերը, հակաահաբեկչական պայքարը՝ որպես միջոցներ սերտացնելու ընդհանուր համագործակցությունը:

Մերձավոր Արևելք

Մերձավոր Արևելքի տարածաշրջանը ավանդաբար գտնվում է Հայաստանի ազգային և պետական շահերի գոտում, այնպիսի երկրներ, ինչպիսին են Արաբական Միացյալ Էմիրությունները, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Եգիպտոսը, հանդիսանում են Հայաստանի կարևոր տնտեսական կան քաղաքական գործընկերներ, իսկ հարյուրամյակների պատմություն ունեցող հայկական սփյուռքի բավական բարձր ինտեգրված հատվածները լրացուցիչ կարևորում են այս երկրների հետ հարաբերությունները: Այս տարածաշրջանում է նաև Իսրայելը, որը թեև Հայաստանի հետ ունի հարաբերությունների հակասական պատմություն, արդեն իսկ ազդեցիկ և արագ զարգացող երկիր է, և պահանջում է առանձին մոտեցում:

Մերձավորարևելյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական քարտեզը գտնվում է դինամիկ և տուրբուլենտ փոփոխությունների դաշտում: Տարածաշրջանի երկրների մեծ մասը գտնվում է ակտիվ կամ պասիվ հակամարտության մեջ միմյանց հետ, ինչպես նաև ներգրավված է ավելի ընդարձակ աշխարհաքաղաքական հակամարտության ճամբարներում: Հիբրիդային պատերազմները՝տեղեկատվական, քարոզչական, տնտեսական և ռազմական ասպարեզներում, տարածաշրջանը դարձնում են պայթյունավտանգ ու հակասությունների թնջուկներով լեցուն: Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո ձևավորված տարածքային բաժանումը այժմ գտնվում է վերաձևվման փուլում, առաջանում են նոր ազգային կազմավորումներ՝մասնավորապես, Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարությունը, առաջիկայում այդպիսիք կարող են առաջանալ նաև Սիրիայի տարածքում, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ նաև Թուրքիայի:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղությունը պետք է լինի նախաձեռնող, բազմաշերտ, ճկուն և համադրական: Մասնավորապես, կարևոր ենք համարում լավ հաշվարկված, զգույշ քայլերով սկսել հարաբերությունների ձևավորումը տարածաշրջանի այն երկրների հետ, որոնք ավանդաբար աջակցել են Ադրբեջանին, բայց որոնց հետ կարող են առաջանալ շահերի նոր ընդհանրություններ՝ Հայաստանի զարգացմանը զուգընթաց, սա, մասնավորապես, վերաբերվում է Իսրայելին և Սաուդյան Արաբիային: Միևնույն ժամանակ, հարաբերությունները ավանդական գործընկերներ հետ պետք է շարունակեն զարգանալ և ընդլայնվել, թե տնտեսական, և թե ռազմա-քաղաքական ոլորտում: Նոր ձևավորվող քրդական ինքնավար կազմավորումների հետ Հայաստանը ևս պետք է սկսի հարաբերություններ զարգացնել, հեռանակարում դիտարկելով հնարավոր տարբեր ռազմավարական զարգացումները:

Իր առանցքում ունենալով Հայաստանի Հանրապետության և հայության կենսական շահերը և հեռահար ռազմավարական ծրագրերը՝ Հայաստանը պետք է ձևավորի նոր կերպար Մերձավոր Արևելքում՝ հանդես գալով որպես անվտանգության, խաղաղության և բնականոն զարգացման ջատագով, ակտիվ և նախաձեռնող սուբյեկտ, որը միջպետական, կրոնական, ռազմական հակամարտությունները տարածաշրջանում առավելագույնս

տրանսֆորմացնում է քաղաքակրթությունների համագործակցության և երկխոսության՝ ի շահ Հայաստանի և տարածաշրջանի երկրների բնականոն զարգացման և բարգավաճման: Հայաստանը նաև պետք է հանդես գա որպես հայության անվտանգության և կենսական շահերի պաշտպան այն դեպքերում, երբ դրանք վտանգված են, և համապատասխան պետությունները սեփական ուժերով ընդունակ չեն դա ապահովել: Զուգահեռ, Հայաստանը պետք է օգտագործի իր ներկայությունը և մարդկային պոտենցիալը՝ դառնալու տարածաշրջանի երկրների համար կրթական, առողջապահական, և բարձր տեխնոլոգիական կենտրոն:

Կանադա և Լատինական Ամերիկա

Հայաստանի համար առանձնակի կարևորություն է ներկայացնում հարաբերությունների զարգացումը Կանադայի հետ: Այս երկիրը աշխարհի խոշորագույն զարգացած տնտեսություններից մեկն է, և այնտեղ բնակվում է ստվարաթիվ և Հայաստանի հետ սերտ կապված հայկական համայնք: Հայաստանը պետք է դիտարկի Կանադան որպես բնական ռազմավարական գործընկերոջ, հետևողական սերտացնելով նրա հետ թե տնտեսական, և թե ռազմաքաղաքական կապերը, հեռանակարում նպատակահարմար է այս երկրի հայաշատ քաղաքներից մեկի (Թորոնթո կամ Մոնրեալ) հետ ուղիղ ավիացիոն հաղորդակցության հաստատումը, և զբոսաշրջային հոսքերի խթանումը, ինչպես նաև կանադական ներդրումների ներգրավումը տնտեսության մեջ:

Լատինական Ամերիկայի տարածաշրջանում, Հայաստանը պետք է կենտրոնանա երեք խոշորագույն պետության՝ Բրազիլիայի, Արգենտինայի ու նաեւ Մեքսիկայի հետ հարաբերությունների զարգացման վրա: Այս երկրների հետ հարաբերությունները հիմնականում պետք է կենտրոնանան տնտեսական համագործակցության ընդլայնման և Հայաստան օտարերկրյա ներդրումներ ներգրավման վրա: Արգենտինայի դեպքում, կարևոր է նաև հարաբերությունների զարգացումը տեղի հայ համայնքի հետ, և նրա աստիճանական ներգրավումը Հայաստանի հասարակական և տնտեսական զարգացմանը, օգտվելով արդեն առկա դրական փորձից: Հայաստանը այստեղ էլ պետք է ձգտի այս երկրների կապիտալը և ընկերություններին ներգրավել սեփական զարգացման ծրագրերում, և հանդիսանալ նրանց համար բարենպաստ հարթակ՝ տարածաշրջանում աշխատանքի համար:

Հեռավոր Արևելք և Հարավ-Արևելյան Ասիա

Հեռավոր Արևելքի և Հարավ-Արևելյան Ասիայի տարածաշրջանում, Հայաստանը պետք է կենտրոնանա չորս առավել զարգացած պետության՝ Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Ավստրալիայի և Սինգապուրի հետ հարաբերությունների զարգացման վրա, միաժամանակ ուշադրություն դարձնելով նաև այլ արագ զարգացող խոշոր երկրներին, ինչպիսիք են Ինդոնեզիան, Վիետնամը և Ֆիլիպինները: Այս երկրների հետ հարաբերությունները հիմնականում պետք է կենտրոնանան տնտեսական համագործակցության ընդլայնման, ավիացիոն հաղորդակցության հաստատման և զբոսաշրջային հոսքերի խթանման, տեխնոլոգիաների փոխանցման, Հայաստան օտարերկրյա ներդրումներ ներգրավման վրա: Ավստրալիայի դեպքում, կարևոր է նաև հարաբերությունների զարգացումը տեղի հայ համայնքի հետ, և նրա աստիճանական ներգրավումը Հայաստանի հասարակական և տնտեսական զարգացմանը: Հայաստանը, որպես դինամիկ զարգացող տնտեսություն և հասարակություն, պետք է ձգտի այս երկրների կապիտալը և ընկերություններին ներգրավել սեփական զարգացման ծրագրերում, և հանդիսանալ նրանց համար բարենպաստ հարթակ՝ տարածաշրջանում աշխատանքի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Հայկական Սփյուռքը դարեր ի վեր հանդիսանում է հայ ազգի գոյության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Այսօր, հայկական Սփյուռքի ներառում է աշխարհի 100-ից ավել երկրում բնակվող մոտ 6-7 մլն էթնիկ հայի, հազարավոր համայնքային, բարեգործական, կրթական և այլ կազմակերպություններ, հարյուրավոր եկեղեցիներ ու դպրոցներ: Մի շարք երկրներում (Լիբանան, Իրան, ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա), սփյուռքահայ համայնքները նաև ձևավորել են սեփական քաղաքական և լոբբիստական կառույցներ և կազմակերպված մասնակցում են այդ երկրների քաղաքական կյանքին:

Հայաստանի անկախության վերականգնումից ի վեր, Հայաստան-Սփյուռք հարաբերություններն ուղեկցվել են մի շարք բարդ և ոչ միանշանակ գործընթացներով՝ պայմանավորված հակասություններով և վստահության պակասով, արդյունավետ երկխոսության և ինստիտուցիոնալ հարթակների բացակայությամբ, սփյուռքահայերին և կազմակերպություններին իրական քաղաքական և տնտեսական իրավունքներ շնորհելու՝ Հայաստանի իշխանությունների ցածր պատրաստակամությամբ: Մասամբ սա պայմանավորված է Սփյուռքի տարասեռությամբ և այն որպես միասնական մարմին կազմակերպելու բարդությամբ, սակայն զգալի չափով էլ՝ Հայաստանի իշխանությունների դժկամությամբ, ստեղծելու քաղաքական ազդեցության այլընտրանքային կենտրոններ, որոնք իրենց կողմից չեն վերահսկվում:

Ազգային կյանքի լիարժեք կազմակերպումը, ներառյալ կենսունակ ազգային պետության կայացումը, և հայության դիրքերի համապարփակ ուժեղացումը աշխարհում, պահանջում է, որպեսզի Հայաստանի, որպես ազգային պետության, և Սփյուռքի համայնքների միջև համագործակցությունը տեսանելի ապագայում բարձրացվի որակական նոր մակարդակի՝ նպատակ ունենալով ձևավորել Հայաստանը իր շահերի կենտրոն ընկալող, իրապես հայաստանակենտրոն, կենսունակ Սփյուռք: Առաջիկա երկու տասնամյակում, Հայաստանի և Սփյուռքի համայնքերի համագործակցության առանցք պետք է դառնան հետևյալ ընդհանրական առաջնահերթությունները՝

- Ազգային պետության ապագայի շուրջ համախմբումը՝ որպես հայաստանակենտրոն հայության ազգային ինքնագիտակցության առանցքային բաղադրիչ, ի հավելումն ներկայումս ձևավորված ինքնագիտակցության դոմինանտ այլ բաղադրիչների՝ պատկանելությանը Հայ առաքելական եկեղեցուն, ավանդական արժեքներին, լեզվի և մշակույթի իմացությանը, և Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման համար պայքարին:
- Հայրենադարձության ակտիվ քաղաքականության իրականացումը, որի նպատակն է ձևավորել ազգային զարգացման կայուն, երկարաժամակետ մոդել, երբ հայաստանակենտրոն հայության առմվազն կեսից ավելին բնակվում է ազգային պետության տարածքում:
- Հայաստանի, որպես ազգային պետության հանձնառությունը՝ դառնալ Սփյուռքում ազգային ինքնագիտակցության պահպանման գործընթացի ակտիվ մասնակից, աշխարհասփյուռ ողջ հայության կողմից ստեղծված հայկական ժառանգության գլխավոր երաշխավոր, և սփյուռքյան կառույցների ամրապնդման և նորացման, սփյուռքահայության կողմից ազգային կյանքում ներգրավվածության աստիճանի բարձրացման հիմնական ջատագով և խթանող:

Առաջիկա երկու տասնամյակում, մենք կյանքի ենք կոչելու Սփյուռքի համայնքների հետ համագործակցության և հայաստանակենտրոն Սփյուռքի ձևավորման հետևյալ գործիքակազմը՝

Պետական ինստիտուցիոնալ ենթակառուցվածք: Սփյուռքի հետ աշխատանքն ու պետական քաղաքականությունը պետք է կարգավորվի երկու հիմնական կառուցվածքային մոդելի միջոցով՝ Սփյուռքի նախարարության, որի նպատակն է Սփյուռքի համայնքների և

կառույցերի հետ մշտական ինստիտուցիոնալ աշխատանքը, և Հայրենադարձության և ինտեգրման գործակալության, որի նպատակն է կիրառական աջակցությունը անհատ հայրենադարձներին: Միաժամանակ, անհրաժեշտ է վերահմաստավորել և վերակառուցել ՀՀ բոլոր դեսպանատների և հյուպատոսարանների աշխատանքն արտերկրում, այն հաշվարկով, որ նրանք դառնան Սփյուռքի համայնքների հետ կապերի արդյունավետ և վստահելի հանգույցներ:

Հայկական ինքնության պահպանման և Հայաստանի հետ կապերի ամրապնդման ծրագրային համակարգ: Համակարգը պետք է ընդգրկի տարիքային բոլոր խմբերի հետ աշխատանքը՝ հեռակա ուսուցման դասընթացներ, երիտասարդական ճանաչողական ծրագրեր, արեւելահայերենի ու արեւմտահայերենի, մշակույթի ուսուցում, պրակտիկա եւ կամավորություն, Հայաստանի բուհերում վերապատրաստում, կարճաժամկետ մասնագիտական եւ ռազմահայրենասիրական դասընթացներ, հայրենադարձության ծրագրեր: Այս խնդրի լուծումը հնարավոր է միայն պետական-մասնավոր գործընկերության միջոցով եւ առկա պետական եւ մասնավոր ծրագրերի ընդլայնմամբ: Միջնաժամկետ նպատակ պետք է դառնա համակարգի կարողությունների զարգացումը, այն հաշվարկով, որ այն սպասարկի տարեկան առնվազն 100 000 սփյուռքահայի, այդ թվում՝ մոտ 20 000 ապագա և առկա հայրենադարձի:

Ֆինանսավորման համակարգ: Արդյունավետ աշխատանք կազմակերպելու եւ դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է ներգրավել որակյալ մասնագիտական ռեսուրս, որն, իր հերթին, կպահանջի զգալի ֆինանսական ռեսուրս: Վերը առաջադրված խնդիրների լուծումը, մեր գնահատմամբ, կպահանջի տարեկան առնվազն 100 մլն. ԱՄՆ դոլարի հատկացումներ, ինչը, սակայն, լիովին հիմնավորված է՝ հանդիսանալով իր տեսակի մեջ կարևորագույն ներդրում ազգային կյանքի առողջացման ոլորտում: Հայաստանի Հանրապետությունը պետք է իր վրա վերցնի Սփյուռքի համայնքների հետ աշխատանքները կազմակերպելուն ուղղված ծախսերի շոշափելի մասը՝ տրամադրելով պետական բյուջեի առնվազն 1%-ը, դա հնարավոր կդարձնի հավաքագրել մնացյալ անհրաժեշտ ֆինանսական միջոցները մասնավոր-պետական համագործակցության ծրագրերի միջոցով՝ սփյուռքյան և տեղական կազմակերպությունների եւ անհատների ֆինանսական հատկացումների ներգրավմամբ:

Տեղեկատվական քաղաքականություն: Հայաստանը պետք է ընդարձակի և որակապես բարելավի Սփյուռքի համայնքներում տարվող տեղեկատվական աշխատանքը, ներառյալ հեռարձակվող հեռուստացանցի բովանդակության վերանայում (քրեական հեռուստաշարերից հրաժարում կամ նվազեցում, Հայաստանը Սփյուռքի հետ կապող տարբեր մասնավոր եւ պետական ծրագրերի անվճար ցուցադրում, հայրենադարձության պատմությունների լուսաբանում, ուսումնական ծրագրեր), Սփյուռքում տարածված լեզուներով Հայաստանում մեկ թարգմանչական կենտրոնի ստեղծում, սփյուռքյան լրատվամիջոցների բովանդակային թարմացմանը և տեխնիկական վերազինմանը աջակցություն, սփյուռքյան կազմակերպությունների գործիչների պարբերական վերապատրաստման դասընթացներ, նպատակային դրամաշնորհների տրամադրում Սփյուռքի հետ արդյունավետ աշխատանք կազմակերպող մասնավոր ՉԼՄ-ներին, և այլն:

Ակտիվ հայրենադարձության քաղաքականություն: «Հայրենադարձության մասին» օրենքի ընդունում, պետության կողմից ինտեգրացիոն աջակցության հիմնական փաթեթի սահմանում բոլոր հայրենադարձների համար, հայրենադարձության հատուկ ծրագրեր Հայաստանի սահմանամերձ շրջաններում կամ ազատագրված տարածքներում բնակություն հաստատել ցանկացողների համար: Գործադիր իշխանությունում հայրենադարձների համար քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու նպատակով պահանջների ազատականացում (երկրորդ քաղաքացիության առկայության եւ ՀՀ-ում բնակության ժամկետի սահմանափակումների մեղմացում): Հայրենադարձության ընտրովի լրացուցիչ խրախուսում այն ոլորտներում, որտեղ առկա է որակյալ մասնագետների պահանջ: Որպես միջանկյալ քայլ, Սփյուռքի հայրենակիցների համար Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու պայմանների դյուրացում և գաղափարի ակտիվ պրոպագանդում արտերկրում:

Քաղաքական մասնակցություն: Արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների համար քվեարկության իրավունքի վերականգնում (սահմանափակում մտցնելով միայն արտասահմանում մշտական բնակության ժամկետի հիման վրա), Սփյուռքի հայրենակիցների մասնակցության խրախուսում ՀՀ-ում տարբեր մակարդակների դիտորդական առաքելությունների անցկացմանը և քաղաքական կուսակցությունների աշխատանքին մասնակցությանը, պարբերական համահայկական համաժողովների կազմակերպում՝ համահայկական օրակարգի քննարկման եւ ամրապնդման նպատակով, ինչպես նաեւ կադրային քաղաքականության իրականացում, որտեղ հայրենադարձներն ու Սփյուռքի հայրենակիցները լայն ներկայացուցչություն կունենան գործադիր իշխանության եւ կառավարական այն մարմիններում, որոնք պատասխանատու են Սփյուռքի հետ տարվող քաղաքականության մշակման եւ իրականացման համար: Հեռանկարում, նաև պայմանների դյուրացում՝ հայրենադարձների և արտերկրում բնակվող Հայաստանի քաղաքացիների համար՝ պետական պաշտոններ, ներառյալ ընտրովի, զբաղեցնելու համար:

Հեռանկարում, Հայաստանը պետք է կարողանա նախաձեռնող քաղաքականության միջոցով նոր իմաստ հաղորդել Սփյուռքի գոյությանը, ձևավորել նրա հայաստանակենտրոն առանցքը, դրանով ընդլայնելով սեփական վիրտուալ սահմաններն ու իրական ազդեցությունը աշխարհում, ինչպես նաև ամրապնդելով Սփյուռքի յուրաքանչյուր համայնքի կենսունակությունը և ուժը: **ՄՐՑՈՒՆԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ**

Ներկայումս Հայաստանի տնտեսությունը համարյա անտեսանելի է համաշխարհային տնտեսական քարտեզի վրա, իսկ մասնակցությունը աշխարհի առևտրա-տնտեսական զարգացմանը չի արտացոլում ազգային ստեղծարար ներուժը: Խորհրդային տնտեսության զգալի մասը փլուզվել է, իսկ անկախության տարիներին ժամանակակից նոր տնտեսական ակտիվության կենտրոններն առաջացել են միայն փոքր կղզյակներով, արդյունքում այժմյան տնտեսվարումը հաճախ անարդյունավետ է և անխնա, իսկ արտադրանքի միայն փոքր մասը՝ մրցունակ միջազգային շուկայում: Հայաստանում տնտեսության մեջ ժամանակակից կապիտալի բազայի ձևավորումը խրոնիկ հետ է մնում Հայաստանում ապրող մարդկանց աշխատանքային կարողություններից, արդյունքում աշխատանքի արտադրողականությունը Հայաստանում մոտ չորս անգամ ցածր է, քան զարգացած երկրներում, փաստացի գործազրկությունը գերազանցում է 20%, իսկ աշխատունակ բնակչության զգալի մասն էլ սեզոնային կամ մշտական աշխատանքով է զբաղված այլ երկրներում:

Որպեսզի Հայաստանը դուրս գա խրոնիկ դարձած տնտեսական ճգնաժամից, նրա տնտեսությունը առնվազն երկու տասնամյակ պետք է աճի արագացված տեմպերով (միջինում տարեկան 7%-ից ավել), այդ դեպքում այն իր արդյունավետությամբ կհավասարվի կամ կգերազանցի տարածաշրջանի խոշոր երկրներին, արտագաղթը կդադարի և նախադրյալներ կստեղծվեն երկրի հետագա կայուն զարգացման համար: Այս նպատակով, Հայաստանը պետք է գործուն մասնակցություն ունենա համաշխարհային առևտրա-տնտեսական զարգացմանը, ներկայումս գործող կիսափակ տնտեսությունը պետք է բացվի և դառնա գերմրցունակ, և կարողանա ակտիվորեն ներգրավել ներդրումներ՝ առաջանցիկ աճի համար: Միաժամանակ, Հայաստանի տնտեսական համակարգը պետք է լինի ազգային, հենվի առաջին հերթին ազգային կապիտալի և աշխատանքային ռեսուրսների վրա, ակտիվորեն ներգրավի հայության տարբեր հատվածներին շահավետ տնտեսական գործունեության մեջ, դարձնելով Հայաստանը նրանց տնտեսական շահի կենտրոն, ներկայացնի ու պաշտպանի այդ տնտեսական շահը թե երկրի ներսում, թե միջազգային շուկաներում: Հայաստանի տնտեսական համակարգը պետք է ներառի Արցախը, որի տնտեսական ռեսուրսը կարող են արագացված տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման լրացուցիչ աղբյուր հանդիսանալ՝ արդյունավետ զարգացման պայմաններում: Մասնավորապես, Արցախում ստեղծվող նոր բնակավայրերը և տնտեսական միավորները կարող են դառնալ տեխնոլոգիաների և նորարարական լուծումների փորձարկման հարթակ, այնուհետև Հայաստանի այլ տարածքներում մասշտաբայնացման համար:

Հայաստանում տնտեսությունը պետք է լինի մասնավոր, դա Հայ մարդու ազատության և ազատ ստեղծագործության հիմնաքարերից մեկն է, սակայն այն պետք է հավասարակշռվի

պետության կարգավորող դերով, որը պետք է խրախուսի տնտեսական, սոցիալական և բնական ռեսուրսների խնայողական օգտագործումը և վերականգնումը: Պետությունը նաև պետք է ապահովի բարենպաստ միջավայր յուրաքանչյուր քաղաքացու և ձեռնարկության համար՝ զարգացնելու և արդյունավետորեն իրացնելու իր կարողությունները բարձր արտադրողական աշխատանքի միջոցով, և աջակցի նրանց՝ հաջողության հասնելու արտաքին շուկաներում: Զուգահեռ, պետությունը պետք է աջակցի նաև խոշոր հանրային ընկերությունների ձևավորմանը, որոնք կկարողանան ապահովել արդիական և թափանցիկ կառավարում, մոբիլիզացնել ազգային և օտարերկրյա կապիտալը և արդյունավետ մրցակցել միջազգային ասպարեզում:

Բարձր տեմպերով երկարաժամկետ աճը հնարավորություն կտա էապես բարելավել ներկայիս ծանր սոցիալական վիճակը երկրում՝ նպաստելով գործազրկության և աղքատության մակարդակների զգալի կրճատմանը, եթե տնտեսական աճի արդյունքները ավելի համաչափ բաշխվեն քաղաքացիների մեջ, մասնավորապես, ուղղվելով նրանց շարունակական կրթությանը և սոցիալական մոբիլության ապահովմանը: Մեր հավակնությունն է լինելու առաջիկա տաս տարվա ընթացքում մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշը առնվազն կրկնապատկել, գործազրկությունը և աղքատությունը նվազեցնել՝ յուրաքանչյուրը 10%-ից ցածր, իսկ հաջորդ տասնամյակի ընթացքում հասնել մեկ շնչին ընկնող ՀՆԱ ևս մեկ կրկնապատկման, գործազրկության նվազման՝ մինչև բնական մակարդակ (4-6%), և երկրում աղքատության փաստացի վերացման:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպեսզի Հայաստանը կարողանա 20 տարում քառապատկել մեկ շնչին ընկնող տնտեսական արդյունքը, երկրում պետք է իրականացվեն մասշտաբային, համակարգված բարեփոխումներ, որոնք պետք է ներառեն ներդրումային միջավայրի բարելավումը, էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը, տնտեսության հեռանկարային ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերը, աշխատանքի շուկայի զարգացումը, տարածքային համաչափ զարգացումը, մակրոտնտեսական կայունությունը և ճկուն հարկային քաղաքականությունը: Այս բոլորի համակարգված իրականացումը հնարավորություն կտա երկարաժամկետ հեռանկարում պահպանել բարձր տնտեսական ակտիվություն, և երկրի տնտեսության մեջ ներգրավել թե հայության, և թե օտարերկրյա զգալի ռեսուրսներ: Ստորև ներկայացված է այդ ուղղություններից յուրաքանչյուրի հայեցակարգը:

Ներդրումային միջավայրի բարելավում

Քանի որ մեր նպատակը ՀՆԱ կրկնապատակումն է առաջիկա տասնամյակում, մեր հիմնական թիրախը պետք է լինի ներդրումների արդյունավետ ներգրավումը տնտեսության մեջ: Տնտեսական աճի պոտենցիալն ուղղակիորեն կախված է ՀՆԱ-ի նկատմամբ համախառն կապիտալի կուտակման կշռից, այն պետք է Հայաստանում կայուն գերազանցի ՀՆԱ-ի 25%՝ ներկայիս 16-20%-ի փոխարեն: Այս նպատակով, ներքին խնայողությունների աճի խթանմանը զուգահեռ՝ անհրաժեշտ է ակտիվ ներդրումային քաղաքականությամբ էապես ավելացնել օտարերկրյա ներդրումների ծավալները, դրանք հատկապես կարևոր են տեխնոլոգիաների փոխանցման և նոր շուկաների հասանելիության ապահովման համար: Համախառն ներդրումների թիրախային մակարդակին հասնելու համար մոտակա 5 տարվա ընթացքում անհրաժեշտ է ներգրավել տարեկան 500-700 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումներ, իսկ երկարատև հեռանկարում՝ տարեկան ՀՆԱ առնվազն 5%-ի չափով: Ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի Հայաստանի ներդրումային

գրավչության բարձրացմանը, առանցքային խոչընդոտների վերացմանը, հեռանկարային ոլորտներում գրավիչ նոր տնտեսական հնարավորությունների բացահայտմանը, և երկարաժամկետ մասնավոր ֆինանսավորման աղբյուրների զարգացմանը:

Հայաստանը պետք է դառնա տարածաշրջանում և ԵԱՏՄ-ում ներդրողների համար լավագույն գործարար միջավայր ունեցող երկիրը՝ ապահովելով բիզնեսի վարման պայմանների և անհրաժեշտ ենթակառուցվածքների շարունակական բարելավում: Սա պետք է արտացոլվի միջազգային հեղինակավոր ռեյտինգներում, մասնավորապես, Գլոբալ մրցունակության ինդեքսով Հայաստանը պետք է ձգտի ընդգրկվել լավագույն 50 երկրի ցանկում: Պետության առաջնային նպատակը պետք է լինի արդար մրցակցային դաշտի և հավասար մեկնարկային պայմանների ապահովումը, որը հնարավոր է միայն տնտեսության ստվերային հատվածի էական կրճատման, պարզ և հստակ կանոնակարգման, արդյունավետ վարչարարության և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման միջոցով: Պետությունը տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության միջոցով պետք է բացառի գերիշխող դիրքի չարաշահումները և հակամրցակցային պայմանավորվածությունները՝ միաժամանակ չխաթարելով խոշոր բիզնեսների օբյեկտիվ մրցակցային առավելությունների իրացումը: Պետական քաղաքականությունը պետք է միտված լինի պարզ, հասկանալի և երկարաժամկետ կտրվածքով ներդրողների համար կանխատեսելի օրենսդրական դաշտի ապահովմանը, վստահելի դատական համակարգի ձևավորմանը, հարկային և կարգավորող վարչարարության նվազեցմանը, ներդրումների ներգրավումն ապահովող կայուն մեխանիզմների և կառույցների ստեղծմանը, հանրային նշանակության ընկերություններում կորպորատիվ կառավարման համակարգի ներդրմանը, ինչպես նաև Հայաստանի ներդրումային հեղինակության առաջմղմանը: Պետական քաղաքականությունը պետք է խրախուսի նաև ֆինանսական ռեսուրսների կառուցվածքի բազմազանեցումը, հատկապես պարտքային և բաժնետիրական գործիքների միջև: Ստորև մի շարք ուղղություններով առաջարկվող հիմնական անելիքները լրացուցիչ մանրամասնված են, այլ ուղղություններն էլ նկարագրված են ծրագրի համապատասխան բաժիններում:

Հակամենաշնորհային քաղաքականություն: Հայաստանում արհեստականորեն ստեղծված մենաշնորհների և խաղի անհավասար պայմանների առկայությունը երկար ժամանակ հանդիսացել է տարբեր ոլորտներում ներդրումների ներգրավվման հիմնական խոչընդոտը: Առաջիկա տարիներին պետությունը պետք է հետևողականորեն վերացնի բոլոր մենաշնորհները, որոնք պայմանավորված չեն բնական կառուցվածքային գործոններով, հավասարեցնի խաղի պայմանները յուրաքանչյուր ոլորտի տնտեսավարողների համար, անվերապահ տարանջատի քաղաքական ազդեցությունը բիզնեսից, ստեղծի արդյունավետ մեխանիզմներ՝ խաղի կանոնների առերևույթ խախտումները օրինապահ տնտեսավարողների կողմից բողոքարկելու համար:

Ներդրողների շահերի պաշտպանություն: Մենք հավասար ուշադրություն ենք դարձնելու խոշոր և մանր, օտարերկրյա և տեղական ներդրողների պաշտպանությանը: Մենք բացառելու ենք բարեխիղճ ներդրողների վրա պետական մարմինների ճնշումները, այդ թվում ուժային և հարկային մարմինների կողմից, պաշտպանելու ենք ներդրողներին հասարակական տարբեր կառույցների անհարկի ճնշումներից և շահարկումներից, եթե այդ ներդրողները օրենքով թույլատրված, բարեխիղճ գործունեություն են իրականացնում: Տնտեսական բնույթի վեճերը և իրավախախտումների քննությունը իրականացվելու է համապատասխան տնտեսական դատարանների կողմից, և մենք հետևողականորեն բացառելու ենք տնտեսական վեճերի քրեականացումը:

Արժեթղթերի շուկայի զարգացում: Ներդրումները ավելի ներառական դարձնելու, և օտարերկրյա ու տեղական պորտֆելային նեդրողներ ներգրավելու համար անհրաժեշտ է նաև արժեթղթերի շուկայի զարգացումը: Հայաստանում արժեթղթերի շուկայի զարգացման հիմնական խոչընդոտներից է առաջարկվող ֆինանսական գործիքների սակավությունը: Որպեսզի խրախուսենք բորսայում նոր ընկերությունների ցուցակումները, պետք է ստեղծվեն լրացուցիչ օգուտներ ընկերությունների համար, քանի որ ցուցակումը և դրա պահպանումը ինքնին ծախսեր է ավելացնում: Մասնավորապես, կարող են սահմանվել որոշակի

արտոնություններ ցուցակված ընկերությունների համար: Բացի այդ, ներդրողների համար բաժնային գործիքների առաջարկը ավելացնելու և Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով սահմանվելու է պարտադիր ցուցակման և բաժնետոմսերի ազատ շրջանառության ապահովման (free fl•at) պահանջ խոշոր բանկերի և հանրային առանցքային նշանակություն ունեցող ընկերությունների համար՝ 5 տարվա նախապատրաստական ժամկետից հետո: Վերջապես, տեղական ներդրողների մեջ այլընտրանքային գործիքների վերաբերյալ հետաքրքրության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվելու են համապատասխան հանրային իրազեկման միջոցառումներ և կրթական ծրագրեր:

Կորպորատիվ կառավարում: Առանց կորպորատիվ կառավարման լավագույն մեխանիզմների ներդրման, դժվար կլինի ներգրավել նոր ներդրողներ, հատկապես ֆիզիկական անձանց շրջանակից: Այս նպատակով սահմանվելու է կորպորատիվ կառավարման կանոնագրքի հիմնական դրույթների պարտադիր կիրառություն հետևյալ սուբյեկտների համար. ցուցակված ընկերություններ, ներառյալ բանկերը, պետական մասնակցությամբ նշանակալի ընկերություններ, հանրային կարևոր ծառայություններ մատուցող ընկերություններ: Մասնավորապես, պարտադիր է դարձվելու այդ ընկերություններում կորպորատիվ կառավարման կանոնագրքին համապատասխան տնօրենների խորհուրդ և ներքին աուդիտ ձևավորելը, ինչպես նաև թափանցիկ գործունեություն իրականացնելը:

Ներդրումային միջավայրի կառույցների և ենթակառուցվածքների զարգացում: Օտարերկրյա, այդ թվում սփյուռքահայերի ներդրումները ավելի արդյունավետ է ներգրավել ինստիտուցիոնալ կառույցների, մասնավորապես ներդրումային ֆոնդերի միջոցով: Պետությունը մասնավոր-պետական համագործակցության սկզբունքներով աջակցելու է նման ֆոնդերի ստեղծմանը և միջազգային հեղինակություն ունեցող կառավարիչների ներգրավմանը: Կառավարիչների հետաքրքրությունը և ներդրողների վստահությունը բարձրացնելու նպատակով պետությունը կարող է հանդես գալ նաև որպես այդ ֆոնդերում ներդրող, առանց միջամտելու կառավարիչների գործունեությանը:

Արտերկրում ներդրումային գրավչության առաջմղում: Օտարերկրյա ներդրումների ներհոսքը ավելացնելու համար պետությունը արտերկրում իրականացնելու է լայնածավալ առաջմղման ծրագրեր, որոնք կներառեն ռոդ-շոուներ, ներկայացումներ, հանդիպումներ միջազգային ֆինանսական կենտրոններում և պոտենցիալ նեդրողների շրջանակներում, մասնավորապես, շեշտը դնելով նաև հայազգի ներդրողների վրա: Ընդ որում, պետության դերը պետք է լինի ոչ միայն ներդրումային նախագծերի հավաքագրումը և ներկայացումը պոտենցիալ ներդրողներին, այլ նաև բարենպաստ պայմանների ստեղծումը՝ նոր ներդրումային նախագծեր ձևավորելու և իրականացնելու համար, այդ թվում անհրաժեշտ և բավարար նախնական ենթակառուցվածքների ստեղծումը, նախագծերի արդյունավետության նախնական գնահատման վերլուծության կազմակերպումն ու ներկայացումը, իրավաբանական և կարգավորման աջակցության տրամադրումը, և այլն:

Էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում

Ներկայիս հայկական էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքների մեծ մասը ձևավորվել է խորհրդային ժամանակաշրջանում: Անկախության շրջանում Հայաստանի Հանրապետությունում և Արցախում իրագործվել են մի շարք տարածաշրջանային և լոկալ բնույթի ենթակառուցվածքային ծրագրեր (բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցեր, ներհանրապետական ճանապարհներ, Իրան-Հայաստան գազամուղ, Երևանի ՋԷԿ, փոքր ՀԷԿ-եր, Զվարթնոց օդանավակայանի նոր տերմինալ, հեռահաղորդակցման գծեր, և այլն), որոնք հնարավորություն են տվել լուծելու տնտեսական զարգացման և բնակչության կենսապահովման նվազագույն խնդիրները: Չունենալով սակայն ֆինանսական միջոցների կրիտիկական զանգված և հեռահար տեսլական, մենք չենք կարողացել լիարժեք

վերակառուցել մեր էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքները, դրանք այսօր պատրաստ չեն ապահովել տնտեսության հետագա արագ զարգացումը:

Ժամանակակից աշխարհում տեղի է ունենում հիմնական ենթակառուցվածքների ավանդական կազմակերպման մոդելների վերանայում՝ արտադրությունը մոտեցվում է սպառմանը, էներգետիկ համակարգերն ապակենտրոնացվում են, տրանսպորտի ոլորտն անցնում է էլեկտրական շարժիչների և արագընթաց գծերի, ներդրվում են ավելի հուսալի ճանապարհաշինական տեխնոլոգիաներ, զարգանում է փոքր և մատչելի ավիացիան, հեռահաղորդակցման նոր միջոցները փոխում են աշխատանքի կազմակերպման, ապրանքների և ծառայությունների արտադրության և բաշխման ավանդական ձևերը: Տեղի ունեցող փոփոխությունները շատ դեպքերում արմատական են, և նոր հնարավորություններ և մարտահրավերներ են պարունակում Հայաստանի համար:

Ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ հայկական պետությունը պետք է նախաձեռնողական դիրքորոշում որդեգրի, դիտարկելով դրանք ոչ միայն սեփական կենսապահովման տեսակետից, այլև որպես արտաքին շուկաներում դիրքավորվելու և լրացուցիչ ռազմավարական և տնտեսական առավելություններ ստանալու միջոց:

Սա պետք է բերի սուվերեն ներդրումային զանգվածի ընդլայնման, ազգային կապիտալի համար գրավիչ հնարավորությունների առաջադրման, և ոլորտի կայուն զարգացման: Պետք է նպատակադրվի մեր տարածաշրջանում էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման առումով առաջատար դիրքերի գրավումը առաջիկա երկու տասնամյակի ընթացքում: Այդ նպատակով պետությունը պետք է ստեղծի ինստիտուցիոնալ համապատասխան կարողություններ, և ներգրավի մասնավոր միջոցներ հեռանկարային ծրագրերի մեջ:

Էներգետիկ ենթակառուցվածքները պետք է զարգանան՝ ապահովելով տնտեսական աճի համար անհրաժեշտ հզորությունների ընդլայնումը ու արդիականացումը, երկրի էներգետիկ անկախությունը և անվտանգությունը, բնակչության համար էներգետիկ ծառայությունների բազային ծավալի հասանելիությունը (էներգետիկ աղքատության հաղթահարում): Անհրաժեշտ է առաջիկա տասնամյակում ապահովել Մեծամորի ԱԷԿ-ի փոխարինումը բազային համարժեք հզորություններով, լուծել հնացած ջերմային կայանների և ՀԷԿ-երի արդիականացման խնդիրները, իրագործել Մեղրու ՀԷԿի ծրագիրը, իրականացնել գործող փոքր ՀԷԿերի արդիականացումը, կառուցել առնվազն մինչև 1000 Մվտ համախառն հզորությամբ արևային և 200 Մվտ հզորությամբ հողմային կայաններ: Հայաստանը պետք է ունենա բնական գազի առնվազն երկու արտաքին մատակարար (հեռանկարում նաև ավել), երկրում պետք է ազատականացվի բնական գազի մեծածախ շուկան: Նշված և այլ բոլոր ծրագրերը պետք է իրագործվեն վերջնական սակագնի կայունության և խելամիտ սակագնային քաղաքականության պայմաններում՝ ապահովելով ներդրումային գրավչությունը:

Այդ առումով պետության համար ռազմավարական նշանակության ունի էներգետիկ քաղաքականության մշակման և շուկայի կարգավորման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը: Էլեկտրաէներգետիկայի ոլորտում հատուկ կարևորվում է շուկայի ազատականացման ծրագիրը, իսկ բնական գազի ոլորտում՝ Գազպրոմ Արմենիա ընկերության կառավարման թափանցիկության և հանրային հսկողության մեխանիզմների ներդրումը, և ներմուծման աղբյուրների դիվերսիֆիկացիան: Պետությունը պետք է խրախուսի էլեկտրաէներգիայի արտադրության ապակենտրոնացումը և մոտեցումը սպառման կետերին, կուտակիչ հիդրոակկումուլյացիոն և արևային էլեկտրակայանների կառուցումը, վերականգնվող էներգետիկայի ավելցուկային ռեսուրս ունեցող տարածքներում սահմանի էներգատար արտադրությունների ներդրման հատուկ խթաններ, աջակցի էլեկտրական տրանսպորտի զարգացման ենթակառուցվածքի ձևավորմանը:

Հանդիսանալով ԵԱՏՄ անդամ, Հայաստանը պետք է կարողանա օգտվել այդ կառույցի ներսում միասնական էներգետիկ շուկա ստեղծելու առավելություններից, արդյունավետ գործի այդ հարթակում և պաշտպանվի հնարավոր ռիսկերից: Մասնավորապես, պետք է հնարավորություն ստեղծվի ներմուծել ոչ միայն ռուսական, այլև ղազախական և

հեռանակարում թուրքմենական բնական գազը մրցակցային գներով, և լիարժեք ինտեգրվել տարածաշրջանային էլեկտրաէներգետիկ համակարգին (օրինակ, ավարտին հասցնել Իրան և Վրաստան 400ԿՎ օդային էլեկտրական գծի կառուցման ծրագիրը, ընդարձակել Իրան-Հայաստան և Հայաստան-Վրաստան գազատարների թողունակությունը): Հայաստանի էներգետիկ դիվանագիտությունը պետք է ելնի այն հանգամանքից, որ երկիրը գտնվում է աշխարհաքաղաքական խաչմերուկում, որտեղ կենտրոնացած են տարատեսակ և իրար հակասող շահեր, և խնդիր դնի մշտապես առաջ մղելու հայկական շահը: Այս առումով անհրաժեշտ է ձևավորել առաջատար վերլուծական կարողություններ և ճկուն դիվանագիտություն՝ աշխահաքաղակական կենտրոնների հետ շահավետ համաձայնությունների հասնելու նպատակով:

Տրանսպորտային ենթակառուցվածքները պետք է զարգանան՝ ապահովելով ոչ միայն ընդհանուր տնտեսական աճի համար անհրաժեշտ կարողությունները, այլև առավելագույն օգտագործելու Հայաստանի տրանզիտային և զբոսաշրջային պոտենցիալը: Մասնավորապես, անհրաժեշտ է առաջիկա տասնամյակում իրականացնել հետևյալ կատալիտիկ ծրագրերը՝ ավարտել Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցումը և ինտեգրումը Իրանի և Վրաստանի տրանսպորտային համակարգերին (ներառյալ Երևանը շրջանցող օղակը), կառուցել Երևան-Թբիլիսի արագընթաց երկաթուղային նոր գիծը՝ մայրաքաղաքների միջև երկու ժամում հաղորդակցություն իրականացնելու հաշվարկով, ընդարձակել Զվարթնոց օդանավակայանը՝ օգտագործելով այն Ասիայի և Եվրոպայի միջև տրանզիտային հաղորդակցության համար, ընդլայնել Գյումրու օդանավակայանի թողունակությունը, գործարկել Գորիսի, Կապանի և ըստ հնարավորության նաև Ստեփանակերտի օդանավակայանները, կառուցել երկաթգծի Վանաձոր-Մարգահովիտ և Վարդենիս-Ջերմուկ հատվածները: Տարածաշրջանի ընդհանուր տրանսպորտային թողունակության ընդլայնման համատեքստում, Հայաստանը պետք է ձգտի հասնել Աբխազիայով անցնող երկաթուղու վերագործարկմանը, և Հայաստան-Վրաստան-Ռուսաստան ավտոճանապարհի թողունակության հետագա բարձրացմանը, այս նպատակով պետք է աշխատի համապատասխան երկրների կառավարությունների հետ, և պատրաստ լինի անմիջականորեն մասնակցել ապագա ներդրումային ծրագրերին:

Ներքին օգտագործման տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման տեսակետից, առաջնային է լինելու գործող ներհանրապետական հիմնական մայրուղիների արդիականացումը, հիմնական թունելների և լեռնային տեղամասերի թողունակության ընդլայնումը, Երևանի շուրջ լիարժեք օղակաձև ճանապարհի կառուցումը, Արցախին կապող երրորդ մայրուղու կառուցումը, և բոլոր ռազմավարական նշանակության ավտոմայրուղիների բարձրորակ սպասարկումը: Դրան զուգահեռ, Երևանից սկսած, պետք է զարգացվեն մասնավոր էլեկտրական տրանսպորտի համար անհրաժեշտ լիցքավորման ենթակառուցվածքները, Երևանում գործարկվի մետրոպոլիտենի նոր գիծ, էլեկտրական տրանսպորտ ներդրվի նաև երկրի այլ խոշոր քաղաքներում:

Նախանշված ստրատեգիական ծրագրերի իրագործման համար պահանջվելու է ազգային ֆինանսական կապիտալի մոբիլիզացիայի նոր մակարդակ, որը թույլ կտա ձեռք բերել նաև համապատասխան սուվերենություն: Պետությունը պետք է առաջարկի համապատասան ներդրումային քաղաքականություն՝ ազգային բիզնեսին և բնակչությանն՝ առաջարկելով երկարաժամկետ ցածր ռիսկային ներդրման գործիքակազմ, ուղղորդելով նաև կենսաթոշակային հիմնադրամների և տարբեր ինստիտուցիոնալ ներդրողների ռեսուրսները ռազմավարական նշանակություն ունեցող էներգետիկ ծրագրերի իրագործմանը:

Ոլորտային քաղաքականություն

Լինելով փոքր ներքին շուկա ունեցող երկիր՝ արտահանման կողմնորոշումը և գլոբալ արժեշղթաներին արդյունավետ ինտեգրումն այլընտրանք չունի, որի հիմքը պետք է ապահովի տարածաշրջանային ինտեգրացիոն միավորներին արդյունավետ անդամակցումն և երկրի

համապատասխան դիրքավորումը: Հայաստանը պետք է դիրքավորվի որպես հարթակ ԵՄ և ԵԱՏՄ, Իրանի և արաբական երկրների տնտեսական համագործակցության ծավալման համար: Հայաստանը պետք է ձգտի ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ին հասցնել առնվազն 60%-ի առաջիկա 10 տարում, և հետագայում էլ շարունակի կայուն այն ավելացնել:

Այս նպատակով, պետությունը իր ուշադրությունը պետք է կենտրոնացնի սահմանափակ քանակությամբ տնտեսական ոլորտների վրա, որոնք կամ մեծ են իրենց չափերով, և կամ ունեն բարձր զարգացման ներուժ՝ հիմնված երկրի առկա բնական առավելությունների վրա, և իր սահմանափակ միջոցները օգտագործի՝ ստեղծելու զարգացման պայմաններ այդ ոլորտների բոլոր տնտեսավարողների համար, առանց փորձելու արտոնություններ տրամադրել առանձին խաղացողների՝ դրանով ձևախեղելով ներքին մրցակցությունը: Այս պահին այդպիսի ոլորտներ են գյուղատնտեսությունը և սննդի արդյունաբերությունը, հանքահումքային և շինանյութերի արդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը, ռազմարդյունաբերությունը և սարքաշինության առանձին ուղղություններ, ապագայում դրանց թիվը կարող է ընդլայնվել: Առանձին մեծ ոլորտ է տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաները, որն իր մեջ միավորում է արդյունաբերության, ծառայությունների և գիտության տարրեր, և հանդիսանում է երկրի առավել արագ զարգացող և բարձրարժեք տնտեսական ճյուղը: Բացի ավանդական արդյունաբերական ուղղություններից, աճող կարևորություն են ստանում նաև ծառայությունների այն ոլորտները, որոնք ունեն արտահանման զգալի ներուժ՝ առաջին հերթին զբոսաշրջությունը, բայց նաև ֆինանսական, պրոֆեսիոնալ, գիտակրթական և առողջապահական ծառայությունները, որոնք վերջին տարիներին արդեն իսկ զգալի դրական դինամիկա են դրսևորում, և կարող են հետագա աճի հիմք հանդիսանալ:

Այս ոլորտներում պետության հիմնական խնդիրն է հասցեագրել շուկայի բացթողումները և օժանդակել մասնավոր հատվածին՝ հաջողության հասնելու միջազգային մրցակցության մեջ: Ըստ այդմ, պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքով կգործեն ոլորտային խորհուրդներ, որոնք համատեղ կբացահայտեն ոլորտային արժեշղթաների հիմնական խնդիրները: Դրա հիման վրա, պետությունը, մասնավոր հատվածի կոորդինացված հանձնառությունների հետ միասին, կկիրառի աջակցության թիրախային գործիքակազմ, ներառյալ երկրի և ոլորտի բրենդի և հեղինակության առաջմղման, արտաքին շուկաներում աջակցման, արժեշղթայում խոչընդոտների վերացման, տարածքային համաչափ զարգացման և գոտիավորման, որակի կառավարման, մրցունակ կադրերի պատրաստման, նորարարության խթանման, և այլն: Արդյունքում պետությունը պետք է դառնա թիրախային ոլորտների համար վստահելի գործընկեր, և աջակցի դրանց զարգացմանը խոչընդոտող համակարգային խնդիրների լուծմանը:

Երկրի բրենդի առաջմղում: Հիմնական արտահանման շուկաներում, պետությունը պետք է օժանդակի մասնավոր հատվածին՝ ձևավորելու երկրի միասնական հովանոցային բրենդը (ինչպես նաև ոլորտային ենթաբրենդեր) և իրականացնի դրա առաջմղման պարբերական արշավներ, տարեկան առնվազն 3-5 մլն ԱՄՆ դոլար հատկացնելով դրանց բարձրորակ կազմակերպման համար: Ապագայում այս թիվը կարող է աճել: Պետությունը նաև կուժեղացնի դեսպանատներին կից առևտրային ներկայացուցչությունները, նոր որակով իրականացնելու հայկական ընկերությունների շահերի պաշտպանությունը, տեղում գործարար կապերի ստեղծումը, գործարար տեղեկատվության հավաքագրումը և տրամադրումը Հայաստանի պետական և մասնավոր կառույցներին: Պետությունը կզարգացնի առևտրատնտեսական կապերը հեռանկարային աճող շուկաների հետ՝ ապահովելու բարենպաստ պայմաններ հայ արտահանողների համար, նվազեցնելու մուտքի խոչընդոտները, և ընդլայնելու արտահանման աշխարհագրությունը:

Նորարարություն և տեխնոլոգիական առաջընթաց: Նորարարությունը և տեխնոլոգիական առաջընթացը պետք է լինեն երկրի մրցունակության աճի և տնտեսական զարգացման շարժիչ ուժը: Որակական փոփոխությունների համար անհրաժեշտ է նորարարություն իրականացնող ընկերությունների տեսակարար կշիռը այսօրվա 10%-ից

հասցնել մինչև 30-40%-ի, իսկ ՀՆԱ-ի մեջ հետազոտությունները և մշակումների կշիռը այսօրվա 0,25%-ից՝ մինչև 3%, որոնցից առնվազն մեկ երրորդը՝ պետական ֆինանսավորմամբ: Նորարարության խթանման քաղաքականությունը պետք է ունենա երեք հիմնական ուղղություն՝ ա) նոր տեխնոլոգիական մասշտաբային քլաստերների ձևավորում այն բնագավառներում, որտեղ Հայաստանը կարող է ձևավորել համաշխարհային նշանակության կարողություններ՝ մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտական ծառայությունների, ռազմարդյունաբերության ոլորտներում, բ) տնտեսության տեխնոլոգիական վերազինում՝ հատուկ աջակցման գործիքակազմի միջոցով նպաստելով արդի տեխնոլոգիաների յուրացմանը տեղական ընկերությունների կողմից, գ) հասարակության տարբեր շերտերի լայն ներգրավում՝ հանրային խնդիրների լուծմանն ուղղված նորարարությունները խրախուսելու միջոցով:

Նորարարության և տեխնոլոգիաների տարածման առանցքային խթան է լինելու ռազմարդյունաբերության զարգացումը, որն իր ուղղակի գործառնություններից զատ, տնտեսության մեջ տեխնոլոգիական նորամուծությունների փոխանցման և ներդրման կարևորագույն գործառույթ է կատարելու: Ռազմարդյունաբերության զարգացման կարևոր քայլերն են լինելու՝ ռազմարդյունաբերական համալիրի կառավարման արդյունավետ պետական կառույցի կայացումը, սպառազինության ներմուծում-տեղական արտադրություն որոշումների կայացման համակողմանի համակարգի ներդնումը, պետական գնումների համակարգի համապատասխանեցումը սպառազինության գնման առանձնահատկություններին, պետական ռազմաարդյունաբերական և մասնավոր տեխնոլոգիական ընկերությունների հետ երկարաժամկետ համագործակցության մեխանիզմների զարգացումը:

Նորարարության խթանման համար, պետությունը պետք է գիտության ֆինանսավորման նշանակալի մասն ուղղորդի երկրի տնտեսության առջև ծառացած խնդիրների լուծմանը՝ համատեղ գիտահետազոտական և կիրառական հետազոտությունների համաֆինանսավորման միջոցով: Անհրաժեշտ է խելացի մասնագիտացման գործիքակազմի գործածմամբ բացահայտել սահմանափակ թվով բարձր տեխնոլոգիական ուղղություններ, որում Հայաստանը կարող է մոտակա 5-7 տարում ձևավորել միջազգայնորեն մրցունակ կարողություններ, և դրանց վրա կենտրոնացնել գիտության պետական ֆինանսավորման զգալի մասը՝ ճեղքում ապահովելու նպատակով:

Տարածքների գոտիավորում և համաչափ զարգացում: Պետությունը պետք է թիրախավորված քաղաքականություն իրականացնի՝ յուրաքանչյուր տարածքում զարգացնելու տնտեսության այն ոլորտները, որոնք կարող են առավելագույն երկարաժամկետ արդյունք ստեղծել, և նպաստել տվյալ տարածքի համաչափ զարգացմանը: Որոշ դեպքերում, դա պահանջելու է կատարել հստակ ընտրություն՝ օրինակ հանքարդյունաբերության և զբոսաշրջության, կամ էներգետիկայի և գյուղատնտեսության միջև, և պետությունը, ազդակիր համայնքների հետ միասին, պետք է այն իրականացնի, և իր կարգավորման գործիքակազմի միջոցով, ներմուծի համապատասխան սահմանափակումներ: Նաև, պետությունը օրենսդրորեն ամրագրելու է սահմանափակ-սպառվող բնական ռեսուրսները շահագործող (հանքարդյունահանող, էներգետիկ, անտառահատող, և այլն) ընկերությունների պարտավորությունը՝ նպաստելու համայնքների կայուն զարգացմանը: Իրենց գործունեության ընթացքում այս ընկերությունները պետք է աջակցեն ազդակիր համայնքներում տնտեսական այլ ուղղությունների զարգացմանը, ինչն էլ պիտի ապահովի զբաղվածության ավելի ճկուն կառուցվածք և անցնցում անցում նոր տնտեսական ռեժիմի՝ ռեսուրսները սպառվելուց հետո:

Որակի կառավարում: Արդյունաբերական քաղաքականության շրջանակներում, պետությունը պետք է իրականացնի որակի կառավարման համակարգի հետևողական ամրապնդում և ազգային պահանջների համապատասխանեցում միջազգային լավագույն պահանջներին (ի լրումն ԵԱՏՄ շրջանակում ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցման), որը կնպաստի հայկական արտադրանքի միջազգային մրցունակության բարձրացմանը: Առաջիկա տասնամյակում, պետք է հասնել նրան, որ

հայկական առաջատար արդյունաբերական ընկերությունները ներդնեն միջազգային ստանդարտների համապատասխան որակի կառավարման, ինչպես նաև աշխատատեղերի և շրջակա միջավայրի անվտանգության համակարգեր, ինչը պետք է խրախուսվի համապատասխան վարչական և ֆիսկալ խթանների միջոցով: Հետագայում դա նաև հիմք կհանդիսանա Հայաստանի ՓՄՁ-ներում որակի համակարգերի տարածման համար:

Մրցունակ կադրերի պատրաստում: Պետությունը պետք է խրախուսի մասնավոր հատվածի ներգրավումը սեփական կարիքներով մրցունակ աշխատուժի պատրաստման և նրան արտադրության տեխնոլոգիական վերազինման գործընթացներին ներգրավելու մեջ, այստեղ կօգտագործվեն կրթական դրամաշնորհները և հարկային խթանները: Մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի շրջանակում պետությունը նաև կաջակցի տնտեսվարողներին՝ զարգացնելու կառավարչական կարողությունները և խթանելու առաջավոր կառավարչական փորձի և տեխնոլոգիական լուծումների յուրացումը, այս նպատակով կտրամադրվեն կրթական դրամաշնորհներ, կկազմակերպվեն միջազգային համաժողովներ՝ Հայաստան բերելու առաջատար ընկերություններ:

Գյուղատնտեսություն

Գյուղը և գյուղատնտեսությունն Հայաստանում կարիք ունեն արագացված արդիականացման: Գյուղատնտեսության նկատմամբ պետական քաղաքականությունը պետք է բխի նրա բազմակի նշանակություն ունենալու հանգամանքից: Պարենային ապահովությունից զատ, գյուղատնտեսությունը կարևոր այլ դերեր ունի, ներառյալ՝ բնապահպանություն և բնապատկերի բարելավում, մշակույթի և ավանդույթի պահպանություն, ազգային անվտանգություն, ընդհանուր տնտեսության և շուկայի զարգացում, հանրային ներդաշնակության պահպանում: Գյուղատնտեսության զարգացումը կարիք ունի նորարական լուծումների՝ գյուղական համայնքների կենսագործունեության համար կայուն պայմանների ստեղծման, ապրանքային արտադրության արագ զարգացման, գյուղում կյանքի գրավչության բարձրացման նպատակով:

Գյուղատնտեսությունը գյուղական համայնքների տնտեսական գործունեության հիմնական ոլորտն է, սակայն այն այսօր մեծ մասամբ ցածր արդյունավետ է, և բերում է այդ համայնքներում ցածր կենսամակարդակի ու աղքատության: Այն զուգակցվում է ջրի, հողի և կենսաբազմազանության նկատմամբ անխնա վերաբերմունքով, որը քայքայում է գյուղերի երկարաժամկետ կենսագործունեության հիմքերը: Հայաստանում գյուղատնտեսությունը պետք է դառնա «խելացի» և «ճշգրիտ», օգտագործի նորարարական տեխնոլոգիաներ և կայուն (խնայող ու բնապահպան) գործելակերպ: Երկրագործը Հայաստանում պետք է ստանա իր բարձր առաքելությանն արժանի գնահատական ու վերաբերմունք հանրության և պետության կողմից, դառնա հարգի մասնագիտություն, իսկ կյանքը գյուղերում պետք է դառնա իր ընդհանուր գրավչությամբ համարժեք քաղաքային կյանքին:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում: Որպես առաջնահերթություն, մենք ձեռնամուխ ենք լինելու ջրային ռեսուրսների օգտագործման համակարգի էական բարեփոխումներին, մասնավորապես ջրի կուտակման, ջրագծերի արդիականացման և խնայող տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգման, ջրաչափման, և այլն) կիրառման ուղղությամբ: Մեր երկրով հոսող ջրային ռեսուրսների կուտակումը և արդյունավետ օգտագործումը կարևորագույն ռազմավարական խնդիր է, այդ նպատակով պետք է շարունակվի ջրամբարների կառուցումը և հիմնական ջրագծերի արդիականացումը՝ կորուստները նվազագույնի հասցնելու համար: Երկրում օգտագործվող ամբողջ ջուրը պետք է չափվի, յուրաքանչյուր տնտեսություն պետք է հստակ պատկերացնի իր կողմից օգտագործվող ջրի քանակը: Ջրի խնայողական օգտագործման նպատակով պետությունը կաջակցի ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրմանը, մյուս կողմից կսահմանափակի ջրի տրամադրումը այն տնտեսվարողներին, որոնք շարունակում են նրա անխնա օգտագործումը: Մենք հետևողական ենք լինելու այս հարցում, նպատակադրվելով

բարձրացնել ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ու ջրային ռեսուրսների հասանելիությունը առաջադեմ տնտեսավարողներին:

Հողային բարեփոխումներ: Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է նախաձեռնել նաև հողային բարեփոխումներ, ձգտելով գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման և խելամիտ խոշորացման: Այդ նպատակով, պետությունը պետք է օգտագործի ինչպես խրախուսման մեխանիզմներ, այնպես էլ արդյունավետ հարկային գործիքներ: Մասնավորապես, այն պետք է խրախուսի կոոպերացիաների ստեղծումը՝ նրանց տրամադրելով տեխնիկական աջակցություն և վարկավորման արտոնություններ, բնական ճանապարհով խոշորանալու համար: Զուգահեռ, նպատակահարմար է մեծացնել գույքահարկը այն գյուղատնտեսական նշանակության հողերի համար, որոնք ապահովված են անհրաժեշտ ենթակառուցվածքներով, բայց չեն օգտագործվում իրենց նպատակային նշանակությամբ, կամ ընդհանարապես չեն օգտագործվում, դրանով խրախուսելով այդ հողերի օտարումը արդյունավետ սեփականատերերին: Պետությունը պետք է նաև ներդնի բավարար խթաններ չմշակվող, հատկապես անջրդի հողատարածքների արդյունավետ մշակման համար, նպատակ դնելով հասնել առկա հողային ֆոնդի առնվազն 90%-ի օգտագործմանը:

Տեխնիկական աջակցություն: Պետությունը պետք է խթանի բարձրարժեք արտադրատեսակների արտադրությունը և աջակցի լոգիստիկ խնդիրների լուծմանը՝ մեծացնելով արտահանմանն ուղղված տնտեսությունների մրցունակությունը: Այս աջակցությունը պետք է լինի նպատակային, ուղղված այն ֆերմերային տնտեսություններին, որոնք պատրաստ են կիրառել նոր տեխնոլոգիաներ, և ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ՝ արտաքին շուկաներում մրցակցելու նպատակով: Համեմատաբար ցածրարժեք արտադրատեսակների արտադրության դեպքում, անհրաժեշտ է աջակցել դրանց հետագա մշակմանը և հնարավորինս մեծ հավելյալ արժեքի ստեղծմանը: Անասնապահության բնագավառում անհրաժեշտ է խթանել բարձրորակ կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունը, նպաստել հիվանդությունների կանխարգելմանը և բուժման խնդիրների լուծմանը, սպանդանոցների միջոցով մորթի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Պետությունը պետք է աջակցի նաև գյուղատնտեսական հիմնական շրջաններում բազմանպատակ տեխնիկական կայանների ստեղծմանը՝ պետություն-համայնք-մասնավոր համագործակցության միջոցով, հնարավորություն տալով արդիականացնել գյուղատնտեսության տեխնիկական միջոցները:

Կայուն զարգացում: Արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր է նաև օժանդակել կայուն զարգացմանը միտված ռեսուրսախնայող և ինքնաբավ գյուղատնտեսությանը, խթանել տեղական պարարտանյութերի (ներառյալ օրգանական) և անասնակերերի արտադրությունը, մշակել թույլատրելի պարարտանյութերի և սերմերի ներկրման ընթացակարգ և չափանիշներ՝ նվազեցնելով անհայտ որակի պարարտանյութերի կիրառությունը: Միաժամանակ անհրաժեշտ է կենտրոնացված զարգացնել տեղական սերմնաբուծությունը և տոհմաբուծությունը՝ ագրարային ուսումնական հաստատությունների ներգրավմամբ: Զուգահեռ, կարևոր է նաև աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ուղղված միջոցառումների խթանումը, որոնք պետք է ներառեն արդիական տեխնոլոգիաների, նորարական մոտեցումների և գիտական ձեռքբերումների ներդրումը, և դրանց համարժեք կրթական ծրագրերի իրականացումը: Պետությունը պետք է խրախուսի ագրարային կրթական հաստատությունների ներգրավումը գյուղատնտեսության մեջ՝ օգտագործելու նրանց ներուժը նորարարական մտքի զարգացման և պրակտիկ կիրառման համար, ներառյալ այդ հաստատությունների շուրջ գյուղատնտեսական ստարտափների և փորձարարական տնտեսությունների կլաստերների ձևավորման միջոցով:

Պարենային անվտանգություն: Գյուղատնտեսության զարգացումը վճռորոշ դեր ունի երկրի պարենային անվտանգության ապահովման հարցում: Բազային սննդամթերքի արտադրությունը պետք է ստանա պետության աջակցություն, նպատակ ունենալով հեռանկարում հասնել ներմուծման փոխարինելիության ավելի բարձր ցուցանիշների:

Պետության դերը գյուղատնտեսական արտադրանքի գնումների մասով պետք է ընդարձակվի, ձգտելով ստեղծել սննդամթերքի յուրաքանչյուր տարի թարմացվող և համալրվող ռազմավարական պաշարներ: Այն դեպքերում, երբ արդարացված է բնական աղետներից ապահովագրության կիրառումը, պետությունը պետք է խրախուսի նաև ֆերմերային տնտեսությունների կամավոր ապահովագրության պրակտիկան, դրանով պայմանավորելով իր կողմից տրամադրվող աջակցության չափը:

Արդյունավետության չափում և հաշվետվողականություն: Հայաստանում գյուղատնտեսության զարգացումը պահանջում է որակյալ չափման համակարգ, քանզի ներկա արդյունավետության չափումը խիստ մոտավոր է և չի տալիս կիրառվող ծրագրերի ազդեցության իրական պատկերը: Անհրաժեշտ է իրականացնել ոլորտի տվյալների գույքագրում և էականորեն բարելավել վիճակագրական տվյալների ճշտությունը, ներդնել մշտադիտարկման և սահմանված ձևի հանրային հաշվետվության համակարգ: Այդպիսի համակարգի կարևորագույն տարրերն են ամբողջական և ստուգելի ցուցանիշների սահմանումը, իրավիճակի կենտրոնացված մշտադիտարկումը, հանրային հաշվետվության տրամադրումը բոլոր տնտեսությունների կողմից, էական շեղումների պատճառների բացատրությունը, և արդյունքում մանիպուլյատիվ հնարավորությունների կտրուկ սահմանափակումը:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը իր կարևորությամբ Հայաստանի համար առանցքային ոլորտ է, և կարիք ունի պետության ակտիվ դերակատարության՝ շարունակական զարգացում ապահովելու նպատակով: Զբոսաշրջության զարգացման մեր ռազմավարությունը պետք է թույլ տա Հայաստանին ընդգրկվել աշխարհի առաջատար երկրների շարքում՝ մեկ բնակչին ընկնող ժամանումների, և զբոսաշրջային գործունեությունից ստացվող հասույթի մասով: Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը առաջիկա տասնամյակում պետք է հիմնված լինի հետևյալ ծրագրային սկզբունքների վրա.

- Հայաստանը պետք է դիրքավորվի որպես բազմադարյա կենդանի մշակույթի, անաղարտ բնական միջավայրի և ավանդական հյուրընկալության վրա հիմնված բարձրարժեք զբոսաշրջության կենտրոն, դրան պետք է համապատասխանության բերվի ամբողջ երկիրը իր բնակավայրերով, ենթակառուցվածքներով, մշակութային հուշարձաններով, բնական միջավայրով և կրթական համակարգով,
- Ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացումը լինելու է ազգային առաջնահերթություն, ներգնա և ներքին զբոսաշրջիկների թիվը պետք է գերազանցի 5 մլն այցելուն, որոնցից առնվազն 3 մլն՝ ներգնա,
- Հայաստանը պետք է ձևավորի զբոսաշրջության առումով կայուն, անվտանգ և ապահով երկրի հեղինակություն, և հետևողական ջանքեր գործադրի՝ այն ամրապնդելու համար,
- Հայաստանը պետք է կապված լինի աշխարհի հնարավորինս մեծ թվով երկրների հետ ավիացիոն հաղորդակցությամբ, շեշտը դնելով խոշոր երկրների վրա, որտեղից ակնկալվում են հիմնական զբոսաշրջային հոսքերը, փոխադարձ ազատականացնելով մուտքի արտոնագրերի տրամադրումը այդ երկրների հետ,
- Ռազմավարական զարգացման ծրագրում պետք է հաշվի առնել զբոսաշրջային տարածքների առանձնահատկությունները, զբոսաշրջության, ինչպես նաև հարակից ոլորտների հնարավոր դրական և բացասական ազդեցությունների հաշվեկշիռը տարածքային զարգացման վրա, և խելամիտ կարգավորել այդ գործունեության տեսակները և մասշտաբները:

Այս նպատակով, պետությունը պետք է կենտրոնանա մի շարք առանցքային գործառույթների վրա՝ ներառյալ Հայաստանի զբոսաշրջային բրենդի առաջմղման, տրանսպորտային մատչելիության բարձրացման, նոր զբոսաշրջային ռեսուրսների համակարգված զարգացման, և առկա ծառայությունների որակի բարելավման վրա:

Երկրի բրենդի առաջմղում: Հիմնական զբոսաշրջային շուկաներում, պետությունը պետք է մասնավոր հատվածի հետ համատեղ ձևավորի և շարունակաբար զարգացնի երկրի միասնական զբոսաշրջային բրենդը, և իրականացնի դրա առաջմղման պարբերական բարձրորակ արշավներ, հատկացնելով դրան զբոսաշրջային գործունեությունից ստացվող հասույթների 0,5-1,0%: Այս աշխատանքը պետք է համակարգել հիմնական ավիաընկերությունների և հյուրանոցային ցանցերի հետ, որոնք ներկայացված են Հայաստանում, և հանդիսանում են առանցքային շահառուներ:

Տրանսպորտային մատչելիության բարձրացում: Պետությունը պետք է նպաստի Հայաստանի տրանսպորտային մատչելիության բարձրացմանը՝ խրախուսելով մրցակցությունը և նոր օպերատորների ներգրավումը ավիացիոն ոլորտում, օժանդակելով տեղական ավիափոխադրողների կայացմանը, ընդլայնելով օդանավակայանների ցանցը, և նպաստելով համակարգում բարենպաստ գնագոյացմանը: Ցամաքային հաղորդակցության բնագավառում, պետությունը ներդրումներ է կատարելու Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան հաղորդակցության դյուրացման նպատակով, իսկ Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքական խնդիրների հանգուցալուծման դեպքում՝ նաև այդ ուղղությամբ:

Զբոսաշրջային ռեսուրսների զարգացում: Պետությունը աջակցելու է Հայաստանում զբոսաշրջային ռեսուրսների համակարգված, «խելացի» և արդյունավետ զարգացմանը, իրականացնելով նոր հանգստավայրերի գոտիավորում և միասնական ռազմավարական ծրագրերով զարգացում մասնավոր հատվածի հետ համատեղ, ժամանակակից ճանապարհային ցանցի զարգացում՝ բնակավայրերի, հանգստավայրերի, պատմա-մշակութային հուշարձանների և ժամանցի այլ վայրերի միջև, հիմնական պատմա-մշակութային հուշարձանների և բնական տարածքների պահպանություն, ըստ անհրաժեշտության վերականգնում և որակյալ կոմերցիալիզացիա, նաև ընդհանուր ներուժը ուղղորդելով զբոսաշրջային նոր ձևերի (գյուղական, էկո, արկածային, և այլն) զարգացմանը:

Որակի կառավարում: Արդեն հիմա, երբ Հայաստանում զբոսաշրջությունը զգալի ծավալների է հասել, առանցքային է դառնում մատուցվող ծառայությունների որակի կառավարումը և շարունակական բարելավումը, թույլ չտալու երկրի ընդհանուր հեղինակության անկում: Պետությունը պետք է իրականացնի ծառայությունների որակի վերահսկողություն, շեշտը դնելով զբոսաշրջային արժեշղթայի յուրաքանչյուր մասնակցի համար (հյուրանոցներ, տուրօպերատորներ, տրանսպորտային ընկերություններ, ռեստորաններ, ժամանցի վայրեր, և այլն) որակի ստանդարտների հաստատման վրա, ըստ այդմ հավատարմագրման, և դրանց համապատասխանության մշտադիտարկման, ինչպես նաև ստանդարտներին չհամապատասխանող կամ պարբերաբար խախտող կազմակերպությունների և անհատների արգելափակմանը՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցելուց:

Աշխատանքի շուկա

Ժամանակակից աշխատաշուկան հատուկ ոլորտ է, որը կարևորագույն դեր է խաղում տնտեսական համակարգում: Այդ տեսակետից մեզ համար առաջնահերթ են այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են աշխատանքի արտադրողականությունը և աշխատողների իրական վարձատրությունը, աշխատուժի տնտեսական մասնակցության և զբաղվածության մակարդակը, իրական և մասնակի գործազրկությունը, աշխատանքի անվտանգությունը, աշխատատեղերի շարժը և վերաբաշխումը ըստ ոլորտների: Ներկայումս Հայաստանում աշխատունակ բնակչության տնտեսական մասնակցությունը չի գերազանցում 60%-ը, գործազրկությունը կայուն գերազանցում է աշխատուժի 20%-ը, աշխատանքի միջին

արտադրողականությունը 3-4 անգամ ցածր է, քան զարգացած երկրներում, և աշխատողների 1/3-ից ավելին ինքնազբաղված են՝ այս բոլորը գալիս է փաստելու, որ Հայաստանում աշխատանքի շուկան գտնվում է ծայրահեղ անբարենպաստ վիճակում:

Ներկայումս աշխատանքի շուկայի պետական կարգավորումը իրականացվում է մի քանի հիմնական ուղղությունների շրջանակներում՝ զբաղվածության խթանում, ներառյալ պետական հաստատություններում և ընկերություններում աշխատատեղերի պահպանման միջոցով, ազատվող կադրերի մասնակի վերապատրաստում, և աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեության միջոցով սահմանափակ աջակցություն գործազուրկ քաղաքացիներին:

Մեր նպատակն է ստեղծել պայմաններ, որոնց դեպքում հնարավորինս շատ քաղաքացիներ իրենք կարող են իրենց ապահովել որակյալ և արժանապատիվ աշխատանքով: Մենք շահագրգռված ենք մրցունակ տնտեսության կառուցմամբ, որի գործունեության որակից է կախված սոցիալական և քաղաքական կայունությունը: Հիմնական չափորոշիչների թվում է տնտեսության ադապտացումը, հատկապես բնակչության զբաղվածության առումով, շուկայի փոփոխություններին: Ներկայումս համաշխարհային տնտեսությունում իրականացող կառուցվածքային փոփոխությունների միտումը նոր պահանջներ է ձևավորում աշխատանքի շուկայի նկատմամբ, առաջնային են դառնում աշխատողների գիտելիքն ու հմտությունները, և դրանց արագացված թարմացումը: Պետությունն այստեղ կոչված է ապահովելու երկրի սոցիալական և քաղաքական զարգացման կուրսի համապատասխանությունը շուկայի մարտահրավերներին, իր գործիքակազմի միջոցով աջակցելով քաղաքացիների ադապտացմանը շուկայի ներկա և ապագա պահանջներին:

Աշխատանքային շուկայի կայուն զարգացման նպատակով մենք առաջին հերթին նախատեսում ենք տնտեսության մեջ նոր ներդրումներ ներգրավել, ինչը թույլ կտա արդյունքում որակյալ աշխատատեղեր ստեղծել: Սակայն արդի միջազգային փորձը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացումը միարժեք չի հանգեցնում բնակչության համար որակյալ աշխատատեղերի աճին, հաճախ հակառակ գործընթացներ են տեղի ունենում արտադրության ավտոմատացման հաշվին, առաջացող աշխատատեղերն էլ գրավում են աղքատ երկրներից ներգաղթողները: Այս երևույթները չեզոքացնելու համար, Հայաստանը պետք է կենտրոնանա տնտեսության այն ճյուղերի զարգացման վրա, որոնք աշխատատար են, և հեշտ չեն ավտոմատացվում (օրինակ, զբոսաշրջություն, բժշկական ծառայություններ, թեթև արդյունաբերություն, և այլն), և պետությունն էլ իր տնտեսական քաղաքականության խթանները պետք է կենտրոնացնի այսպիսի ոլորտների վրա:

Զբաղվածության հետ կապված խնդիրների լուծումը մեծապես կախված է նաև կրթության ազգային համակարգի որակից և ճկունությունից: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնելու հայաստանյան տնտեսության համար հեռանկարային մասնագիտացումների ուսուցմանը, և համապատասխան ծրագրեր ենք ներդնելու դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և բուհերում, որտեղ պետությունը պետպատվերի միջոցով պետք է խրախուսի այն մասնագիտությունները, որոնք ապագա մեծ պահանջարկ ունեն: Բացի այդ, պետությունը մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ պետք է ապահովի հասուն բնակչության ադապտացումը վերապատրաստման դասընթացների միջոցով, այս ոլորտը առանձին զարգացման կարիք ունի: Աշխատուժի շուկայում ևս մեկ կարևոր խնդիր է տարածքային անհամաչափ զարգացման աստիճանական հաղթահարումը: Կան բազմաթիվ բնակավայրեր, որտեղ բավարար աշխատատեղեր չկան այն պատճառով, որ արտադրական ձեռնարկությունների տեղաբաշխումն այնտեղ ներկայումս անշահավետ է, իսկ սպասարկման ոլորտը՝ թերզարգացած: Պետությունը կարող է իր տարածքային քաղաքականության միջոցով խթանել աշխատատեղերի ստեղծումը այդպիսի բնակավայրերում՝ տնտեսական, գիտա-կրթական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման, և հարկային արտոնությունների միջոցով, ինչպես նաև աջակցելով տեղում միկրո, փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացմանը, այսպիսի ընկերությունները կարող են մարդկանց

լրացուցիչ զբաղվածությամբ ապահովել ոչ մեծ բնակավայրերում: Անհրաժեշտ է նաև ինքնազբաղվածներին տալ բարենպաստ կարգավիճակ, և խրախուսել նրանց բացահայտումը և գրանցումը, պետական աջակցությունից օգտվելու նպատակով:

Վերջապես, ՀՀ Զինված ուժերում, ի լրումն ռազմական պատրաստության, պետք է իրականացվի քաղաքացիական մասնագիտությունների դասավանդում բոլոր ցանկացողներին, պետք է դասավանդվեն օտար լեզուներ և այլ առարկաներ, որոնք կօգնեն ժամկետային զինծառայողների նախապատրաստմանը քաղաքացիական կյանքին: Անհրաժեշտ է նաև մշակել զինծառայողների սոցիալական ադապտացման և աշխատանքի տեղավորման ուղղորդված ծրագրեր, հաշվի առնելով, որ զորացրումից հետո, նրանք առավել սոցիալապես խոցելի են, և դեռևս անպատրաստ քաղաքացիական կյանքի:

Տարածքային համաչափ զարգացում

Հայաստանում տարածքային անհամաչափ զարգացումը անկախության շրջանում է դարձել է երկրի առավել կրիտիկական մարտահրավերներից մեկը: Երկրի բնակչության մոտ 37%-ը և ՀՆԱ մոտ 55%-ը կենտրոնացված են մայրաքաղաքում, այն դեպքում, երբ մնացած բոլոր մարզերի բնակչությունը վերջին տասնամյակների ընթացքում շարունակաբար նվազում է՝ անբավարար սոցիալ-տնտեսական զարգացման, բարձր գործազրկության, և արդյունքում, ցածր կենսամակարդակով պայմանավորված, արտագաղթի պատճառով: Տարածքային զարգացման մեր քաղաքականության նպատակը հանդիսանալու է մայրաքաղաք Երևանի և ՀՀ մարզերի միջև եղած անհավասարությունների նվազեցումը, ինչպես նաև հետագա համաչափ զարգացումը՝ աջակցելով մարզերի ենթակառուցվածքների արագացված զարգացմանը, մարդկային կապիտալի և բիզնես միջավայրի մրցունակության բարձրացմանը, մենք ձգտելու ենք հասնել մարզերի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, ներդրումների ներգրավմանը, տնտեսական գործունեության ակտիվացմանը, և արդյունքում արտագաղթի մակարդակի նվազեցմանը: Տարածքային համաչափ զարգացումը պետք է հասցեագրի այն ֆունդամենտալ խնդիրը, որ Երևանը, որպես մայրաքաղաք, փաստացի ավելի բարեկեցիկ և հարմար է բնակության համար, ինչպես նաև ավելի գրավիչ է բիզնեսի համար, դա էլ բերում է այնտեղ մարդկանց և կապիտալի շարունակական կենտրոնացման: Որպեսզի այս ընթացքը շրջվի կամ էլ դանդաղի, մարզերը պետք է ստանան պետության կողմից այնպիսի արտոնություններ, որոնք գոնե մասնակիորեն, կհավասարակշռեն Երևանի առավելությունները, իսկ տարբեր բնակավայրերի միջև ներկայումս գոյություն ունեցող բնակչության եկամուտների հսկայական տարբերությունները ժամանակի ընթացքում կնվազեն: Այդ արտոնությունների թվում պետք է լինեն՝

- Առաջանցիկ ներդրումները մարզերի ենթակառուցվածքների զարգացման մեջ՝ պետական բյուջեի հաշվին, ներառյալ ինժեներական ենթակառուցվածքների և բնակարանային-կոմունալ ծառայությունների արդիականացում, մարզային, միջմարզային և գյուղական ճանապարհների կառուցում և վերանորոգում, դրանց կապակցում հիմնական մայրուղիներին,
- Խմելու և ոռոգման ջրի, կեղտաջրերի, աղբի հեռացման համապետական արդյունավետ համակարգի ստեղծում, կենտրոնացած պետական ներդրումներ՝ աջակցելու այն համայնքերին, որոնք բախվում են այս ոլորտում խնդիրների,
- Համայնքային բյուջեների սուբսիդավորում պետական բյուջեից՝ սեփական հարկային եկամուտներին համամասնական սկզբունքով, համայնքների միջև մրցակցության խթանում՝ լավագույն զարգացման ծրագրերի ոլորտում,

- Պետական կառույցների, գիտական և կրթական հաստատությունների ապակենտրոնացում և մասնակի տեղափոխում տարբեր մարզային քաղաքներ, դրանց հիման վրա մի քանի առաջատար քլաստերների ձևավորում,
- Տնտեսական աճի նոր ուղղությունների ձևավորում, մասնավորապես, նորարարական, բնապահպանական և սոցիալական կողմնորոշմամբ, ինդուստրիալ, հետազոտական և տուրիստական գոտիների ստեղծում մարզերում,
- Սահմանամերձ տարածաշրջաններում, մշակող արդյունաբերության, բարձրարժեք գյուղատնտեսության և էկո տուրիզմի խթանում, արտոնյալ վարկային և հարկային քաղաքականության, և պետական կատալիտիկ ներդրումների միջոցով,

Հաշվի առնելով յուրաքանչյուր մարզի առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները, մենք նպատակահարմար ենք գտնում նրանց համար մշակել և իրագործել գործողությունների այնպիսի համակարգ, որը իրական պայմաններ կստեղծի տվյալ մարզի տնտեսական և սոցիալական զարգացման համար: Հեռանկարում, Հայաստանում պետք է առաջանան մարզային մի շարք բնակավայրեր, որոնք իրենց բնակության և բիզնես միջավայրի գրավչությամբ, կարող են համեմատվել մայրաքաղաքի հետ, և կդառնան բնակչության կենտրոնացման նոր բնական հանգույցներ:

Դրամավարկային և ֆիսկալ քաղաքականություն

Հայաստանը արդեն ձևավորվել է որպես ֆինանսապես կայուն երկիր, և դա կարևորագույն տնտեսական առավելություն է: Դրամավարկային քաղաքականությունը պետք է շարունակի ապահովել ֆինանսական կայունությունը և ցածր գնաճը, միաժամանակ պարբերաբար նպաստելով տնտեսության չափավոր աշխուժացմանը: Դրամավարկային քաղաքականությունը նաև պետք է նպաստի Հայաստանում բանկային կապիտալի արագընթաց աճին, և դրա հաշվին ավանդային և վարկային տոկոսադրույքների բնականոն նվազմանը, ֆինանսական ծառայությունների որակի աճին, և գործիքակազմի ընդլայնմանը: Անհրաժեշտ է նաև, որ բանկերը Հայաստանում պետք է մնան քաղաքական ազդեցություններից զերծ, և շարունակեն պրոֆեսիոնալ կերպով իրականացնել իրենց շուկայական գործառույթները:

Ընթացիկ և միջնաժամկետ ֆիսկալ քաղաքականությունը պետք է թիրախավորի բիզնեսի ակտիվության, ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացումը, երկարաժամկետ հեռանկարում նպաստելով կայուն բարձր տնտեսական աճի պահպանմանը: Այն պետք է նաև խելամիտ բալանս ապահովի տնտեսական աճի և պետության հիմնական ծախսային պարտավորությունների միջև: Այդ նպատակով մենք թիրախավորում ենք պետական համախառն եկամուտները հասցնել ՀՆԱ մոտ 30%-ի առաջիկա 10 տարում, որպեսզի ադեկվատ լուծում ստանան մեր ծրագրում սահմանված բոլոր կարևորագույն խնդիրները:

Ներդրումային գրավչության և ազգային տնտեսության մրցունակության բարձրացման, արտահանման խթանման, հարկային վարչարարության բարելավման ինչպես նաև պետության ծախսային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով կարևոր ենք համարում հետևյալը.

- Առաջիկա տասնամյակում գերակա ճանաչել այն սկզբունքը, որ հարկային փոփոխությունները պետք է խթանեն տնտեսական ակտիվությունը, և չբարձրացնելով հարկային բեռը օրինապահ հարկատուների համար, ընդլայնեն հարկման բազան, կրճատեն ստվերային եկամուտների ստացման հնարավորությունը, գործընկերային հարթություն տեղափոխեն հարկատու և հարկահավաք հարաբերությունները: Մասնավորապես, Հարկային օրենսգիրքի դրույթները ենթակա չեն փոփոխության, ընդունման պահից 5 տարվա ընթացքում,

եթե առաջարկվող փոփոխությունները չեն նախատեսում հարկային հարաբերությունների դրույքաչափերի և/կամ վարչարարության բարելավում ի օգուտ տնտեսավարողների:

- Այն պայմաններում, երբ Հայաստանում արդյունահանվող բնական հանածոների միջազգային գների մեծ մասը շարունակաբար աճում է, նպատակահարմար ենք համարում բարձրացնել բնօգտագործման վճարների և բնապահպանական հարկերի դրույքաչափերը, բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու և շրջակա միջավայրի պաշտպանության լավագույն տեխնոլոգիաների ներդրումը խրախուսելու նպատակով:
- Համաներում հայտարարել անցյալում ստվերային դաշտում իրականացրած գործունեության արդյունքում ստացված ստվերային եկամուտների նկատմամբ, եթե դրանք չեն առնչվում այլ բնույթի տնտեսական հանցագործությունների: Միաժամանակ, համաներումից հետո ընկած ժամանակաշրջանի համար խստացնել պատասխանատվությունը հարկվող եկամուտները չարամտորեն թաքցնելու համար:
- Գույքի հարկման մասով նախատեսել հարկման բազայի համապատասխանեցում գույքի շուկայական արժեքին, հարկումը իրականացնել պրոգրեսիվ սանդղակով՝ 0,5-2% դրույքաչափով, բարձր հարկումը կիրառելով շքեղության առարկաների վրա: Գույքի օգտագործումը խթանելու նպատակով արտադրական և գյուղատնտեսական նշանակության գույքն ըստ նպատակային նշանակության չօգտագործվելու պարագայում կիրառել դրույքաչափը բարձրացնող գործակից, եթե առկա են օգտագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Գույքահարկից ստացվող եկամուտները ամբողջապես ուղղել համայնքներին՝ անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման և արդիականացման համար, ինչը կնպաստի գույքի շուկայական արժեքի աճին և օգտագործման արդյունավետության բարձրացմանը:
- Ժառանգության և նվիրատվության կարգով ստացված խոշոր եկամուտները ներառել հարկվող եկամուտների կազմում, սահմանելով 5% դրույքաչափ և մինչև 500 մլն դրամ չհարկվող շեմ ժառանգության, իսկ նվիրատվության դեպքում՝ 5% դրույքաչափ մերձավոր հարազատների համար մինչև 25 մլն դրամ տարեկան չհարկվող շեմով և 20% դրույքաչափ ոչ մերձավոր հարազատների համար առանց չհարկվող շեմի:
- Նվազեցնել շահութահարկի դրույքը և միևնույն ժամանակ բարձրացնել շահութաբաժնի հարկման դրույքը, խրախուսելու ընկերություններին ներդնել շահույթը զարգացման մեջ: Այս ճշգրտումը կխթանի գործարարներին պահել շահույթը ընկերությունում և ուղղել այդ ռեսուրսները զարգացմանը և նոր արտադրության միջոցների ձեռքբերմանը: Կապիտալի հավելաճից առաջացած եկամուտը ևս բերել հարկման դաշտ, նպատակ ունենալով կանխել լեգալ ճանապարհով գերշահույթների դուրս բերումը հարկվող եկամուտների կազմից:

Պետության մասնակցությունը տնտեսական զարգացմանը

Պետության մասնակցությունը տնտեսության մեջ պետք է լինի արդյունավետ, խրախուսի մրցակցությունն ու նորարարությունը, և հիմնվի կիրառվող գործիքակազմի համալիր ազդեցության գնահատականի վրա: Պետությունը նաև պետք է նախաձեռնի և խրախուսի տնտեսության զարգացման առանցքային նախագծերը, որոնք հնարավոր չէ իրականացնել միայն մասնավոր հատվածի ներգրավմամբ: Պետության անմիջական մասնակցությունը տնտեսական գործունեության մեջ պետք է սակայն սահմանափակ լինի՝ խուսափելու շուկաներում մրցակցության ձևախեղումից և հանրային միջոցների ոչ արդյունավետ օգտագործումից: Պետական ներդրումները պետք է ուղղվեն նոր տնտեսական ենթակառուցվածքների ստեղծմանը, առկա ռազմավարական ակտիվների պահպանմանը և

բարելավմանը: Ներդրումների առաջնահերթությունները մոտակա տասնամյակում պետք է դառնան ճանապարհները, ջրային ռեսուրսների կուտակման և բաշխման համակարգը, ընդհանուր օգտագործման էներգետիկ ենթակառուցվածքը և կարևորագույն ռազմարդյունաբերական կարողությունները: Հանրային ծառայությունների կարգավորմամբ պետությունը պետք է ապահովի այլ ենթակառուցվածքային ծառայությունների բարձրորակ մատուցումը և հասանելիությունը՝ համահունչ տնտեսության զարգացման պահանջներին: Բացի ենթակառուցվածքներում ներդրումներից՝ պետությունը կարող է հատուկ դեպքերում իրականացնել նաև խոշորամասշտաբ կատալիտիկ ներդրումային նախագծեր, որոնք ուղղված կլինեն տնտեսական աճի նոր հնարավորությունների ստեղծմանը, խոշորամասշտաբ մասնավոր ներդրումների խթանմանը (օրինակ՝ արդյունաբերական կամ զբոսաշրջային գոտիներ, գիտահետազոտական կենտրոններ, և այլն):

ԱՌՈՂՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հանրային զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմքում դրվելու են նպատակներ, որոնք էականորեն կբարելավեն ՀՀ բնակչության կենսամակարդակը և կյանքի որակը, և որոնք վերաբերում են մարդու տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների իրականացմանը մեկ հիմնական սկզբունքով՝ ոչ ոքի չանտեսել: Այս սկզբունքի հիմքում ընկած է «արդար իրավահավասարություն» հասկացությունը, որը ենթադրում է, որ պետությունը երաշխավորում է, որ հանրային զարգացմանն արդյունքները հասանելի են բոլորին և յուրաքանչյուրին, այդ թվում՝ սոցիալապես խոցելի խմբերին, և իր քաղաքականության միջոցով ապահովում է հանրային տարբեր խմբերի համար սոցիալական մոբիլություն և մարդկային զարգացման հնարավորություններ:

Հեռանկարում, կյանքի որակը Հայաստանում պետք է բնութագրվի աշխարհի առաջադեմ և սոցիալապես ներդաշնակ երկրների քաղաքացիներին հասու ապրելակերպի և կենսաապահովման չափանիշներով. այդպիսիք են՝ ծնելիության գործակիցը մեկ կնոջ համար միջինում 2 երեխայից ավել (ցանկալի է միջինում 2,5 երեխա), կյանքի միջին տևողությունը՝ 80 տարուց ավել, ամուսնալուծությունների հարաբերակցությունը ամուսնություններին՝ 20%-ից պակաս, աշխատանքի և հանգստի իրավունքը, կրթության և բժշկական ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, բարենպաստ բնական միջավայրը, անձնական անվտանգությունը, հանրային կյանքին մասնակցության հնարավորությունները, և այլն: Ընդհանուր առմամբ, Հայաստանը առաջիկա տասնամյակում պետք է հայտնվի ՄԱԿ Մարդկային զարգացման դասակարգմամբ առավել բարձր զարգացած երկրների խմբում, համընթաց զարգացման դեպքում սա բացարձակ իրատեսական խնդիր է:

Միևնույն ժամանակ, մեր նպատակն է Հայաստանում ձևավորել արժեքակենտրոն և մշակութահեն հասարակություն, որում փոխհարաբերությունները խարսխված են ազգային և համամարդկային արժեքների վրա, որում հարատևում և զարգանում է ազգային մշակույթը, և որն համապարփակ ընկալում և յուրացնում է համաշխարհային մշակույթի բարձր արժեքները: Մեր նպատակն է նաև ձևավորել հասարակություն, որում կրթվածությունը և իմաստասիրությունը առանցքային որակներ են, բարեկրթությունը՝ ամենօրյա նորմ, համերաշխությունը և հանդուրժողականությունը՝ ընդունված կենսակերպ:

Այս նպատակով, ընդհանրական հանրային ոլորտը՝ սոցիալական ապահովությունը, կրթությունը, մշակույթը, սպորտը, առողջապահությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, պետք է դիտվեն պետական քաղաքականության առաջնահերթություն՝ տարբեր հանրային խմբերի կենսական պահանջմունքների գնահատականի հիման վրա, և պետությունը պետք է մշակի ճկուն լուծումներ և հատկացնի խելամիտ միջոցներ՝ այդ պահանջմունքների բավարարման համար: Պետությունը այսպիսով անհատ-հասարակություն-պետություն եռամիասնության բոլոր մակարդակներում պետք է խթանի սոցիալական կապիտալի զարգացումը՝ վստահության, մարդասիրության և հանրային համերաշխության սկզբունքների հիման վրա:

Սոցիալական ապահովում

Հայաստանում սոցիալական ապահովումը ավանդաբար բարդ խնդիր է, քանի որ պետությունից սոցիալական աջակցություն ստացող անձանց թիվը գրեթե հավասար է հարկատու անձանց թվին, և սա պետության համար խիստ ծանր ֆինանսական բեռ է ստեղծում: Մենք վերակառուցելու ենք սոցիալական պաշտպանության համակարգը նոր տրամաբանությամբ՝ հիմնական շեշտը դնելով ոչ թե մարդկանց նպաստների միջոցով համահարթեցված և սահմանափակ սոցիալական աջակցություն տրամադրելու, այլ նրանց համար հավասար մեկնարկի և իրավունքների լիարժեք իրականացման հնարավորություններ ձևավորելու, սոցիալական մոբիլություն ապահովելու, և ողջ կյանքի ընթացքում զարգանալուն նպաստող միջավայր ստեղծելու վրա: Սա հեռանկարում պետք է հանգեցնի զբաղված անձանց թվի աճին, պետության հարկային բազայի ընդլայնմանը, և արդյունքում սոցիալական անհավասարության նվազմանը:

ՀՀ քաղաքացու կյանքի որակի բարելավման համար առաջին հերթին պահանջվում է հիմնարար կարիքների երաշխավորված և արդարացի բավարարվածություն: Սոցիալական ապահովության հիմնական թիրախները պետք է լինեն երիտասարդ և բազմազավակ ընտանիքները, գործազուրկները և թերզբաղվածները, պետական ծառայողները, հաշմանդամները, տարեց քաղաքացիները: Ելնելով Հայաստանի առանձնահատուկ պայմաններից, կիրառվելու են հետևյալ մոտեցումները՝

Երիտասարդ և բազմազավակ ընտանիքներ: Յուրաքանչյուր նորապսակ ընտանիքին պետության կողմից կտրամադրվի միանվագ գումար ընտանեկան կյանքի սկզբնական կայացման ծախսերի շոշափելի մասը հոգալու համար: Ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխայի համար պետությունը կտրամադրի պրոգրեսիվ աճող գումար, իսկ 5-րդ երեխայից սկսած պետությունը կտրամադրի բնակարան և/կամ համարժեք միջոցներ՝ բնակության վայրում այն գնելու համար: Պետությունը նաև կապահովի երեխաների համար նախակրթական հնարավորություններ՝ բնակության վայրում:

Գործազուրկներ և թերզբաղված քաղաքացիներ: Պետությունը կապահովի գործազուրկ քաղաքացիներին սոցիալական նվազագույն նպաստով, զուգահեռ տրամադրելով թիրախային միջոցներ՝ ընդհուպ մինչև երկամյա մասնագիտական վերապատրաստման կուրսեր անցնելու, և նոր պահանջված մասնագիտություն ձեռք բերելու համար: Պետությունը նաև կարդիականացնի աշխատանքի ծառայությունները՝ նպաստելու գործազուրկ և թերզբաղված քաղաքացիների մասնագիտական վերակողմորոշմանը և արագ աշխատանք գտնելուն: Այն քաղաքացիները, ովքեր ցանկություն կհայտնեն իրենց մշտական բնակության վայրը փոխել և վերաբնակվել սահմանամերձ բնակավայրերում, պետությունից կստանան համապատասխան աջակցություն՝ նոր վայրում կազմակերպելու իրենց կյանքը և աշխատանքային գործունեությունը:

Պետական ծառայողներ: Պետությունը բոլոր պետական ծառայողներին բնակարանային կամ կենցաղային պայմանների բարելավման նպատակով կտրամադրի արտոնյալ վարկային միջոցներ, իսկ պայմանագրային զինծառայողներին, ուսուցիչներին, և պետական բժշկական հաստատությունների աշխատակիցներին նաև կհատուցի բնակարանների ձեռքբերման ծախսերը՝ տվյալ պետական ծառայողի մոտ սահմանված նվազագույն աշխատանքային ստաժի առկայության դեպքում: Պետությունը նաև իրենց հիմնական բնակավայրերից հեռու աշխատանք ստանձնող պետական ծառայողներին կապահովի կահավորված կացարաններով կամ կտրամադրի համարժեք դրամական փոխհատուցում՝ դրանք վարձակալելու համար:

Հաշմանդամություն ունեցող անձիք: Պետությունը նվազագույն աշխատավարձի և ավել չափով կապահովի զինվորական ծառայության, աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում, և կամ այլ պայմաններում հաշմանդամություն ձեռք բերած և աշխատունակությունը կորցրած անձանց, կհոգա նրանց առողջապահության ծախսերը, պայմաններ կստեղծի մասնագիտական վերապատրաստման, աշխատանքային գործընթացներում և կյանքի այլ ոլորտներում հնարավոր ներգրավվածության համար, կապահովի նրանց համար անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծում:

Տարեց քաղաքացիներ: Պետությունը կիրականացնի տարեց քաղաքացիների կենսաթոշակային ապահովություն՝ հիբրիդ սխեմայի միջոցով: Բոլոր տարեց քաղաքացիները Հայաստանում կստանան երաշխավորված նվազագույն կենսաթոշակ՝ նվազագույն աշխատավարձի 80%-ի չափով, դրան կգումարվեն տարբեր հավելավճարներ՝ կախված դաստիարակած երեխաների թվից, պետության առջև ունեցած ծառայություններից, և այլն: Ի լրումն, բոլոր այն քաղաքացիները, որոնք աշխատանքային գործունեություն են իրականացրել իրենց կյանքի ընթացքում, կմասնակցեն կուտակային կենսաթոշակային համակարգին, այն հաշվարկով, որ հավելյալ կենսաթոշակային միջոցներ ստանան իրենց միջին աշխատավարձի մոտ 40 %-ի չափով: Կյանքի տևողության և որակի աճին զուգահեռ, աստիճանաբար կբարձացվի նաև կենսաթոշակային տարիքը, այն հաշվարկով, որ ավելի շատ քաղաքացիներ ունենան երաշխավորված աշխատանքի իրավունք, և հնարավորություն ունենան իրենց անմիջական վաստակով ապահովել արժանապատիվ կենսամակարդակ: Կանանց դեպքում, կենսաթոշակային տարիքը կորոշվի, ելնելով նաև նրանց դաստիարակած երեխաների քանակից:

Հեռանկարում, Հայաստանում պետությունը պետք է ունենա սոցիալական ուղղվածություն, և ավելացնի պետական բյուջեի միջոցով տնտեսական արդյունքի վերաբաշխումը սոցիալական աջակցության կարիք ունեցող խմբերին: Հաշվի առնելով սոցիալական ապահովության ներկայացված ուղղությունները, պետությունը պետք է այս ոլորտին հատկացնի ՀՆԱ 10-12%-ը, ներկայիս 7%-ի փոխարեն: Պետությունը պետք է օգնության ձեռք մեկնի կարիքավորին, նեցուկ լինի նրանց ոտքի կանգնելուն, սակայն չստեղծի չաշխատելու խթաններ, աջակցի անհատին դժվարին կացությունից դուրս գալու, բայց ոչ այդ պայմաններին հարմարվելու, կամ պետության աջակցությունը չարաշահելու: Պետության սոցիալական ծրագրերը պետք է մշակվեն այնպես, որ չբերեն աշխատանքից խուսափելու, միջոցների վատնման և կոռուպցիոն դրսևորումների, և չաղավաղեն սոցիալական արդարություն սկզբունքը: Այս նպատակով, սոցիալական ապահովության համակարգը պետք է նաև լիակատար թվայնացվի, դարձվի թափանցիկ, նրանում առկա տեղեկությունները քաղաքացիների մասին պետք է պարբերաբար թարմացվեն և բաղդատվեն նրանց մասին այլ պետական համակարգերի տվյալների հետ:

Կրթություն

Կրթության ապահովումը, դրա կազմակերպումն ու պայմանների շարունակական բարելավումը բխում է պետության և հասարակության կենսական շահերից: Զարգացած, արդյունավետ կրթական համակարգն այն հզոր ռեսուրսն է, որի հիման վրա պետք է տեղի ունենա տնտեսական զարգացումը, առողջ ու ներդաշնակ հասարակության կառուցումը Հայաստանի Հանրապետությունում: Պետությունը, զարգացնելով և կատարելագործելով երկրի կրթական համակարգը, կարող է դարձնել այն հենասյուն, որի վրա հենվում է հետագա զարգացման ամբողջ տրամաբանությունը: Այս ընդհանրական նպատակին արդյունավետորեն ծառայելու համար, Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի խորքային բարեփոխումները հրամայական են: Կրթական համակարգի հիմքը ուսուցիչն է, կրթության գործընթացի առանցքը՝ սանը, աշակերտը, ուսանողը, իսկ կրթական ծրագրերը պետք է բխեն կյանքի արդիական պահանջներից ու համապատասխանեն հանրության ու տնտեսության կարիքներին, լինեն միջազգայնորեն մրցունակ, ծառայեն արժեքահեն և հայրենասեր անհատի ձևավորմանը: Հենվելով վեջնարդյունքի վրա, կրթության յուրաքանչյուր աստիճան պետք է միտված լինի.

- անձի ինքնուրույն, ակտիվ գործունեությամբ՝ սովորելու նկատմամբ խորքային հետաքրքրություն և պահանջ ձևավորելուն,

- տրամաբանական, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը, իրական խնդիրներ լուծելու և կիրառական արդյունք ստանալու կարողությանը,
- հոգևոր, զգացական և մշակութային իմացության և կարողությունների ձեռքբերմանը, հստակ լեզվամտածողության, խոսքի և հաղորդակցության արվեստի զարգացմանը,
- ազգային ինքնության և քաղաքացիական գիտակցության հիմքերի ձևավորմանը,
- շուկայական տնտեսության պայմաններում մասնագիտական հաջողությունների հասնելու համար կարողությունների ձևավորմանը, և արդի տեխնոլոգիաների կիրառական իմացությանը

Կրթական համակարգը պետք է դառնա իրապես ներառական՝ երևույթի լայն իմաստով: Հեռանկարում ցանկացած ոք Հայաստանում պետք է հնարավորություն ունենա բարձրորակ դպրոցական կրթություն ստանալ՝ անկախ իր բնակավայրից, սոցիալական ու տնտեսական դիրքից ու վիճակից: Հատուկ ուշադրության պետք է դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ/ անձանց, և փոքր բնակավայրերին, որտեղ դպրոցական կրթության որակի ապահովումը մշտապես եղել ու մնում է խնդրահարույց: Միևնույն ժամանակ, ներառականություն պետք է ապահովվի նաև առավել ընդունակ սովորողների համար, որոնք պետք է հնարավորություն ստանան կրթական համակարգի շրջանակներում լիարժեք իրացնել իրենց կարողությունները: Այս նպատակով, պետությունը պետք է շարունակաբար ներդնի կրթության կազմակերպման ճկուն, սոցիալապես արդարացված լուծումներ, որոնք հաշվի են առնում բոլոր ներգրավված կողմերի շահերը և հնարավորությունները:

Կրթության մատուցումը պետք է արդիականացվի, ներառյալ՝ տեխնիկական, բովանդակային և հաղորդակցման ձևերը, այնպես, որ կրթությունը հասանելի, մատչելի և ընկալելի դառնա բոլոր ցանկացողների համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսումնական հաստատությունների շենքային պայմանները բարելավելուն, որպեսզի դրանք լինեն անվտանգ (ներառյալ՝ սեյսմակայուն), ապահով և նպաստավոր ժամանակակից կրթական գործունեության համար, պետք է ընդլայնվեն և արդիականացվեն դրանց սպորտային և լաբորատոր ենթակառուցվածքները:

Հաշվի առնելով կրթական ծրագրերի իրականացման երկարատևությունը, և քաղաքական ցիկլերից դրանք անջատելու անհրաժեշտությունը, նպատակահարմար է ձևավորել լայն լիազորություններով օժտված, Ազգային ժողովին հաշվետու պետական կրթական մարմին, որը ապահովում է կրթական քաղաքականության և երկարաժամկետ ծրագրերի շարունակականությունը և մասնագիտական որակը: Կրթական գերազանցության բարձրորակ ծրագրերը պետք է հիմնվեն պետական աջակցության վրա, և հնարավորինս տարածվեն ամբողջ երկրով մեկ, դրանց հիմքում պետք է ընկնի բոլոր ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացումը՝ արդի միջազգային լավագույն պրակտիկային համապատասխան:

Արդիական կրթությունը համապատասխան միջոցներ է պահանջում, և դրանց ներկայիս մակարդակը բավարար չէ: Վերջին տարիներին պետության կողմից կրթությանը հատկացվող միջոցները կազմել են ՀՆԱ 2,1-2,4%-ը, իսկ մասնավոր միջոցներն էլ խիստ սահմանափակ են եղել: Հեռանկարում, կրթական ծախսերը պետք է ՀՀ-ում գերազանցեն ՀՆԱ 4%-ը, մոտավորապես 80/20 պետական-մասնավոր համամասնությամբ: Մասնավոր հատվածի դերը կրթության մատուցման մեջ պետք է էապես ավելանա, իսկ պետությունը պետք է դա խրախուսի ճկուն քաղաքականության և համաֆինանսավորման մեխանիզմների միջոցով:

Քանի որ կրթության տարբեր մակարդակներում առկա խնդիրները ունեն իրենց առանձնահատկությունները, դրանց տրվող լուծումները ևս պետք է լինեն տարբերակված: Պետք է տարբերակվեն նախադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական, և բարձրագույն կրթության մակարդակները, որոնցից յուրաքանչյուրի հիմնական խնդիրները և

առաջարկվող լուծումները պետք է առավելագույնս հասցեագրեն առկա խնդիրները, և դրանց լուծման առանձնահատկությունները:

Նախադպրոցական կրթության ոլորտում առավել սուր խնդիրը դրա ցածր հասանելիությունն է, որը պայմանավորված է հիմնական ռեսուրսների սղությամբ: Առկա բացերը լրացնելու նպատակով, առաջիկա տարիներին անհրաժեշտ է լինելու՝

- ապահովել ֆինանսական միջոցների աճ, համայնքների բյուջեների ֆինանսավորման մեխանիզմների փոփոխության, ընդհանուր պետական հատկացումների ավելացման, փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում դրանց հավասարաչափ բաշխման, և մասնավոր միջոցների ներգրավման ընդլայնման հաշվին,
- իրականացնել ներկայումս թերբեռնված հանրակրթական դպրոցների առկա ռեսուրսների օգտագործում՝ նախադպրոցական կրթություն տրամադրելու նպատակով,
- ապահովել դաստիարակների պարտադիր մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ օժտելու նրանց երեխաների հետ աշխատանքի արդիական կարողություններով, փորձարկել և ներդնել նախադպրոցական կրթության իրականացման արդիական, արդյունավետ մոդելներ
- բարելավել պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը նախադպրոցական կրթության ոլորտում, շահագրգռելու մասնավոր հատվածի ներգրավման ընդլայնումը նախակրթական ծառայությունների ոլորտում:

Հեռանկարում, նախադպրոցական կրթությունը Հայաստանում պետք է հասանելի լինի նախադպրոցական կրթության կարիք ունեցող բոլոր ընտանիքներին, լինի որակյալ, և երեխաներին արդյունավետ պատրաստի հետագա կրթական փուլերին:

Հանրակրթության բնագավառում, ներկայումս առկա են մի շարք հիմնարար խնդիրներ՝ ներառյալ ընդհանուր թերի ֆինանսավորում, համակարգի թերբեռնվածություն՝ սովորողների թվի կրճատման պատճառով, արդիական կրթության կազմակերպման անբավարար կարողություններ, ներառական կրթություն ապահովելու սահմանափակումներ, և փոքր բնակչությամբ համայնքներում լիարժեք կրթության տրամադրման բարդություններ: Առկա հիմնախնդիրները լուծելու նպատակով, առաջիկա տարիներին անհրաժեշտ է լինելու՝

- դպրոցների ֆինանսավորման մոտեցումների վերանայում, պետական, համայնքային և մասնավոր միջոցների օպտիմալ ներգրավում՝ հանրակրթության ոլորտում ֆինանսավորման ընդհանուր մակարդակի աճի, և կրթական խթանների հաշվեկշռված համակարգ ստեղծելու նպատակով,
- հանրակրթության ոլորտում նորմատիվային արդյունավետ հիմքերի ձևավորում, ներառյալ դասարանների օպտիմալ կոմպլեկտավորում, ուսուցիչների ծանրաբեռնվածության կանոնակարգում և աստիճանական մոտեցում միջազգային ստանդարտներին,
- հանրակրթության վերակողմնորոշում՝ ձևավորելու սովորողների ազգային արժեհամակարգը և քաղաքացիական գիտակցությունը, դաստիարակելու ազատ, պատասխանատու և ստեղծագործ անհատ,
- հանրակրթական ծրագրերի արդիականացում՝ միտված վերը նշած կրթական նպատակներին, դրանց համապատասխանող դասագրքերի և մեթոդական արդիական միջոցների մշակում, ազգային կրթական գերազանցության ծրագրերի ներդրում ավագ դպրոցներում,

- հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագիտական կադրերի կատարելագործում, կարիքներին ուղղված մասնագիտական զարգացման տարատեսակ մոդելների և ատեստավորման արդիական համակարգի ներդրման միջոցով, ֆինանսական խթանների համակարգի ներդրում բարձր որակավորում ստացող ուսուցիչների համար,
- փոքր բնակավայրերում համատեղ օգտագործման կրթական հաստատությունների համակարգի ձևավորում, կրթության ճկուն հեռակա միջոցների ներդրում, ավագ դպրոցների կենտրոնացում համայնքային կենտրոններում՝ կրթության բարձր որակ ապահովելու նպատակով,
- սոցիալապես արդարացված, սելեկտիվ ձևաչափերով ներառական կրթության ապահովում, հիմնականում մասնագիտացված դպրոցների բազայի վրա, ներառյալ առավել ընդունակ երեխաների համար,
- հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ներդրում և ընդլայնում, ապագա շրջանավարտների պատրաստում աշխատանքի շուկային և շարունակական կրթությանը,
- ավագ դպրոցի ծրագրային բովանդակության և առարկայացանկի վերանայում, ուղղված գնահատման համակարգի միջազգային չափանիշների համապատասխանեցմանը և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը՝ ապագա աշխատանքային շուկայում:

Հեռանկարում, Հայաստանում հանրակրթության ոլորտը պետք է դառնա երկրի մրցակցային կարևորագույն առավելություններից մեկը, ապահովի միջազգային չափանիշներով բարձր կրթական արդյունք, միևնույն ժամանակ դաստիարակելով մարդկային, ազգային և քաղաքացիական բարձր որակներ, և դառնալով առողջ և դինամիկ հասարակության ձևավորման հիմնական դարբնոցը:

Միջին մասնագիտական կրթությունը Հայաստանում անկախության տարիներին զգալի հետընթաց է ապրել: Խորհրդային տարիներին ձևավորված համակարգը այլևս արդյունավետ չի գործում: Միջին մասնագիտական կրթության արդիականացման և վերափոխման կարիքը հսկայական է, քանի որ այն պետք է աշխատանքի շուկայում պահանջված մասնագիտություններով ապահովի երիտասարդ բնակչության այն զգալի մասին, որը տարբեր պատճառներով, բարձրագույն կրթություն չի ստանում: Առկա հիմնախնդիրները լուծելու նպատակով, առաջիկա տարիներին անհրաժեշտ է լինելու՝

- օրենսդրական դաշտի կանոնակարգում, որակյալ միջին մասնագիտական կրթություն ապահովող հաստատությունների համար գործունեության արտոնյալ պայմանների ստեղծում, այս ոլորտում արտասահմանյան և տեղական մասնագիտացված կազմակերպությունների ներգրավում,
- միջին մասնագիտական կրթության պետական ֆինանսավորման ընդարձակում, ինչպես նաև նոր աղբյուրների ստեղծում, հիմնականում այն ընկերությունների միջոցներից, որոնք շահագրգռված են շրջանավարտներին որպես ապագա աշխատակիցներ ներգրավելու մեջ,
- ելնելով տնտեսության մեջ առկա մասնագիտությունների պահանջարկից՝ պետական պատվերի ձևավորում և շարունակական թարմացում,
- նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցման դուալ համակարգի ներդրում՝ հստակ սահմանազատելով պետության պարտավորությունները սովորողի և ուսումնական

հաստատության առջև, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ համագործակցության օրենսդրական կարգավորում,

- բանակից զորացրված երիտասարդներին պարտադիր պետական աջակցության ապահովում՝ իրենց ընտրած միջին մասնագիտական կրթության ստանալու նպատակով:Հեռանկարում, միջին մասնագիտական կրթությունը Հայաստանում պետք է դառնա կայացած և հարգի (ընդունված) համակարգ, ապահովի որակյալ և արագ վերապատրաստում շուկայական պահանջարկ վայելող մասնագիտությունների գծով, և օժանդակի գործազրկության կրճատմանը:

Բարձրագույն կրթության բնագավառում հիմնական խնդիրը պետական կրթական հաստատություններում կրթության որակի անկումն է անկախության տարիների ընթացքում: Ներկայումս Հայաստանում պետական ԲՈՒՀ-երը հայտնվել են համակարգային փակուղու մեջ, որի հաղթահարումը պարզ լուծումներով հնարավոր չէ իրականացնել, քանի որ պայմանավորված է բազմաթիվ փոխկապակցված գործոններով: Որպես առաջին քայլ, դա պահանջելու է համակարգի կառավարման բարեփոխումներ, և ԲՈՒՀ-երի անկախացում պետությունից, որպեսզի յուրաքանչյուր ԲՈՒՀ հնարավորություն ստանա սեփական խնդիրների լուծման ինքնուրույն մոտեցումներ ձևավորել և իրականացնել, և դրանում ներգրավել պետական և ոչ պետական ռեսուրսներ: Միջնաժամկետ հեռանկարում, անհրաժեշտ է.

- ազատ մրցակցային պայմանների ապահովում, և միջազգային փորձի հիման վրա միասնական օրենսդրական նորմերի ստեղծում ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում գործող բոլոր ուսումնական հաստատությունների համար: Պետական համալսարանները պետք է ստանան գործունեության այնպիսի ազատություն, ինչպիսիք այսօր առկա են ՀՀ-ում գործող միջպետական համալսարանների համար, նրանց համար պետք է ապահովվի հավասար մրցակցության և զարգացման պայմաններ,
- մասնագիտական ոլորտների նկարագրիչների հստակ սահմանում՝ աշխատաշուկայում բարձրագույն կրթությամբ մասնագետների հասցեական պահանջի ձևավորման նպատակով, ինչպես նաև ուսումնառողների թե՛ միջազգային, թե՛ ՀՀ կրթական տարածքում գործող համակարգի շրջանակներում շարժունություն ապահովելու համար,
- ԲՈՒՀ-երում ընդունելության քննությունների և ընթացիկ գիտելիքների ստուգման կարգի վերանայում և բարելավում, որը կբացառի անբավարար կամ թույլ գիտելիքներով դիմորդների ընդունելությունը և ԲՈՒՀ ավարտելը,
- մշակել օրենսդրական մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռնեն մարզերի և հեռավոր համայնքների բնակիչներին օգտվելու մասնագիտական ծառայություններից՝ բարձրակարգ մասնագետներով կոմպլեկտավորված մոբիլ խմբերի (բժիշկներ, ուսուցիչներ, գյուղատնտեսական ոլորտի մասնագետներ և այլն) պարբերական այցերի միջոցով,
- պետական պատվերի ձևավորման մոտեցումների արմատական փոփոխում՝ հիմքում դնելով մասնագիտությունների նկատմամբ պետական կարիքի ձևավորումը: Պետական պատվերը չպետք է ենթադրի անվճար ուսուցում, այլ պետական կրթաթոշակների տրամադրում՝ համապատասխան աշխատանք իրականացնելու պարտավորությամբ: Այստեղ պետք է ներառվեն նաև այն գիտությունները և մասնագիտական ուղղությունները (աստղագիտություն, ֆիզիկա, քիմիա և այլն), որոնք երկարաժամկետ հեռանկարում կարող են նոր հնարավորությունների սկիզբ դառնալ,

- Միջազգային հավատարմագրման պահանջի առաջադրում. ԲՈՒՀ-երի հավատարմագրման գործող չափանիշների, մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզավորման պայմանների վերանայում, ԲՈՒՀ-երի կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզավորման պահանջների խստացում և հստակեցում, ԲՈՒՀ-երի և կրթական ծրագրերի հավատարմագրման հստակ չափելի ցուցիչների և մեթոդաբանության սահմանման ճանապարհով,
- ինտեգրում միջազգային վարկանիշավորման համակարգերին. վարկանիշավորման նոր համակարգերի և հանրակրթության համակարգում մասնագիտական կողմնորոշման համակարգի ստեղծում՝ կրթության որակի բարձրացման և նոր մրցակցային մշակույթի ձևավորման նպատակով: Պետք է բարձրացնել ՀՀ բուհերի մրցակցությունը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում,
- ֆինասավորման աղբյուրների դիվերսիֆիկացում, ֆինանսավորման ծավալների ավելացում նոր աղբյուրների հաշվին և դրա ազդեցության գնահատում՝ կրթության որակի բարձրացման հնարավորությունների առումով: Անհրաժեշտ է հենվել ոչ միայն ներքին պետական միջոցների վրա, այլև ստեղծել հնարավորություններ ներքին մասնավոր և արտաքին օտարերկրյա ներդրումների համար, որի արդյունքում համալսարանները ձեռք կբերեն ավելի մեծ ֆինանսական անկախություն: Անհրաժեշտ է նաև օրենսդրական խթաններով մոտիվացնել ներքին տնտեսվարողներին իրենց ոլորտի առաջատար մասնագետների պատրաստման նպատակով ներդրումներ իրականացնելու կրթական համակարգում՝ դառնալով անմիջական շահառու նոր կադրերի պատրաստման հարցում,
- ակադեմիական ազնվության, որպես բարձրագույն բարոյական արժեքի սահմանում: Թե՛ դասախոսի, թե՛ ուսանողի համար ակադեմիական ազնվության արժեքների սերմանում՝ ազնվություն, վստահություն, անկեղծություն, հարգանք և պատասխանատվություն: Ակադեմիական անազնվության դրսևորումների դեմ անողոք պայքար: Հասարակության արժեհամակարգի վերաձևակերպում և ԲՈՒՀ-երում գործող մոտիվացիոն համակարգերի վերանայում մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացման տեսանկյունից:
- Սովորողների սեփական մտքերի խրախուսում: Արդի ժամանակներում, երբ նոր միտքը և գաղափարները զարգացման կարևորագույն ռեսուրսներից են, անհրաժեշտ է ուսանողի հոգեբանությունից հանել սեփական մտքի արտահայտման և սեփական վերլուծությունների իրականացման վախը, սա պահանջելու է ուսումնական գործընթացի արմատական վերակողմնորոշում՝ զարգացնելու սովորողների ստեղծագործական կարողությունները:

Հեռանկարում, Հայաստանի Հանրապետությունը պետք է ձգտի իր ավանդական գերազանցության ոլորտներում (ճշգրիտ գիտություններ, բժշկություն, բանասիրություն, արվեստներ) ապահովել միջազգայնորեն հարգի համալսարանական կրթություն՝ ճանաչված ամբողջ աշխարհում: Համալսարանական ֆունդամենտալ կրթությանը զուգահեռ, Հայաստանում պետք է լայնորեն կիրառվեն նաև կարճաժամկետ, սակայն հագեցած մասնագիտական դասընթացների ձևաչափեր, հանրության և տնտեսության կարիքներին արագ արձագանքելու, մարդկանց մշտական կրթության հնարավորություններ ապահովելու և աշխատանքի շուկայում մրցունակ դարձնելու համար:

Գիտություն

Գիտակա-հետազոտական գործունեությունը Հայաստանի ավանդական մրցակցային առավելությունն է եղել խորհրդային տարիների ընթացքում, երբ երկրի տարածքում ստեղծվել է ակադեմիան և կիրառական գիտությունների հզոր բազա, մասնավորապես, ֆիզիկայի,

մաթեմատիկայի, մոլեկուլյալ քիմիայի, բժշկական գիտությունների, հայագիտության և արևելագիտության, այլ հարակից բնագավառներում: Անկախության շրջանում գիտության թերֆինանսավորումը և նախկին համակարգում ձևավորված կապերի խզումը բերել է գիտական գործունեության ծավալների կտրուկ անկման: Վերջին տարիներին պետության կողմից գիտությանը հատկացվող ռեսուրսների ընդլայնումը և աջակցության գործիքակազմի կատարելագործումը բերել է իրավիճակի հարաբերական կայունացման, և նախադրյալներ է պատրաստել գիտության հետագա առաջանցիկ զարգացման համար: Հայաստանում գիտությունը պետք է վերականգնի հասարակական զարգացման մեջ իր առաջատար դերը, ուստի նրա հետագա զարգացման տեսլականը և ուղղությունները հետևյալն են՝

- *Արդիական և մրցունակ:* Հայաստանի ակադեմիական գիտությունը համաշխարհային գիտության մասն է, և պետք է լինի արդիական ողջ աշխարհի համար: Հայաստանը պետք է կենտրոնանա գիտական այն ուղղությունների վրա, որոնցում արդեն ձևավորվել են համապատասխան դպրոցներ, և իր սահմանափակ ռեսուրսները ուղղի այս ուղղություններում միջազգայնորեն մրցունակ, հարգի, պահանջարկված գիտական արդյունք ստեղծելու վրա: Այս նպատակով գործող գիտական խմբերին պետական աջակցությունը պետք է մշտապես հիմնվի միջազգային գիտաչափական չափորոշիչների վրա, խրախուսի միջազգային գիտական համագործակցությունը, և միջազգայնորեն մրցունակ արդյունքի ստեղծումը:
- *Հարգի և պահանջված:* Գիտական գործունեությունը պետք է լինի հարգի և պահանջված, և կարողանա շարունակաբար ներգրավել լավագույն երիտասարդ պրոֆեսիոնալներին, որոնք ունեն նաև այլ շուկայական այլընտրանքներ: Այս նպատակով գիտական գործունեության ընդհանուր ֆինանսավորումը Հայաստանում պետք է հասցնել առնվազն ՀՆԱ 1%-ին, ներառյալ նաև միջազգային դրամաշնորհային միջոցների կենտրոնացված ներգրավվման շնորհիվ, ակադեմիական գիտությամբ վարձատրվող պրոֆեսիոնալների վարձատրությունը բարձրացնել կիրառական գիտությամբ և տեխնոլոգիաներով զբաղվողների շուկայական վարձատրության մակարդակին, և կտրուկ բարելավել գիտական հաստատությունների կառավարման և տեխնիկական հագեցվածության մակարդակը՝ բարենպաստ աշխատանքային միջավայր ստեղծելու նպատակով:
- *Ինքնակառավարվող և արդյունավետ:* Ակադեմիական գիտությունը գործունեության յուրատեսակ ոլորտ է, որի կառավարումը պահանջում է հատուկ մոտեցումներ, մասնավորապես, կապված ստեղծվող արդյունքի չափելիության և գնահատման հետ: Հայաստանում պետության կողմից պետք է խրախուսվեն այն գիտական հաստատությունները, որոնք ընդունակ են արդյունավետ ինքնակառավարման, ներգրավված են միջազգային գիտական համագործակցության մեջ, շարունակաբար բարձրացնում են սեփական գործունեության արդյունավետությունը, և ընդունակ են հիմնավորել ներդրումները՝ սեփական տեխնոլոգիական կարողությունների ընդլայնման մեջ:
- *Ինտեգրված կրթության հետ:* Ակադեմիական գիտությունը Հայաստանում պետք է դառնա կրթական համակարգի զարգացման մշտական շարժիչը, օգնի կրթական համակարգի բարեփոխմանը և միջազգային մրցունակության բարձրացմանը: Այս նպատակով պետք է երկուստեք խրախուսվի գիտական հաստատությունների կազմակերպչական և գործնական ինտեգրումը առաջատար համալսարանների հետ, գիտական գործունեությամբ զբաղվող պրոֆեսիոնալների մասնակցությունը դասավանդմանը, և ուսանողների ու ասպրանտների համար գիտական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների ստեղծմանը:

- *Ինտեգրված տնտեսության հետ:* Ակադեմիական գիտությունը, թեև կենտրոնացած է ունիվերսալ գիտական արդյունքի վրա, պետք է դառնա նաև Հայաստանի տնտեսության զարգացման կարևորագույն շարժիչը: Այս նպատակով պետք է մի կողմից խրախուսվի գիտական գործունեության արդյունքի կիրառականությունը Հայաստանի տնտեսության առաջատար ճյուղերում, մյուս կողմից Հայաստանի տնտեսական գործունեության սուբյեկտները պետք է խրախուսվեն օգտագործելու երկրում գիտական արդյունքը: Այս նպատակով պետք է ստեղծել գիտական կարողությունների և արդյունքների ներկայացման թափանցիկ և արդյունավետ հարթակներ, որոնք կխրախուսեն դրանց կոմերցիալիզացիան (առևտրայնացումը):
- *Ինտեգրված պաշտպանության հետ:* Ակադեմիական գիտությունը պետք է նաև դառնա երկրի անվտանգության և պաշտպանունակության բարձրացման արդյունավետ միջոց: Այս նպատակով, երկրի տարածքում գործող գիտական խմբերը պետք է մշտապես խրախուսվեն՝ համագործակցելու ռազմարդյունաբերության հետ, և լուծելու այնտեղ առաջացող առավել բարդ խնդիրները: Նմանապես, հումանիտար գիտությունների ոլորտում, գործող գիտական խմբերը պետք է ներգրավվեն հայագիտական, տարածաշրջանային և միջազգային հետազոտությունների իրականացմանը, որոնք աջակցում են Հայաստանին սպառնացող մարտահրավերների վաղ կանխորոշմանը, և արդյունքում արդյունավետ չեզոքացմանը: Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը նաև պետք թիրախավորի պլատֆորմային և երկակի նշանակության հետազոտությունները, որոնք բացի ռազմական նշանակությունից կարող են հիմք հանդիսանալ քաղաքացիական արտադրությունների զարգացման համար:

Ակադեմիական գիտությունը Հայաստանի թանկարժեք մրցակցային առավելությունն է, որը մինչ այժմ չի օգտագործվել բավարար չափով, և հիմնականում մեկուսացված է եղել երկրի զարգացման առանցքային միտումներից: Հայաստանը լինելով տարածքով փոքր երկիր, դիմակայում է մեծ մարտահրավերների: Մեր նպատակն է լինելու օգտագործել հայկական գիտության ամբողջ ներուժը՝ խթանելու երկրի զարգացումը, միևնույն ժամանակ ուղղորդելով դրանից ստացվող ռեսուրսները՝ շարունակաբար բարձրացնելու հայկական գիտության կարողությունները և միջազգային մրցունակությունը:

Մշակույթ

Հայկական մշակույթը մեր ազգային ինքնության կարևորագույն հենասյուն է: Մշակույթը մենք հասկանում ենք իր լայն իմաստով՝ գեղարվեստ և հանրային արժեքներ, ավանդույթ ու ծես, հաղորդակցության և երկխոսության ձևեր, քաղաքականության, տնտեսավարման և ռազմի վարքականոններ: Քաղաքակրթական վերելքը կայուն և արգասավոր կարող է լինել միայն այն դեպքում, երբ հիմնված է բարձր մշակույթ կրող անհատների, հանրության ու հաստատությունների վրա, ուստի մշակութային քաղաքականության հիմնական նպատակն է բարձրակարգ մշակույթի սերմանումը՝ հասարակության բոլոր շերտերում:

Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականությունը հասցեագրում է ողջ հայ ժողովրդի՝ անկախ ժամանակից, տարածությունից և անհատի քաղաքացիությունից, ստեղծած մշակութային արժեքներին վերաբերող խնդիրներն ու նպատակները: Այս առումով մշակութային քաղաքականությունը պետք է դիտարկվի մեկ ամբողջության համատեքստում, քանի որ, թե՛ Հայաստանում, և թե՛ նրա սահմաններից դուրս ստեղծված արդյունքը վերջնական նպատակում ծառայում է և ծառայելու է Հայաստանին, նրա քաղաքացիներին, և նրա հետ կապված բոլոր անձանց: Ազգային մշակույթի զարգացման պետական աջակցությունը ունի առաջնային կարևորություն, քանի որ այդ ծրագրերի ամբողջականությունը ծառայելու է այսօրվա ՀՀ քաղաքացու, և առհասարակ, հոգեմտավոր արժեքներով հարուստ, իր ազգային ինքնությանը ներդաշնակ, հայաստանակենտրոն

անհատի ձևավորմանը: ՀՀ քաղաքացուն, անկախ ՀՀ տարածքում նրա բնակության վայրից, պետք է հասու դարձնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությանը, և նպաստել նրա կողմից մշակութային արժեքների արդյունավետ յուրացմանը: Այս նպատակով, հեռանկարում պետության կողմից տարատեսակ մշակույթային ծրագրերի վրա կատարվող հատկացումները պետք է աճեն, գերազանցելով ՀՆԱ 1% (ներկայիս 0,4%-ի փոխարեն):

Պետական քաղաքականության առանցքը պետք է լինի ազգային ժառանգության պահպանությունը, դրա նորարար մոտեցմամբ հանրայնացումը եւ հանրահռչակումը, արդի մշակույթի զարգացումը՝ հարգելով անհատի ազատ մտածելու, ստեղծագործելու իրավունքը: Պետական քաղաքականությունը պետք է առանձնահատուկ մոտեցում ունենա ազգային մշակույթի արտահանման հարցում, նպատակային միջոցներ հատկացնելով արտերկրում հայկական մշակույթի պրոպագանդմանը: Այդ արտահանումը ընկալում ենք մի քանի շերտերով՝ դեպի սփյուռքյան համայնքներ, որտեղ Հայաստանը պետք է շարունակաբար արտահանի բարձր մշակույթ, այդպիսով ամրապնդելով կապը հայրենիքի հետ և աջակցելով հայապահպանությանը, և դեպի մեծ աշխարհ, որտեղ Հայաստանը գլոբալացվող միջավայրում պետք է ներկայացնի իր մշակութային արժեքները, և մասնակցի արդի մշակութային զարգացումներին:

Պետության մշակութային քաղաքականությունը պետք է հաշվի առնի նաև Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակութային առանձնահատկությունները և այս առումով քաղաքականության իրացումը պետք է լինի փոխադարձ հարգանքի և հասարակական ներդաշնակության հենքով: Պետությունը պետք է աջակցի ազգային փոքրամասնությունների մշակութային զարգացմանը, ինչպես նաև հայկական մշակութային միջավայրում նրանց ներդաշնակ ինտեգրմանը:

Պետությունը իր մշակութային քաղաքականությունը իրացնելու է իր ենթակայության տակ գտնվող պետական և համայնքային կրթա-մշակութային կառույցների, ինչպես նաև շահառու հանդիսացող մասնավոր կազմակերպությունների և անձանց ներգրավածությամբ: Հայաստանում պետք է գործի առանձին Մշակույթի նախարարություն, որը լինելու է պետական մշակութային ծրագրերի հիմնական համակարգողը: Ըստ ոլորտների և ուղղությունների, այն պետք է ձևավորի հեղինակավոր մասնագետներից և գործիչներից բաղկացած խորհուրդներ, որոնք մրցութային կարգով պետք է բաշխեն միջոցները տարբեր մշակութային ծրագրերի միջև, և հետևեն դրանց իրացման արդյունավետությանը՝ յուրաքանչյուր ոլորտում սահմանելով խելամիտ ծրագրային թիրախներ և չափորոշիչներ:

Պետական մշակութային քաղաքականությունը պետք է կենտրոնանա ոչ միայն ավանդական արվեստների վրա, այլև ներառի անմիջական կապ ունեցող հարակից ոլորտները, որպեսզի արդյունավետ փոխկապակցվածությամբ մշակի և իրացնի մշակութային պետական ծրագրերը: Այդ հիմնական ոլորտներն են՝ գիտությունը, կրթությունը, բարձր տեխնոլոգիաները, զբոսաշրջությունը, հանրային հաղորդակցությունը, որոնք բոլորը միասին ձևավորում են ընդհանրական մշակույթային միջավայր, և պետք է ուղղորդվեն միասնական տրամաբանությամբ՝ սա իր հերթին, համագործակցության բարձր մակարդակ է պահանջելու տարբեր պետական կառույցների միջև:

Պետությունը պետք է լայնորեն համագործակցի նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների և անձանց հետ՝ առաջարկելով համատեղ կամ նույնիսկ ինքնուրույն կերպով իրացնելու պետական մշակութային քաղաքականությունից բխող տարբեր ծրագրեր: Մշակույթային բազմաթիվ ծրագրեր ընդունակ են մասնակիորեն կամ ամբողջապես ինքնածախսածածկվել, ուստի պետությունը պետք է առավելագույնս խրախուսի մասնավոր հատվածի ներգրավումը այդ ծրագրերի մեջ՝ իրեն վերագրելով դրանց իրացման ընդհանուր որակի և բարձրարժեքության երաշխավորի դերը: Սա թույլ կտա ընդլայնել մշակույթի մեջ ներդրվող միջոցները, և այն վերածել արագ զարգացող, արդիականացող, և գլոբալ մրցակցությանը մասնակցող, կենսունակ ոլորտի:

Լեզվական քաղաքականություն

Հայոց լեզուն մեր ինքնության առանցքային հենասյունն է: Գիտակցելով, որ դարեր շարունակ լեզուն հայի համար եղել է ազգային միաբանության, ինքնության պահպանության գործոն՝ կարևորում ենք լեզվի պետական քաղաքականության արդյունավետ մշակումը և իրացումը: Նոր ժամանակներում սակայն, մեր լեզուն պետք է դառնա նաև մշակութային և տնտեսական ծավալման, միջազգային մրցունակության և գրավչության բարձրացման կարևորագույն գործոն:

Պետությունը պետք է իր ունեցած գործիքակազմը օգտագործի հայոց լեզվի ակտիվ առաջխաղացման համար: Պետական կրթական հաստատություններում, մշակութային հաստատություններում, պետական բոլոր կառույցներում պետք է համատարած կիրառվի և լայն հանրության համար քարոզվի գրական հայոց լեզուն: Մասնավոր կառույցների հետ հարաբերություններում պետությունը պետք է իրականացնի ակտիվ քայլեր՝ խրախուսելով գրական լեզվի կիրառությունը:

Լեզուն կենդանի պահելու կարևորագույն գործիքներից է տվյալ լեզվով առկա թարգմանությունների շարունակական աճի ապահովումը: Պետությունը առանձնահատուկ ուշադրությամբ և ծավալով պետք է աջակցի համաշխարհային կարևորություն ունեցող աշխատությունների հայերենով թարգմանության ծրագրերին: Առանձին կարևորություն պետք է տրվի լեզվի արդիականացման և համացանցում հայերենի ներկայության ընդլայնման հարցերին: Որպեսզի հայոց լեզուն մշտապես արդիականացվի, ցանկացած ոլորտի համաշխարհային նորարարություն պետք է հնարավոր լինի ներկայացնել հայերեն և շրջանառել: Սա պահանջելու է պետության ներդրումները՝ շարունակաբար հայացնելու նոր առաջացող լեզվական եզրերը, և բարեհունչ հայերեն տերմիններ մշակելու և հանրայնացնելու համար:

Պետությունը իրավական ակտերով պետք է հստակեցնի ուղղագրության հարցերը: Մինչխորհրդային ուղղագրությունը պետք է խորհրդային ուղղագրությանը հավասար ընդունելի դառնա, և ակտիվ կիրառվի: Այդ առումով բոլոր կրթական հաստատությունները պետք է լրացուցիչ դասընթացներ ապահովեն՝ թույլ տալով սովորողներին հավասարաչափ յուրացնել երկու ուղղագրությունները: Մինչ այս, պետությունը գիտական հենքով պետք է նաև որոշի, թե մինչխորհրդային ուղղագրության որ տարբերակն է առավել ընդունելի և միավորիչ բոլորի համար:

Հայոց լեզուն չի սահմանափակվում միայն ժամանակակից գրական արևելահայերենով, մեր մշակութային ժառանգության կարևորագույն տարրեր են գրական արևմտահայերենը և գրաբարը: Հայաստանի Հանրապետությունը պետք է դառնա արևմտահայերենի պահպանության և զարգացման ծրագրերի կարևոր կենտրոն: Պետությունը, օգտագործելով իր գիտակրթական բազան, արևմտահայերենի ուսումնասիրության, ուսուցման առնչությամբ պետք է ծրագրեր մշակի և արտահանի սփյուռքի գաղթօջախներ, ինչպես նաև հասու դարձնի այն երկրում բնակվող և արևմտահայերենին տիրապետող բոլոր անձանց: Պետությունը պետք է նաև ակտիվ քայլեր ձեռնարկի գրաբարի՝ որպես ազգային արժեք տարածման կապակցությամբ: Պետությունը պետք է իր գործիքակազմով խրախուսի գրաբարի մասնագետների պատրաստումը, դպրոցական ուսուցիչների համար ուսուցման արագացված ծրագրերի ներդրումը և ընտրովի դասընթացների կազմակերպումը ցանկացողների համար:

Հայոց լեզուն, իր տարատեսակներով, նոր ժամանակներում կարևորագույն ազգային հարստություն է, որը պետք է ոչ միայն պահպանվի, այլև բազմապատկվի և ծառայի ազգային հիմնական նպատակների իրականացմանը: Մենք հետամուտ ենք լինելու հայոց լեզվի հետևողական զարգացմանը և ողջ աշխարհով կիրառման ոլորտների ընդարձակմանը:

Կրոն

Կրոնի և խղճի ազատությունը երաշխավորված է մեր Սահմանադրությամբ, և մեր մոտեցումը խարսխվելու է այդ հենքի վրա: Ընդ որում, մենք ճանաչում ենք Հայ Առաքելական

Եկեղեցու բացառիկ դերը կրոնական հաստատությունների շարքում և մեր գործունեությամբ նպաստելու ենք, որպեսզի այն շարունակի ծառայել մեր ազգին և հասարակությանը՝ որպես քրիստոնեական հավատի և ազգային ինքնության առանցքային հենասյուն: Միևնույն ժամանակ, մենք ընդունում ենք բոլոր այլ կրոնական հաստատությունների իրավունքը՝ ազատորեն գործել Հայաստանի տարածքում, եթե նրանք գործում են մեր օրենքների շրջանակներում, և իրենց գործունեությամբ չեն փորձում խարխլել սահմանադրական կարգի և հանրային ներդաշնակության հիմքերը:

Առողջապահություն

Հայաստանում առողջապահությունը ունի համեմատաբար լավ զարգացած կրթական բազա և ավանդույթներ, սակայն նրա առողջապահական ծառայությունների մատուցումը բնակչությանը համասեռ չի, և ներկա պայմաններում խիստ կախված է մարդկանց գնողունակությունից: Հասարակության սոցիալապես անապահով հատվածի համար առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունները փաստացի սահմանափակ են, սակայն նույնիսկ բարեկեցիկ քաղաքացիների համար գոյություն ունեն որակյալ ծառայությունների հասանելիության խնդիրներ, առողջապահության ապահովագրական համակարգի թերզարգացվածություն, բարձր տեխնոլոգիական ծառայությունների բացակայություն երկրի տարածքում:

Ուստի առողջապահության բնագավառի պետական քաղաքականության հիմքում պետք է դրվեն այն առաջնահերթությունները, որոնք վերաբերում են առողջ սերունդներին, առողջության պահպանմանը և բարելավմանը, առողջապահության համակարգի տարածքային համաչափ զարգացմանը, հիվանդությունների և առողջապահական այլ սպառնալիքների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի խրախուսմանը, պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման արդյունավետության բարձրացմանը, առողջապահության բնագավառում միջազգային չափանիշներին համապատասխան թափանցիկ և արդյունավետ պետական գնումների կազմակերպմանը, պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի աստիճանաբար ներդրմանը: Պետական քաղաքականության իրագործումը կմեծացնի առողջապահության հասանելիությունը բնակչությանը, կնպաստի քաղաքացիների համար մատչելի, սոցիալապես արդար, հուսալի և որակյալ առողջապահական համակարգի ձևավորմանը, և արդյունքում կբերի հիվանդությունների կանխարգելմանը և բնակչության առողջության պահպանմանը, դրանով բարելավելով մարդկանց կյանքի որակը և տևողությունը: Առողջապահության որոշակի ճյուղեր պետք է դիտարկվեն առողջապահական տուրիզմի համատեքստում, և զարգացվեն որպես երկրի համար շահութաբեր գործունեություն:

Հայաստանի ընդհանուր իրավիճակի համատեքստում մենք նախատեսում ենք առաջիկա տասնամյակում բարելավել բնակչության բավարարվածության մակարդակը առողջապահության ոլորտում ներկայիս 29%-ից հասցնելով առնվազն 65%: Կյանքի միջին տևողության ցուցանիշը Հայաստանում պետք է հասնի 80 և ավել տարի, այստեղ կարևորագույն դեր է խաղալու առողջապահական ծառայությունների մատչելիությունը և որակը, ընդ որում մահացության պատճառների մեջ պետք է նվազեն քաղցկեղը և սրտանոթային համակարգի հիվանդությունները: Քանի որ մենք ձգտելու ենք, որ Հայաստանում ծնելիության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով կայուն գերազանցի 15-ը, կարևոր է լինելու նաև ծնողատների համակարգի զարգացումը և ծառայությունների որակի բարձրացումը, այս ուղղությամբ մենք թիրախավորելու ենք մանկական մահացության գործակիցը իջեցնել 1000 ծնվածի հաշվով 5-ից, իսկ մայրական մահացության գործակիցը՝ 10000 ծնվածի հաշվով 1-ից:

Առողջապահությունը բարդ համակարգ է, որը մատուցում է տարատեսակ ծառայություններ, և պետությունը ժամանակակից պայմաններում չի կարող հավակնել

ապահովել բոլոր տեսակի ծառայությունները՝ անվճար և բարձր որակով: Ուստի, առողջապահության համակարգը պետք է լինի եռամակարդակ, ներառելով ա) ծառայություններ, որոնք պետությունը երաշխավորված մատուցում է անվճար բոլոր քաղաքացիներին, բ) ծառայություններ, որոնք պետական կամ մասնավոր առողջապահական հաստատությունները մատուցում են՝ ապահովագրական վճարների դիմաց, և գ) ծառայություններ, որոնց համար ուղիղ վճարում են քաղաքացիները: Յուրքանչյուր դեպքում պետությունը իր կարգավորող դերով պետք է ապահովի ծառայությունների մատչելիությունը, որակը, և բժշկական ռիսկերի նվազեցումը: Այս համատեքստում, մենք նախատեսում ենք

Անվճար ծառայություններ: Պետությունը կապահովի ՀՀ քաղաքացիների համար անհետաձգելի բժշկական օգնության համընդհանուր անվճար և պատշաճ որակի ծառայությունը բոլոր մարզերում: Յուրաքանչյուր մարզում կգործի առնվազն մեկ պետական բարձրակարգ բժշկական հաստատություն, որը կմատուցի անհետաձգելի ծառայություններ, իսկ եթե մարզի տարածքը կոմպակտ չի, ապա երկու այդպիսի հաստատություն: Ամբողջ երկրի տարածքում պետությունը կապահովի նաև անվճար պոլիկլինիկ և ընտանեկան բժշկի, ինչպես նաև ծննդատնային ծառայություններ: Բոլոր այս ծառայությունների մասով, պետությունը շարունակաբար կիրականացնի բժշկական օգնության որակի բարձրացում, տեսակների և մատչելիության ավելացում, կտրամադրի սոցիալական զեղջեր՝ դեղերի գնման համար: Այս նպատակով, պետությունը կխրախուսի բժիշկների աշխատանքը մարզերում, նրանց աշխատանքային ստաժի նկատմամբ կիրառելով գոտիականության գործակից, կապահովի ծառայողական անվճար բնակարանով: Հեռանկարում, պետությունը անվճար առողջապահական ծառայությունների մատուցման վրա պետք է ծախս առնվազն ՀՆԱ 2,5%-ը, ներկայիս 1,5%-ի փոխարեն:

Ապահովագրական ծառայություններ: Պետությունը կաջակցի բժշկական ապահովագրության համակարգի և մասնավոր հիվանդանոցների զարգացմանը: Այս նպատակով, կխստացվի ապահովագրական ծառայությունների մատուցման կարգավորումը, նվազագույնի կհասցվեն քաղաքացիների համար հնարավոր ռիսկերը, շուկայից դուրս կբերվեն անբարեխիղճ ընկերությունները: Պետությունը կապահովի պետական ծառայողների համատարած բժշկական ապահովագրում, աստիճանաբար ընդլայնելով փաթեթի մեջ ներառված ծառայությունները: Պետությունը հարկային գործիքներով կխրախուսի նաեւ մասնավոր գործատուների կողմից սեփական աշխատակիցների և նրանց ընտանիքների բժշկական ապահովագրությունը: Պետությունը կաջակցի մասնավոր հիվանդանոցների զարգացմանը, միաժամանակ խիստ վերահսկողություն իրականացնելով նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակի վրա: Մասնավորապես, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և ապահովագրական սպասարկում ստանալու իրավունք ունեցող քաղաքացիները, իրենց հայեցողությամբ, կարող են օգտվել նաև մասնավոր հաստատությունների ծառայությունից, այդ դեպքում պետությունը հատուցում է մասնավոր ծառայությունները պետական հաստատությունների ծառայությունների սահմանված արժեքի չափով, սա կխթանի մրցակցությունը պետական և մասնավոր հատվածի միջև, և կբեռնաթափի պետական հատվածը: Վերջապես, Հայաստան այցելող օտարերկրացիները պետք է պարտադիր բժշկական ապահովագրություն ձեռք բերեն իրենց կեցության ողջ ժամկետի համար, և ապահովվեն համապատասխան որակյալ սպասարկմամբ:

Վճարովի ծառայություններ և դեղերի ապահովում: Պետությունը հստակ հակամենաշնորհային կարգավորում կիրականացնի դեղերի ապահովման բնագավառում, նվազեցնելու ներկայումս դեղերի չարդարացված բարձր գները Հայաստանում: Պետությունը տնտեսական զարգացման միջոցներով կխթանի դեղագործական և հարակից արտադրությունների զարգացումը Հայաստանում, զուգահեռ խստացնելով վերահսկողությունը կեղծված դեղերի տարածման նկատմամբ: Պետությունը կխրախուսի նաև մասնավոր վճարովի ծառայությունների զարգացումը Հայաստանում, մասնավորապես այն ոլորտներում, որոնք ընդունակ են լրացուցիչ զբոսաշրջային եկամուտ ապահովել՝ ատամնաբուժություն, կոսմետոլոգիա, վերականգնողական բժշկության տարբեր տեսակներ,

ծերերի նկատմամբ խնամք, հետագայում կարող են ներառվել նաև այլ ծառայություններ: Պետության նպատակը պետք է լինի այս ծառայությունների բարձր որակի ապահովումը, խարդախության բացառումը, այցելուների համար բարենպաստ կեցության պայմանների ապահովումը: Պետությունը կաջակցի նաև օտարերկրացիների համար վճարովի բժշկական կրթության ընդլայնմանը Հայաստանում, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացմանը՝ առողջապահության և հարակից բնագավառներում (դեղամիջոցների, նյութերի, գործիքների, սարքավորումների արտադրություն, և այլն):

Առողջապահության քաղաքականության հիմքում պետք է դրվեն նաև այս բնագավառում ներդրումների խթանմանը ուղղված հստակ երաշխիքներ, և արդար մրցակցության պահպանման հիմնադրույթներ, ելնելով այն սկզբունքից, որ որակյալ և մատչելի առողջությունը օգուտներ է բերում հասարակությանը և կենսական նշանակություն ունի տնտեսական և սոցիալական զարգացման համար: Հեռանկարում, Հայաստանը պետք է դառնա առողջապահական ծառայությունների բարձրորակ կենտրոն տարածաշրջանում, ապահովի ինչպես սեփական քաղաքացիների կյանքի բարձր որակը, այնպես էլ դառնա իր գերակա ուղղություններում ծառայությունների բարձրակարգ մատակարար:

Ժողովրդագրական և միգրացիոն քաղաքականություն

Մեր պետության ապագայի համար խիստ անհրաժեշտ է վարել նախաձեռնող ժողովրդագրական և միգրացիոն քաղաքականություն, ինչը պետք է դիտարկել նաև Հայաստանի ազգային անվտանգության ապահովման, տնտեսական աճի խթանման և ներքին շուկայի ընդլայնման հնարավորությունների, արտասահմանցի ներդրողների համար գրավչության ավելացման, հայկական աշխարհի՝ որպես համախմբող ու ամրապնդող կենտրոնի կայացման, ինչպես նաև Սփյուռքում ուծացման գործընթացները նվազեցնելու տեսանկյունից: Դժբախտաբար, անկախության վերականգնումից հետո մինչև վերջերս իշխանությունը երկրից արտագաղթը դիտարկել է որպես քաղաքական և սոցիալական ռիսկերը նվազեցնելու, տրանսֆերտների հոսքի և տնտեսական գերիշխանության ապահովման հնարավորություն: Բացարձակ կերպով բացակայել է ներգաղթի (ներառյալ հայրենադարձության) քաղաքականությունը, իսկ ժողովրդագրական աճին միտված առկա գործիքակազմը եղել է անարդյունավետ և ոչ բավարար՝ հիմնականում սահմանափակվելով երկրորդ և հաջորդ երեխաների ծնվելու պարագայում ֆինանսական մեկանգամյա օգնության տրամադրմամբ, որը չի հանգեցրել իրական ժողովրդագրական արդյունքի: Դրա փոխարեն, մեր ռազմավարական երկարաժամկետ տեսլականն է հայ ազգաբնակչության ավելի քան կեսի մշտական բնակության հաստատումն ազգային պետության տարածքում, ինչը բխում է Հայաստանի անվտանգության և կայուն զարգացման, հայության գլոբալ կենսունակության շահերից, երկրում բնական աճի կայուն դրական տեմպերի պահպանումը երկարաժամկետ հեռանկարում:

Այս համատեքստում, մեր հանձնառությունն է ռազմավարական հետևյալ երկարաժամկետ հինգ նպատակի հասնելը առաջիկա երկու տասնամյակի ընթացքում.

- Առնվազն 10% մշտական ընդհանուր բնակչության աճ ազգային պետության տարածքում
- Երկրի բնակչության բնական աճի միջին տեմպի պահպանում (տարեկան 0,5%-ից բարձր)
- Տարեկան ավելի քան 20 000 գերազանցապես հայազգի անձանց ներգաղթ դեպի Հայաստան
- Երևանի և մարզերի միջև ժողովրդագրական և սոցիալական տարբերությունների մեղմում՝ արտագաղթը կասեցնելու նպատակով

- Արցախի բնակչության թվաքանակի կրկնապատկում, գերազանցապես ազատագրված տարածքների բնակեցմանն ուղղված ակտիվ քաղաքականության միջոցով

Ժողովրդագրական քաղաքականության իրականացման նպատակով, կիրառվելու են հետևյալ հիմնական մեխանիզմները.

Բնակչության կայուն բնական աճի ապահովում, ինչը ենթադրում է մի շարք միջոցների կիրառում՝ ուղղված ծնելիության մակարդակի բարձրացմանը, մասնավորապես.

- Երկու և ավելի երեխա ունեցող ընտանիքների աջակցության երկարաժամկետ ծրագրի միջոցով բարձրացնել ծնելիության միջին գործակիցը ներկայիս 1,6-ից ընդհուպ մինչև 2,5 երեխայի, ներդնել բազմազավակ ընտանիքների հարկային պարտավորությունների նվազեցման և նյութական աջակցության, երիտասարդ և բազմազավակ ընտանիքների բնակարանների ձեռք բերման սուբսիդավորման, կանանց վերարտադրողական առողջության բարելավվման, նախադպրոցական կրթության համակարգի համատարած մատչելիության և այլ ծրագրեր, որոնք պետք է միասին խթան հանդիսանան ծնելիության բարձրացման համար:
- Ապահովել աշխատող մայրերի համար բավարար աջակցություն և պաշտպանվածություն թե պետության, և թե գործատուի կողմից՝ երեխա ունենալու և դաստիարակելու համար: Սա մասնավորապես ենթադրում է՝ աշխատող մայրերի երկարաժամկետ ֆինանսական աջակցության ծրագիր, պետական մսուրների և մանկապարտեզների ծառայությունների համատարած հասանելիություն, ճկուն աշխատանքային ռեժիմի կիրառում պետական և մասնավոր գործատուների կողմից, ծնողներից յուրաքանչյուրին երեխայի խնամքի նպատակային արձակուրդի տրամադրում, աշխատող մայրերի երեխաների խնամքի համաֆինանսավորում պետության կողմից, կանանց վերապատրաստման ծրագրերի առկայություն:

Կյանքի միջին տևողության շարունակական բարձրացում՝ առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացման, բժշկական հետազոտման և հիվանդությունների կանխարգելման միջոցների գործնական կիրառման, սպորտի ու առողջ կենսակերպի, առողջ սննդակարգի ժողովրդականացման միջոցով: Հատկապես կարևոր է զբաղվածության, մասնագիտական վերապատրաստման, փորձի փոխանակման և թոշակառու անձանց աջակցության հատուկ ծրագրերի մշակումը, որոնք կնպաստեն նրանց աշխատանքային գործունեության արդյունարար տևողության ավելացմանը:

Հայրենադարձության ակտիվ խթանում, դրա շրջանակներում «Հայրենադարձության մասին» օրենքի մշակում և ընդունում, պետության կողմից ինտեգրացիոն աջակցության փաթեթի հստակեցում, հայրենադարձության հատուկ ծրագրեր Հայաստանի սահմանամերձ գոտիներում և ազատագրված տարածքներում բնակություն հաստատել ցանկացողների, կենսաթոշակային տարիքի սփյուռքահայերի համար՝ թիրախ ունենալով ապահովել տարեկան մոտ 20 000 հայրենադարձների հոսք Հայաստան:

Սելեկտիվ միգրացիոն քաղաքականություն, որի շրջանակներում պետք է համակարգվի մինչ այժմ թերի կարգավորվող ներգաղթը, ներառելով հետևյալ տարրերը.

- Որոշակի մասնագիտական խմբերի թիրախավորում և բարձր որակավորում ունեցող աշխատուժի ներգաղթի կազմակերպման հարցում խրախուսող քաղաքականության վարում: Կարևոր է սակայն բացառել տեղական մասնագետների հաշվին աշխատատեղերի տեղաբաշխումը ներգաղթյալներին, և իրականացնել սա միայն այն ոլորտներում, որում առկա է մասնագիտացված աշխատուժի ընդգծված պակաս:
- Ներգաղթի քվոտաների տրամադրում այն էթնիկ խմբերին, որոնք ունեն հայկական միջավայրում ինտեգրման ցանկություն, իսկ նրանց մշակութային նկարագիրը համահունչ է մեր հասարակությանը: Մասնավորապես, դա վերաբերվում է արտասահմանում բնակվող, ոչ հայկական էթնիկ ծագմամբ, սակայն բարեկամաբար

տրամադրված Հայաստանի նախկին քաղաքացիներին և նրանց սերունդներին, ինչպես նաև մեր տարածաշրջանի քրիստոնեական համայնքներին:

- Դեպի Հայաստան գործարար ներգաղթի խթանում, որը դյուրին կդարձնի կացության թույլտվություն ստանալու գործընթացը բարեկամական երկրներից այն անձանց համար, ովքեր կտիրապետեն բավարար կապիտալի՝ Հայաստանում ներդրում կատարելու և նոր բիզնես հնարավորություններ ստեղծելու համար:

Հայաստանի մարզերում կյանքի որակի բարձրացում: Հայաստանից արտագաղթի հիմնական պատճառը մարզերում, մասնավորապես, փոքր քաղաքային և գյուղական բնակավայրերում տնտեսական հնարավորությունների սակավություն է և կյանքի ընդհանուր ցածր որակը, սա բերում է այդ բնակավայրերից մշտական արտահոսքի, թե դեպի Երևան, և թե երկրից դուրս: Թեև արտագաղթը և ուրբանիզացիան ընդհանրապես կասեցնելը իրատեսական չի, մեր նպատակն է լինելու, երեւույթի մասշտաբների 3-4 անգամ կրճատումը ներկայիս համեմատ: Միգրացիոն հոսքերի մեծ մասը պետք է լինի երկրի ներսում: Այս նպատակով, կարևորագույն գործոնը յուրաքանչյուր մարզում առնվազն մեկ խոշոր քաղաքային բնակավայրի առաջանցիկ զարգացումն է, որը պետք է կարողանա իր վրա կենտրոնացնել այդ հոսքերը, համանման պրակտիկա առկա է եղել Խորհրդային տարիներին: Այս նպատակով, պետությունը կսահմանի թիրախային բնակավայրերը, ելնելով նրանց առկա տնտեսական պոտենցիալից, և նրանց վրա կկենտրոնացնի հետագայում զարգացմանն ուղղված սահմանափակ ռեսուրսները:

Արցախի վերաբնակեցում: Բնակչության կրկնապատկումը Արցախում կենսական անհրաժեշտություն է, առաջին հերթին ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: Հաշվի առնելով Արցախի շրջանների բնակեցվածության ներկայիս ցածր մակարդակը և առկա պոտենցիալը, անհրաժեշտ է լինելու թիրախավորել.

- Սփյուռքի գյուղատնտեսական համայնքների ներկայացուցիչներին (Սիրիա, Իրաք, Լիբանան, Ռուսաստան, Վրաստան), ինչպես նաև արտասահմանում բնակվող ծագումով արցախցիներին (Ռուսաստան, Ուկրաինա, Միջին Ասիա):
- Հայաստանի այն գյուղատնտեսական համայնքների ներկայացուցիչներին, ովքեր ունեն սահմանափակ հողային ռեսուրսներ և հարկադրված են արտագաղթել:
- Տարբեր երկրներից հայրենադարձած պրոֆեսիոնալ և նորարարական գաղափարակիրներին՝ ուղղորդելով դեպի Արցախի քաղաքային բնակավայրեր:

Արցախի վերաբնակեցումն իրականացվելու է հետևյալ մոտեցումների հիման վրա.

- Ավելի քան 2 000 բնակիչ ունեցող հանգույց-բնակավայրերի ձևավորում իրարից բավարար հեռավորության վրա: Այսպիսի խոշոր բնակավայրերի ստեղծումը կօգնի ապահովել բնակչությանը տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և բժշկական անհրաժեշտ ենթակառուցվածքներով:
- Հողային և այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդրի լուծում, հիմնական տնտեսական ենթակառուցվածքների ստեղծման և առկա ռեսուրսները արդյունավետ սեփականատերերի կամ վարձակալների տրամադրելու միջոցով: Որոշակի մշակաբույսերի շուրջ մասնագիտացում, բերքատվության և արտադրողականության, ինչպես նաև արտադրանքի իրացման համակարգի արդյունավետության բարձրացում:
- Ջանգվածային բնակարանաշինության և ծնելիության խթանման ծրագրեր:
- Զբաղվածության հավելյալ ծրագրեր (պայմանագրային ծառայություն բանակում, սոցիալական և կրթական ոլորտներում):
- Նոր պայմաններին հայրենադարձների ընտելացմանը նպաստող աջակցության հատուկ ծրագրերի իրականացում

Արցախի վերաբնակեցման համար մենք կարևորում ենք պետություն-մասնավոր համագործակցության գործուն մեխանիզմներիի կիրառումը, որի արդյունքում պետությունը կտրամադրի մեկնարկային նվազագույն ռեսուրսները, և կիրականացնի այլ ռեսուրսների ներգրավումը մասնավոր աղբյուրներից՝ ներառյալ բարեգործական տարբեր հիմնադրամները և մասնավոր ընկերությունները, որոնք կարող են դառնալ վերաբնակեցման փաստացի շահառուներ:

Մարդու իրավունքների պաշտպանություն

Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունը երաշխավորում է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը, սակայն թե այդ իրավունքների ընդունելի սահմանների տարատեսակ մեկնաբանությունը, և թե փաստացի իրավակիրառման պրակտիկան, ստեղծում են բազմաթիվ բարդություններ և շարունակում են հանդիսանալ հասարակության մեջ առկա հակասությունների աղբյուր: Մարդու իրավունքների ոլորտում մեր քաղաքականությունը առաջիկա տասնամյակներում պետք է հիմնված լինի հետևյալ ելակետային մոտեցումների վրա.

- մարդու իրավունքների ոլորտում հանրային և մասնավոր արժեքների խելամիտ հավասարակշռում,
- մարդու իրավունքների միջազգային հիմնարար պայմանագրերի շրջանակում ՀՀ պարտավորությունների կատարում,
- մարդու իրավունքները գործնականում ապահովող իրավակիրառման մեխանիզմների ներդրում,
- մարդու իրավունքների ոլորտում գործող հասարակական կառույցներում ազգային տարրի ուժեղացում,

Այս մոտեցումների համակարգված կիրառումը հնարավորություն կտա որակական նոր մակարդակի բարձրացնել մարդու իրավունքների պաշտպանությունը երկրում, միաժամանակ մեղմելով ներկայումս առկա հակասությունները:

Մարդու իրավունքների ոլորտում հանրային և մասնավոր արժեքների հավասարակշռում: Տասնամյակներ ի վեր հայաստանյան հանրային կյանքում նկատվում է միտում՝ հակադրել մարդու հիմնարար իրավունքները ավանդական ազգային արժեքներին և հանրային շահին: Մինչդեռ այդ մոտեցումը ոչ միայն արդյունավետ չէ, այլև չի համապատասխանում հայ ժողովրդի ստեղծած հոգևոր-մշակութային արժեքներին, հայ ժողովրդի և հայ մշակույթի պատմության տրամաբանությանը: Մենք ելնում ենք այն համոզմունքից, որ հայ հանրությանն ընդհանուր առմամբ բնորոշ է հարգանքը մարդու արժանապատվության և մարդու հիմնարար իրավունքների նկատմամբ՝ պայմանով, որ անհատի իրավունքները ողջամտորեն հավասարակշռվեն Հայաստանի Հանրապետության ժողովրդի հավաքական կենսական շահերի հետ, և հակասության մեջ չմտնեն մեր հոգևոր-մշակութային դիմագծի հետ: Մասնավորապես, դեռևս ապրելով մշտական հակամարտության պայմաններում, և ենթակա լինելով հիբրիդ պատերազմի տարատեսակ միջոցների շարունակական ազդեցությանը, մենք կարևորում ենք հասարակության մեջ ընտանիքի ամրության, սերունդների շարունակականության և համերաշխության, հայրենիքին նվիրվածության և նրա առջև պարտքի գիտակցության հիմնարար արժեքները՝ որպես Հայ հանրության ընդհանուր դիմադրողականության հիմնարար երաշխիք:

Այս համատեքստում մենք անհրաժեշտ ենք համարում ինքնուրույնաբար ձևավորել ինչպես մասնավոր և հանրային շահի հավասարակշռման մեր բանաձևը, այնպես էլ դրանով պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության մեր ազգային օրակարգը, յուրաքանչյուր դեպքում գտնելով խելամիտ և հավասարակշռված լուծումներ, որոնք թույլ կտան իրացնել անհատի ազատությունը, առանց վտանգի տակ դնելու հստակորեն

սահմանված հանրային շահը: Մարդու իրավունքների ոլորտում հանրային և մասնավոր արժեքների հավասարակշռումը ենթադրում է նաև այնպիսի կրթական քաղաքականության մշակում և իրականացում, որ մեր հասարակության համար մարդու իրավունքները չդիտվեն որպես սպառողականության դրսևորում, այլ համադրվեն Հայրենիքի, Հայկական պետականության և Հայ հասարակության հանդեպ համարժեք պարտավորությունների հետ, և ընկալվեն որպես մի օրգանական ամբողջություն:

Մարդու իրավունքների միջազգային հիմնարար պայմանագրերի շրջանակներում ՀՀ պարտավորությունների կատարում: Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի հովանու ներքո ընդունված մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք հիմնարար փաստաթղթերի, վավերացրել է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը՝ ստանձնելով պարտավորություններ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, ժողովրդավարության ամրապնդման ու պետական կառավարման մակարդակի բարձրացման վերաբերյալ: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը այս հանձնառությունների մասով ՄԱԿ-ի համապատասխան գործակալություններին մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ պարբերական զեկույցներ է ներկայացնում, որոնց հիման վրա մշակվում են առաջարկություններ Հայաստանում մարդու իրավունքների վիճակը բարելավելու նպատակով:

Վերոնշյալի համատեքստում մենք ապահովելու ենք շարունակական համագործակցությունը միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ՝ ՀՀ-ում ներդնելու մարդու իրավունքների պաշտպանության լավագույն մեխանիզմները, շարունակաբար կատարելագործելու իրավակիրառման պրակտիկան, և դրանով իսկ ապահովելու ՀՀ քաղաքացիների շահերի արդյունավետ պաշտպանություն և ամրապնդելու երկրի հեղինակությունը՝ որպես մարդու հիմնարար ազատությունների պաշտպան: Սա պետք է սակայն նույնպես հիմնված լինի մասնավոր և հանրային շահի հավասարակշռման մեր հռչակած ազգային բանաձևի պահպանման վրա, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բերի ազգային օրենսդրության համապատասխանեցման միջազգային պայմանագրերին այն չափով, որով դրանք չեն հակասում հստակ ձևակերպված հանրային շահին:

Մարդու իրավունքները գործնականում ապահովող իրավակիրառման մեխանիզմների ներդրում: Մարդու իրավունքների ոլորտում պետության պարտականությունները չեն սահմանափակվում մարդու իրավունքների ճանաչմամբ, այլ նաև ընդգրկում են պետության կողմից մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումներից ձեռնպահ մնալու և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության համար գործուն պայմաններ ստեղծելու պոզիտիվ պարտականությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դեմ կայացված որոշումների համատեքստում կարելի է արձանագրել, որ մարդու իրավունքների ոլորտում մեր պետության կարևորագույն մարտահրավերներից է մարդու իրավունքների խախտումները բացառող-նվազեցնող իրական և գործուն իրավակիրառման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը: Այդ մեխանիզմներն իրենց մեջ ներառում են թե՛ նորմատիվ-իրավական բազայի զարգացումը և հետագայում ընդունվող նորմատիվ-իրավական ակտերի պատշաճ փորձաքննությունն ապահովող կառուցակարգերի ներդնումը, թե՛ իրավակիրառ պրակտիկայում այդ նորմատիվ-իրավական ակտերը կիրառող մարմինների (այդ թվում՝ դատարանների և իրավապահ մարմինների) կողմից հնարավոր կամայականությունների բացառող միջոցառումների իրականացումը: Այս իմաստով, մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն տարրերն են վարչական թափանցիկություն ապահովող ընթացակարգերը, և մենք հետևողականորեն ներդնելու ենք դրանք պետական կառավարման համակարգում, ձգտելով մշտական կատարելագործման:

Մարդու իրավունքների ոլորտում գործող հասարակական կառույցներում ազգային տարրի ուժեղացում: Ներկայումս Հայաստանում ձևավորված իրավապաշտպան համակարգն փաստացի ամբողջությամբ ֆինանսավորվում է օտարերկրյա աղբյուրներից և բնականաբար, առնվազն՝ մասնակիորեն, սպասարկում է ֆինանսավորողների

արժեհամակարգը և դրանից բխող օրակարգը: Այս վիճակը մեր պետության և հանրության բացթողումն է, և դարձել է նաև արհեստական հակասությունների աղբյուր: Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը Հայաստանում ենթադրում է, որ հայկական պետությունը և հանրությունը ևս ստեղծում և իրագործում են մարդու իրավունքները պաշտպանող հասարակական կառույցների այլընտրանքային ազգային ֆինանսավորման բանաձև: Պետության մակարդակով լուծումը կարող է գտնվել հարկային իրավունքի ոլորտում՝ օրինակ, պետության կողմից համապատասխան հասարակական կազմակերպություններին մրցակցային հիմքով և հանրության ընտրությամբ ֆինանսական գրանտներ տրամադրելու միջոցով, և կամ եկամտահարկից համապատասխան արտոնությունների տրամադրմամբ՝ միջոցները անհատների կողմից այդպիս կազմակերպություններին հատկացնելու դեպքում: Մենք հետևողական են լինելու՝ ստեղծելու և իրագործելու այդպիսի պրակտիկ մեխանիզմներ:

Շրջակա միջավայրի պահպանություն

Անկախությանը հաջորդած շրջանում, Հայաստանի բնական միջավայրը մեծ կորուստներ է կրել: Ապօրինի անտառահատումները, անխնա հանքարդյունաբերական գործունեությունը, Սևանա լճի էկոհամակարգի կառավարման թերությունները, ջրային ռեսուրսների ցածրորակ կառավարումը, քաղաքային և գյուղական միջավայրի աղտոտումը տարաբնույթ թափոններով արդեն հիմա հանգեցրել են ծայրաստիճան բարդ, համարյա անլուծելի բնապահպանական խնդիրների և բազմաթիվ դեպքերում արդեն անշրջելի վնաս են հասցրել Հայաստանի շրջակա միջավայրին: Սա արդյունք է նրա, որ բնապահպանության գործառույթը, որը իր մեջ ներառում է պետության սեփականություն հանդիսացող բնական ռեսուրսների պահպանումը և ռացիոնալ օգտագործումը, ինչպես նաև հյուծումից և դեգրադացիայից պահպանումը, ստորադասվել է կարճաժամկետ տնտեսական շահին, իսկ հաճախ էլ նաև՝ սոցիալական և քաղաքական նպատակահարմարությանը, երբ աղքատության մեջ գտնվող բնակչության շերտերը իրենց տարբեր սոցիալական խնդիրները լուծել են բնության հաշվին՝ հաճախ անշրջելի վնաս պատճառելով, իսկ պետությունը դրան վերաբերվել է թողտվությամբ, խուսափելու լրացուցիչ սոցիալական լարվածությունից:

Ներկայումս, երբ Հայաստանի տնտեսական հնարավորությունները աստիճանաբար ընդարձակվում են, շրջակա միջավայրի պահպանությունը և առողջացումը լրացուցիչ կարևորություն է ստանում, քանզի միայն նրա պատշաճ որակի պայմաններում է հնարավոր հասցեագրել երկրի առջև ծառացած առողջապահական, սոցիալական և տնտեսական զարգացման արդի մարտահրավերները: Պետությունը, որպես բնապահպանական գործառույթի հիմնական կրողը, պետք է իրականացնի գիտականորեն հիմնավորված և հավասարակշռված բնապահպանական և տնտեսական քաղաքականություն, ապահովելով միաժամանակ կենսագործունեության համար բարենպաստ բնական միջավայր և տնտեսվարողների իրավունքների խելամիտ պաշտպանություն: Պետությունը նաև պետք է վերակառուցի սեփական բնապահպանական գործառությունները՝ բարձրացնելու նրանց արդյունավետությունը, նվազեցնելու կոռուպցիան, և ներգրավելու մասնավոր հատվածի օպերատորներ այն ոլորտներում, որտեղ նրանք ունեն մրցակցային առավելություններ:

Շրջակա միջավայրի պահպանության մեջ պետության դերը պետք է հիմնվի աշխարհի լավագույն փորձի և հանրային բաց քննարկումների վրա: Պետության կողմից պետք է համընդհանուր խթանվի շրջակա միջավայրի պահպանման և կայուն զարգացման գաղափարախոսությունը, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գտնվի խելամիտ բալանս տնտեսական գործունեության և բնական միջավայրի պահպանության միջև: Սա, մասնավորապես, ենթադրում է, որ խնդրո առարկա բնական ռեսուրսների իրական արժեքը և դրանց շահառու համայնքների շահերը համարժեք գնահատվում են ցանկացած տնտեսական գործունեության համատեքստում, և տնտեսավարողները կամ լիարժեք հատուցում են այդ արժեքը, կամ էլ պարտավորվում են վերականգնել սեփական

գործունեության արդյունքում տուժած բնական միջավայրը: Բնապահպանական կոնկրետ խնդիրների լուծման տեսակետից, մենք կարևորում ենք նաև հետևյալ մոտեցումները:

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնում: Սևանա լճի էկոհամակարգի վերականգման տեսակետից, անհրաժեշտ է հետևողականորեն բարձրացնել լճի մակարդակը մինչև նախատեսված 1905 մետր նիշը, միաժամանակ վերակառուցելով լճի շուրջը գտնվող ենթակառուցվածքները, և մաքրելով ափամերձ շերտը մարդու գործունեության արդյունքում առաջացած կառույցներից և բուսածածկույթից: Զուգահեռ, լճի շուրջը պետք է պետության և համայքնային միջոցներով արդիականացվեն կոյուղու և կոշտ թափոնների վերամշակման ենթակառուցվածքները, նվազագույնի հասցվի դրանց արտանետումները լճի մեջ: Այս համատեքստում, կարևորվում է նաև Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարների լիարժեք վերակագնումը, և որակյալ շահագործումը:

Ջրային ռեսուրսների կառավարում: Հայաստանի ջրային ռեսուրսների գերակշիռ մասը հոսում է հարևան երկրներ, թեև կարող էր օգտագործվել երկրում տնտեսական և բնապահպանական խնդիրների լուծման համար: Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով պետությունը պետք է շարունակի կառուցել նոր ջրամբարներ, ներառյալ մասնավոր հատվածի մասնակցությամբ: Պետականին զուգահեռ, պետք է ստեղծվի ոռոգման ջրի կոմերցիոն շուկա, որը խրախուսում է մասնավոր հատվածի կողմից ջրի ամբարումը և օգտագործումը, ջրի կառավարման պետական համակարգը պետք է արդիականացվի, ջրի օգտագործման և կորուստների թափանցիկ պատկեր ստեղծելու, կորուստները հետևողականորեն նվազեցնելու նպատակով, ջրոգտագործման ներկայիս համակարգը պետք է վերակառուցվի կամավորության հիմունքներով՝ բարձրացնելով մրցակցությունը և թափանցիկությունը:

Անտառների վերականգնում: Անտառները բնական կարողություն ունեն վերակագնվելու ժամանակի ընթացքում, եթե դրանց հատումները իրականացվեն խելամիտ, սանիտարական եղանակներով: Այս նպատակով սակայն, պետք է զուգորդել հատումների նկատմամբ վերահսկողության խստացումը տնտեսական մեխանիզմների հետ, որոնք հնարավորություն են տալիս օգտագործել անտառը որպես տուրիստական ռեսուրս, և լրացուցիչ եկամուտներ ապահովել տվյալ համայնքին, ինչպես նաև ստեղծել գրավիչ աշխատատեղեր հարակից ոլորտներում, ինչի արդյունքում համայքնի բնակիչների համար այլևս տնտեսապես անիմաստ է դառնում անտառների անխնա հատումը: Զուգահեռ, պետության կողմից պետք է իրականացվի վնասված տարածքներում որակյալ և արագ աճող ծառատեսակների տունկ, ծածկույթը վերականգնելու նպատակով: Որպես թիրախ, պետք է վերցվի երկրի համախառն անտառային տարածքի ավելացում յուրաքանչյուր տարի 2-3%-ով:

Հանքարդյունաբերության վնասների նվազեցում: Հանքարդյունաբերության ոլորտում պետք սահմանվեն շահագործման բնապահպանական նորմերի արդիական, խիստ չափանիշներ, յուրաքանչյուր մասնավոր դեպքի վերաբերյալ իրականացվեն բնական միջավայրի ազդեցության համակողմանի ուսումնասիրություններ, բաց հանրային քննարկումներ բոլոր հնարավոր շահառուների մասնակցությամբ: Հանքարդյունաբերական լիցենզիաները պետք է տրվեն միայն այն դեպքերում, երբ բնական միջավայրի վրա բացասական ազդեցությունը շահագործման ընթացքում չի գերազանցում թույլատրված սահմանային արժեքները, շահագործման արդյունքում տուժած բնական միջավայրը ենթակա է հետագա ռեկուլտիվացիայի՝ միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան, և երբ պետության և ազդակիր համայնքների տնտեսական շահերը կամ չեն տուժում ընդհարապես, կամ էլ հանքարդյունաբերողը պատրաստ է տրամադրել դրանց համարժեք փոխհատուցում:

Քաղաքային միջավայրի առողջացում: Պետությունը պետք է խթանի պլաստիկ նյութերի սպառման նվազեցումը, և խրախուսի կրկնակի օգտագործման և բիոդեգրադացվող նյութերի կիրառումը սպառման մեջ: Պետությունը նաև կաջակցի համայնքերին՝ ներդնել խմելու ջրի, կեղտաջրերի, աղբի հեռացման արդյունավետ և ռացիոնալ համակարգեր, մասնավորապես կստեղծվեն ժամանակակից ընկերություններ, որոնք կկառավարեն աղբահանության և հեռացման վերամշակման գործընթացը երկրի տարածքում: Կխստացվեն ավտոմեքենաների

վառելիքի նկատմամբ պահանջները, Հայաստանում կկիրառվի վառելիքի Եվրո-5 ստանդարտը: Պետությունը նաև ներդրումներ կկատարի՝ զարգացնելու Երևանի մետրոպոլիտենի ցանցը, կկառուցվի քաղաքի արևելյան և արևմտյան շրջանները կենտրոնին կապող նոր գիծ:

Էներգախնայողություն: Պետությունը համատարած կխրախուսի էներգախնայող տեխնոլոգիաների ներդրումը տնտեսության մեջ և կենցաղում, ակտիվորեն կաջակցի էլեկտրական մեքենաների տարածմանը Հայաստանում, մասնավորապես, պետական աջակցությամբ կստեղծվեն լիցքավորման կայանների սկզբնական ենթակառուցվածքները: Պետությունը նաև խստորեն կհետևի ջերմոցային գազերի արտանետումներին, կխրախուսի մասնավոր տնտեսավարողներին ներդնել տեխնոլոգիաներ, որոնք բերում են դրանց տնտեսապես արդարացված կրճատմանը:

Տարերային աղետների կանխարգելում: Հայաստանի Հանրապետության տարածքը ենթակա է տարերային մի շարք աղետների՝ երկրաշարժ, սողանքներ, սելավներ ու հեղեղումներ, երաշտ և հրդեհներ, կարկուտ և ցրտահարություն, որոնցից երկրաշարժը հասցնում է ամենամեծ վնասը: Թեև Հայաստանը միացել է աղետների ռիսկի նվազեցման բազմաթիվ միջազգային փաստաթղթերի, և ընդունվել են մի շարք օրենքներ և Ազգային ռազմավարություն, վիճակը դեռ հեռու է բավարար լինելուց: Մենք հետամուտ ենք լինելու, որպեսզի Պետությունը որակապես նոր մակարդակի բարձրացնի հիմնական տարերային աղետների ռիսկերի նվազեցումը՝ ներառյալ սեյսմակայուն ստանդարտների խստացում, սելավատարերի նորոգում և մաքրում, հակակարկտային միջոցառումներ, սողանքավտանգ գոտիներում գյուղատնտեսական գործունեության արգելում, և այլն: Մենք նաև գործելու ենք մասնավոր-պետական համագործակցությունը ընդլայնելու ուղղությամբ, հաշվի առնելով մասնավոր հատվածի շահագրգռվածությունը:

Հեռանկարում, Հայաստանը պետք է հետևողականորեն վերականգնի իր բնական միջավայրը, դարձնելով այն երկրի ընդհանուր գրավչության առանցքային բաղադրիչ: Որակյալ բնական և քաղաքային միջավայրը հնարավորություն կտա կրճատել արտագաղթը, խրախուսել ներգաղթը, զարգացնել բարձրարժեք զբոսաշրջությունը, նվազեցնել սոցիալական լարվածությունը: Այս նպատակով, պետությունը պետք է նաև ընդլայնի շրջակա միջավայրի պահպանությանը հատկացվող ծախսերը, դրանք պետք է կազմեն ՀՆԱ առնվազն 0,5%, իսկ ջրային տնտեսության հետ միասին՝ առնվազն 1%՝ հնարավորություն տալով որակապես ընդլայնելու պետական բնապահպանական համակարգի կարողությունները:

Ֆիզկուլտուրա և սպորտ

Ֆիզիկական կուլտուրան և սպորտը հայ ժողովրդի կյանքի և մշակույթի անբաժանելի մասն են: Դրանք կարևոր են մարդու հոգևոր և ֆիզիկական բազմակողմանի զարգացման, առողջ ապրելակերպի ձևավորման, ակտիվ հանգստի կազմակերպման և Հայաստանում առողջ հասարակության ձևավորման համար, և հանդիսանում են կյանքի ընդհանուր որակի կարևոր բաղադրիչ:

1990-ական թվականներից սկսած, թեև Հայաստանում սպորտը և ֆիզկուլտուրան որոշակի առաջընթաց են ապրել, սակայն այն եղել է անհամաչափ, և զուգորդվել նաև հետընթացի հետ: Մայրաքաղաքում ընդլայնվել են սպորտային ենթակառուցվածքները, և ստեղծվել են մի շարք առաջնակարգ մասնավոր սպորտային կենտրոններ, զարգանում են մասսայական սպորտային ակումբները: Սակայն մարզերի մեծ մասում կտրուկ նվազել է սպորտով զբաղվողների թիվը, մարզական ենթակառուցվածքները մասամբ քայքայվել են, իսկ Երևանում էլ նվազել են բակային խաղահրապարակները՝ ավտոտնակների և այլ օբյեկտների կառուցման պատճառով: Հայկական սպորտի հետագա զարգացմանը շարունակում է խանգարել ֆիզկուլտուրայի և սպորտի անբավարար պետական ֆինանսավորումը, և դրանով պայմանավորված մարզական ենթակառուցվածքների անհամաչափ տարածքային բաշխվածությունը, մարզադպրոցներից մարզիչների արտահոսքը, առկա ենթակառուցվածքների մաշվածությունը, և պրոֆեսիոնալ սպորտում առկա պոտենցիալի ոչ լիարժեք օգտագործումը: Դրան գումարվում է նաև մասսայական սպորտի ընդհանուր թերզարգացվածությունը, պայմանավորված մրցակցային մշակույթի անբավարար

սերմանման, և հասարակական գիտակցության մեջ դրա կարևորության թերագնահատման և տարբեր կարծրատիպերի հետ:

Սպորտի հետագա զարգացումը պետք է դիտարկել ընդհանուր հասարակական, մասնավորապես երիտասարդության զարգացման համատեքստում, նրա զարգացման տեսլականը պետք է ներառի հետևյալ ուղղությունները.

Սպորտի մասսայականացում: Սպորտը և առողջ ապրելակերպը պետք է դառնան հանրային կենսակերպը բնորոշող առանցքային բաղկացուցիչներ: Այդ նպատակով պետք է պետական քաղաքականությամբ լայնորեն խրախուսվի առողջ ապրելակերպը, պետական և մասնավոր միջոցներով աջակցություն ցուցաբերվի մասսայական սպորտի զարգացմանը և մարզախաղերում քաղաքացիների ներգրավվման ծրագրերին: Մասնավորապես, դա նախատեսում է.

- Մասսայական սպորտի համար նախատեսված հիմնական ենթակառուցվածքի արդիականացում և ընդլայնում, մարզադպրոցներին հատկացվող պետական ֆինանսավորման ընդլայնում,
- Հանրակրթական դպրոցների մարզական ենթակառուցվածքի արդիականացում, ֆիզիկական կուլտուրայի դասաժամերի ավելացում, ֆիզիկական կուլտուրայի դասավանդման մեթոդների արդիականացում,
- Բնակչության լայն ներգրավմամբ համընդհանուր համայնքային, մարզային և համապետական միջոցառումների կազմակերպում պետական և ներգրավվող մասնավոր միջոցներով, դպրոցական և ուսանողական ամենամյա մրցաշարերի կազմակերպում առավել մասսայական սպորտաձևերում,
- Մասսայական սպորտի ընդարձակ քարոզչություն՝ ներառյալ հեռուստահաղորդումներ, քննարկումներ, լրատվամիջոցներով ու սոցցանցերով քարոզչական տեղեկատվություն, գովազդ, դասեր և այլն,
- Հանրային ժամանցային վայրերի (զբոսայգիներ, հրապարակներ, բակեր) կահավորում մարզասարքերով, քաղաքներում վազքուղիների և հեծանվային ուղիների ընդլայնում, մարզադաշտերի, մարզադահլիճների ու լողավազանների հանրային օգտագործման հասանելիության հնարավորությունների ընդլայնում,
- Հնարավորության սահմաններում նախկին զբոսայգիների և խաղահրապարակների վերականգնում:

Սոցիալական և բարոյական ազդեցություն: Սպորտը պետք է նպատակ ունենա լուծելու սոցիալ-տնտեսական, բարոյական ու առողջապահական հիմնախնդիրներ, ինչպիսիք են հասարակության համախմբումը, երեխաների ու երիտասարդների շրջանում բարոյա-կամային բարձր որակների զարգացումը, թիմային աշխատանքի կարևորության սերմանումը, պատվախնդրության և արդարության գիտակցումը, բարոյական, հոգեկան և ֆիզիկական տոկունությունը, երիտասարդությանը վնասակար սովորություններից զերծ պահելը, կյանքի տևողության երկարացումը և նրա որակական մակարդակի բարձրացումը: Այս նպատակով, նախատեսվում է.

- Հայ մարզիկին վայել վարքագծային նորմերի մշակում և դաստիարակման գործընթացում դրանց հետևողական կիրարկում, հակադոպինգային խիստ վերահսկողության իրականացում,
- Հմտությունների կատարելագործման և փորձի փոխանակման այցերի, համատեղ մարզումների և համահայկական մարզական մրցույթների կազմակերպում՝ համազգային համախմբման նպատակով,

- Ֆիզկուլտուրայի և առողջ ապրելակերպի քարոզչություն՝ այդ թվում հեռուստատեսությամբ և սոցիալական կայքերով՝ դասերի և պարապմունքների ցուցադրում,
- Մարզիչների պատրաստման կրթական համակարգի արդիականացում

Փոխկապակցվածություն պաշտպանության հետ: Սպորտը պետք է նպատակ ունենա դաստիարակել հայրենիքի պաշտպանությանը պատրաստ առողջ սերունդ, որն օժտված է ֆիզիկական կարողություններով ու բարոյա-կամային հատկանիշներով, բարձր կարգապահությամբ ու ճշտապահությամբ, նպատակասլացությամբ, կրիտիկական իրավիճակներում արագ կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողությամբ: Հայ պատանիները, երիտասարդները և աղջիկները պետք է կարողանան ճիշտ գնահատել իրենց կարողությունները, մշտապես զարգացնեն իրենց հնարավորությունները, և պատրաստ լինեն մինչև վերջ պայքարելու հանուն իրենց նպատակի: Այս նպատակով նախատեսվում է.

- Նախնական ռազմական պատրաստության ծրագրի շրջանակում ավագ դպրոցի աշակերտների համար կարճատև ուսուցողական ճամբարների կազմակերպում՝ մոտակա զորամասերի բազայի վրա, պատանիների ու աղջիկների կրակային պատրաստության պրակտիկ ուսուցում,
- Մարզային և համապետական ռազմամարզական խաղերի և սկաուտական ճամբարների կազմակերպում,
- Կյանքի հմտությունների և առաջին օգնության գիտելիքների ուսուցում դպրոցներում

Համաշխարհային սպորտում դերի ամրապնդում: Հայկական սպորտը պետք է կարողանա որպես համաշխարհային սպորտի մեծ ընտանիքի անդամ կատարել իր արժանի ներդրումը պրոֆեսիոնալ սպորտի զարգացման մեջ: Մասսայական սպորտի զարգացմանը զուգահեռ պետք է մեծ ուշադրություն և ռեսուրսներ հատկացվեն մասնագիտացված մարզադպրոցների ցանցի (այդ թվում հաշմանդամային) ընդլայնմանը, մարզիչների վերապատրաստմանը և պրոֆեսիոնալ սպորտի զարգացմանը, որը կարևոր դերակատարություն ունի Հայաստանի համաշխարհային ներկայացվածության և երկրի ճանաչելության ապահովման գործում: Այդ նպատակով պետք է լուծել հետևյալ խնդիրները.

- Ընդունել պրոֆեսիոնալ սպորտի զարգացման պետական ծրագիր և ընդլայնել հատկացվող միջոցները՝ առկա մարզական ենթակառուցվածքները կահավորելու համար՝ պրոֆեսիոնալ մարզաձևերով զբաղվելու պայմանները բարելավելու, ինչպես նաև միջազգային մրցաշարեր հյուրընկալելու նպատակով
- Ընդլայնել ֆինանսական ներդրումները այնպիսի սպորտաձևերում, որոնք ունեն բարձրակարգ կայացած «դպրոց», որոնցում Հայաստանը ավանդաբար եղել է առաջատար դիրքերում,
- Ընդլայնել միջազգային մրցաշարերում հայ մարզիկների մասնակցությանը հատկացվող ֆինանսավորումը՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ
- Հաշմանդամային սպորտի զարգացման նպատակով նախատեսել առանձին ֆինանսական միջոցներ՝ հաշմանդամների համար մարզասրահների կահավորման, ինչպես նաև միջազգային մրցույթների կազմակերպման համար
- Գործարկել թիմային սպորտաձևերի զարգացման ծրագիր՝ նախատեսելով, մասնավորապես, բարձրակարգ մարզադաշտերի կառուցում խոշոր քաղաքներում՝ ներառյալ միջազգային մրցաշարեր հյուրընկալելու համար:

Համաշխարհային սպորտին ինտեգրվելու գործընթացին զուգահեռ Հայաստանը պետք է հետևողականորեն անցում կատարի դեպի ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման ժամանակակից տեխնոլոգիական բազայի ստեղծում, կրթական հաստատություններում

ֆիզիկական դաստիարակության արդիականացում, սպորտի կառավարման ոլորտում նորագույն նվաճումների և արդյունավետ մեթոդների կիրառում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր քաղաքական ծրագիրը նախատեսված է առաջիկա երկու տասնամյակի համար, մենք ձգտելու ենք իրականություն դարձնել այստեղ սահմանված հիմնական նպատակները: Դրանով հանդերձ, մենք գիտակցում ենք, որ քսան տարին մեծ ժամկետ է և այդ ընթացքում մեզ շրջապատող աշխարհում փոփոխությունները կարող են զարգանալ անկանխատեսելի ուղղություններով: Այդ իսկ պատճառով, մեր ծրագիրը լինելու է ճկուն և ադապտիվ, պարբերաբար թարմացվելու է՝ հասցեագրելու թե առաջացող նոր մարտահրավերները, և թե արձագանքելու բացվող նոր հնարավորություններին: Մեր առաքելությունը, ընդհանրական տեսլականը և դավանած գործունեության սկզբունքները սակայն շարունակելու են հանդիսանալ մեր քաղաքական ծրագրի կայուն հենքը: Մեր ցանկացած գործողություն ի վերջո միտված է լինելու իրականություն դարձնելու Ազգային պետության, Մրցունակ տնտեսության, և Առողջ հասարակության մեր ընդհանրական տեսլականը:

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
Ավետիք Չալաբյան
ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ
Իգոր Զարգարյան
Արա Գասպարյան
Աշոտ Ղազարյան
Վարդան Մարաշլյան
Նորայր Աղայան
Վարազդատ Հարությունյան
Կարեն Դոլինյան
Կոնստանտին Սարոյան
Արմեն Գևորգյան
Մերի Բաղալյան
Սերգեյ Արզումանյան
Հայկ Շեկյան
Արա Հակոբյան
Նունե Ամիրյան
Անդրանիկ Հովհաննիսյան
Անուշ Ալեքսանյան
Վաչե Կիրակոսյան
Վարդան Հարությունյան

Ծրագրի հեղինակները շնորհակալություն են հայտնում մեր կուսակցության բազմաթիվ անդամներին, աջակիցներին և գործընկերներին՝ ծրագրի մշակմանը ունեցած իրենց ներդրման, և բազմաթիվ արժեքավոր առաջարկությունների համար: